

Հրատարկությունն իրագործվել է  
Անհույի ժողովրդական հրատարակչատան/ՉԺՀ/  
թույլտվությամբ և աջակցությամբ:



中国民俗文化丛书——丧葬卷；董强 编著

DONG QIANG

**FUNERAL**

Translator - Astghik ATABEKYAN

Stepanakert 2017

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

# ԹԱՂՈՒՄ

Թարգմանիչ՝  
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 391/398(=581)  
ԳՄԴ 63.5(5Չ)  
Ք 530

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

**ԴՈՆԳ Քիանգ**

Ք 530 **Թաղում:** Թարգմ. անգլերենից՝ Ա. Աթաբեկյան:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 100 էջ:

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Թաղում» գրքում ներկայացված են թաղման ավանդական ծեսերը, որոնք չինական մշակույթի անբաժան մասն են: Այդպիսով՝ ձևավորվել է յուրատեսակ արարողությունների մի ամբողջական շարք, ուր արտացոլված են մարդկանց՝ մահվան հետ կապված բոլոր հավատալիքները: Գիրքը կհետաքրքրի ազգագրագետներին ու պատմաբաններին, բանահավաքներին ու հասարակագետներին, ընթերցող լայն հասարակայնությանը:

ISBN 978-9939-1-0638-0

ՀՏԴ 391/398(=581)  
ԳՄԴ 63.5(5Չ)

© Anhui People's Publishing House  
Գրքի հեղինակային իրավունքը պատկանում է  
Անհույի ժողովրդական հրատարակչատանը (ՉԺՀ)

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2017/



## ԳԼՈՒԽ ՄԵԿ ԹԱՂՄԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ԾԵՍԵՐ

*Ծեսերն ավանդական չինական մշակույթի անբաժան մասն են: Մարդիկ ծեսերի միջոցով կարգավորում են առօրյա խոսքն ու վարքուբարքը, նույնիսկ կյանքն ու մահը: Այսպիսով, ձևավորվել է յուրատեսակ արարողությունների մի ամբողջական շարք:*

*Թաղմանը նախորդող ծեսերն այն ընդհանուր գործընթացի մի մասն են, որոնցում արտացոլված են մարդկանց՝ մահվան հետ կապված բոլոր հավատալիքները, և որոնք ներառում են հանգուցյալի մարմնի նախապատրաստման և մահվան մասին հայտարարելու փուլերը:*

## ՄԱՍ ՄԵԿ

### Մահը հաստատելն ու հոգիները հետ կանչելը

#### 1. Մահվան հաստատումը անմշակ մետաքսով

Ավանդական չինական հասարակության մեջ թաղման նախապատրաստական աշխատանքները սկսվում են այն ժամանակ, երբ ընտանիքի անդամներից կամ ավագներից մեկը դեռ մահամերձ է: Նախ մաքրում են տունը ներսից ու դրսից, ապա տնից հանում են թարմացնող, կենսական ուժերը վերականգնող բոլոր առարկաները, ինչպիսիք են, օրինակ, երաժշտական գործիքները, որպեսզի ստեղծվի հարմար ու հանդիսավոր մթնոլորտ: Մահից անմիջապես հետո մարմինը ննջասենյակից տեղափոխում են նախասրահ՝ ավելի հարմար տեղ ապահովելով, և հենց այստեղ էլ փոխում են հանգուցյալի հագուստը: Եթե տղամարդը կենդանության օրոք պաշտոնական դիրք է զբաղեցրել, ապա նրան պետք է հագցնել նոր ու պայծառ հագուստ, որը կրում են դատարանում կամ արքունիքում, որպեսզի նա ինչպես հարկն է մուտք գործի հանդերձյալ աշխարհ: Այդ ընթացքում սպասող ընտանիքի անդամները պետք է պահպանեն կատարյալ լռություն, աղմուկ չբարձրացնեն և նույնիսկ լաց չլինեն, որպեսզի չխանգարեն ննջեցյալի հանգիստը ու թույլ տան, որ նա խաղաղ հեռանա աշխարհից: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ տղամարդը չպիտի մահանա՝ կնոջ ձեռքը բռնած, իսկ կինը՝ տղամարդու ձեռքը բռնած: Այլ կերպ ասած՝ երբ տղամարդն անշնչանում է, կինն ու դուստրը չպիտի բռնեն նրա ձեռքը: Իսկ եթե հանգուցյալը կին է, ապա

ամուսինն ու որդին չպիտի բռնեն նրա ձեռքը: Այլապես դա կհամարվի վատ նշան ու չարիք կբերի:

Երբ հանգուցյալն ընտանիքի անդամ է կամ ավագ սերնդի ներկայացուցիչ, խիստ կարևոր է հաստատել՝ նա մահացած է, թե՛ ոչ: Այս դեպքում կիրառվում է մի պարզ մեթոդ. մետաքսի փոքր կտոր են պահում մարդու քթի ու բերանի արանքում: Մետաքսե կտորի շարժումը կամ դրա բացակայությունն օգնում



է որոշել՝ մարդն իսկապէ՞ս մահացել է, թե՛ ոչ: Սա, այսպէս կոչված՝ մահվան հաստատումն է՝ անմշակ մետաքսե մի փոքր կտորի միջոցով: Երբ մետաքսն անշարժ է, նշանակում է՝ մարդը մահացել է, և դրան հաջորդում է մեկ այլ արարողություն, որի ժամանակ հետ են կանչում նրա հոգին:

## 2. Հոգին հետ կանչելը

Այս արարողության ժամանակ փորձ է արվում հետ կանչել հենց նոր մահացած մարդու հոգին՝ խնդրելով, որ նա շարունակի ապրել այս աշխարհում: Ըստ հնագույն մարդկանց՝ քիչ առաջ մահացած մարդու հոգին դեռ մոտակայքում է: Ուստի հավանականությունը մեծ է, որ դեռ կարելի է կանչել հոգին, վերադարձնել մարմնի մեջ ու որոշակի արարողությունների միջոցով դարձյալ կյանք պարգևել հանգուցյալին: Հենց այսպէս է առաջացել հոգին հետ կանչելու արարողությունը:

Հոգին հետ կանչելու արարողությունը մանրամասն նկարագրված է «Ծեսերի գրքում»: Երբ մարդը մահանում է, արարողությունը կատարողը պիտի բարձրանա տանիք ու ձեռքում պահած հանգուցյալի հագուստը՝ դեպի հյուսիս բացականչի՝ «Սպասում ենք, վերադարձի՛ր»: Հյուսիսային ուղղությունը հանդերձյալ աշխարհի խորհրդանիշն է: Եթե հանգուցյալը տղամարդ է, կանչում են նրա անունը, իսկ եթե կին է, նրան կոչում են ցի՝ ձևական անուն, որ տրվում է տասնհինգ տարեկանում, վարսերը հերակալով ամրացնելու արարողության ժամանակ: Երեք անգամ կրկնելուց հետո փաթաթում են շորերն ու նետում ցած՝ դեպի տուն, որտեղ սպասավորը, արկղը ձեռքին, սպասում է, որպեսզի հավաքի շորերը: Դրանից հետո ծառան մտնում է տուն, հանում շորերն ու դրանցով ծածկում հանգուցյալի մարմինը: Մարդիկ հավատացած էին, որ հանգուցյալի հագած շորերը դեռ կրում են նրա բույրը, որը կապված է թե՛ մարմնի, թե՛ շնչառության հետ: Այսպիսով, ծանոթ բույրն առնելով՝ կամ մարմնի ձևը զգալով՝ հոգին գայթակղվում է ու վերադառնում հագուստի մեջ: Արկղը փակ տարածություն է, որտեղ հոգին մնում էր հագուստի մեջ ներփակված: Այսպիսով, ըստ հին հավատալիքի՝ երբ նրանք վերադառնում էին տուն ու շորերով ծածկում մարմինը, հոգին վերադառնում էր մարմնի մեջ, և հանգուցյալը վերակենդանանում էր:

Հոգին հետ կանչելու սովորույթը գերակշռում էր Ցին և Հան դինաստիաներում և այդ ժամանակներից ի վեր սերնդեսերունդ փոխանցվել է: Նոր ժամանակներում ծեսի ձևն ու միջոցները փոխվել են. մարդիկ հոգին հետ կանչելու համար սկսել են օգտագործել երկար ու նեղ դրոշմեր: Դրոշմերը մեղմորեն ծածանվում են քամուց, և ստեղծվում է եթերային մթ-

նուիրտ: Տեսնելով սա՝ հոգին շարժվում է ծածանվող դրոշի ուղղությամբ: Ընդհանրապես երկար նեղ դրոշները մոտ տաս-տասներեք մետր բարձրության են, բազմագույն ու բազմաձև՝ կախված տարածաշրջանից և անհատի ազգային պատկանելությունից: Օրինակ, Մանջուրիայում դրոշի գույնը կախված է նրանից, թե ինչ պատկանելություն ունի հանգուցյալը և նրա ընտանիքը: Դրոշը, որը կիրառվում է նաև ավանդական օպերայում, կազմված է ատլասե փափուկ կտորներից, որոնք կենտրոնում ասեղնագործ են: Դրոշի վրա ասեղնագործված է ոսկե վիշապ, իսկ եզրերին՝ թեքված գունավոր գնդակներ: Այսպիսի դրոշները սովորաբար կոչվում են «Դուլու դրոշ»: Գոյություն ունի 3.3 մետր երկարությամբ մեկ այլ դրոշ, որի վերին հատվածը լոտոսի տերև է հիշեցնում, ներքևում մեծ, լայն ժապավեն է՝ ասեղնագործ կարմիր պիթոնով, իսկ միջին հատվածը դրվագազարդված է մետաքսաթելով: Բացի այդ, դրոշի վերևի հատվածից կտորի երկու բարակ շերտ է կախված: Դրոշի ձողը բարձրացվում ու ամրացվում է կարմիր ներկված պահարանի վրա: Բացի դրանից, գոյություն ունի այսպես կոչված «տիտղոսադրոշ», որի վրա ասեղնագործվում են հանգուցալի հուշատախտակի տվյալները: Ըստ հին ժամանակներում տարածված լեգենդի՝ հետ կանչվելուց հետո հանգուցյալի հոգին կառչում է հուշատախտակից: Կան ձողերի համար նախատեսված հանգուցյաներ, որոնք ամրացվում են դրոշի հիմքին, և դրոշը կողմերը բարձրացնում են այն թաղման թափորն առաջնորդելիս: Սովորաբար դրոշներն ամրացվում են երկրորդ դռան վրա՝ դեպի դուրս՝ ըստ «տղամարդիկ՝ ձախ, կանայք՝ աջ» սկզբունքի: Եթե հանգուցյալը տղամարդ է, դրոշն ամրացվում է ձախ կողմում, եթե կին է՝ աջ կողմում:

Զինաստանի բազմաթիվ փոքրամասնությունների շրջանում գոյություն ունեն հոգի կանչելու նմանատիպ արարողություններ, և դրանց մեծ մասը կատարվում է այն ժամանակ, երբ մարմինը դեռ մահճում է: Մյուս արարողությունները կատարվում են թաղման ընթացքում: Վերցնենք, օրինակ, Բայ ազգը, որն ապրում է Գուիջոու նահանգի Թունրեն քաղաքի Բիջյան շրջանում: Եթե ընտանիքի անդամներից մեկը մահանում է, հոգին կանչելու արարողության համար հրավիրում են Սիքսիենիի՝ քրմի, որը կատարում է սգո ծեսը: Ապա աքաղաղ են սպանում և մեկ-երկու ժամ թողնում հանգուցյալի ձեռքերի մեջ: Հետո աքաղաղը խորովում են կրակի վրա ու ու մի պնակ շոգեխաշած բրնձի հետ պարկի մեջ դնելով՝ կախում գերանից: Հենց այդ ժամանակ Սիքսիենին զոհ է մատուցում՝ ասելով. «Կե՛ր սա հանգուցյալ հորդ հետ, կե՛ր սա հանգուցյալ մորդ հետ: Տխուր ենք, որ չես կարող մեզ հետ անուշ անել: Ուզում ենք, որ հանդերձյալ աշխարհում պաշտպանես մեզ, ինչպես նաև՝ մեր բերքն ու կենդանիներին»: Այլ շրջան-

ներում, որտեղ ապրում են ուրիշ փոքրամասնություններ, օրինակ՝ Տիբեթում, Ներքին Մոնղոլիայում և Նահկիում, լամաներ են հրավիրվում: Չինաստանի հյուսիսարևելյան շրջանում փոքրամասնություններն արարողությունը կատարելու համար շամաններ են հրավիրում:

Եթե հոգին հետ կանչելուց հետո պարզ է դառնում, որ հանգուցյալն այլևս չի վերակենդանանա, կարելի է հաստատել, որ հանգուցյալն ընդմիշտ հեռացել է, և պաշտոնապես սկսել թաղման նախապատրաստական աշխատանքները:

## ՄԱՍ ԵՐԿՈՒ

### Մահվան լուրը հայտնելն ու հանգուցյալի տուն շտապելը

#### 1. Մահվան լուրը հայտնելը

Երբ մարդը մահանում է, ընտանիքի անդամները պետք է անմիջապես հայտնեն այդ մասին: Արարողությունը կոչվում է «մահվան լուրը հայտնել»:



Հին ժամանակներում մահվան լուրը հայտնում էին՝ ըստ հանգուցյալի կոչման ու դիրքի: Երբ կայսր էր մահանում, արքունիքը հատուկ պատվիրակ էր ուղարկում, որն այդ մասին տեղեկացնում էր բոլոր ֆեոդալ արքայազններին ու նրանց մարդկանց: Եթե նախարար էր հեռանում կյանքից, ընտանիքի անդամները, նախ, նրա մահ-

վան մասին զեկուցում էին կայսերն ու պալատականներին: Հասարակ ժողովրդի դեպքում հանգուցյալի ընտանիքի անդամները պետք է անմիջապես տեղեկացնեին ընկերներին ու հարազատներին, ինչպես նաև հարևաններին: Եղել են դեպքեր, երբ կայսրերի մահվան փաստը կոծկվել է. դա հիմնականում պատահել է քաղաքական խառնակ ժամանակներում:

Մահվան մասին հայտարարության մեջ նշվում է հանգուցյալի անունը, կյանքի առանցքային իրադարձությունները, ծննդյան և մահվան ժամը, մահվան անսաթիվը, ինչպես նաև հուղարկավորության անսաթիվն ու տեղը, որպեսզի ընկերներն ու հարազատները կարողանան ներկա լինել հիշատակի արարողությանը և ժամանակին սգան նրա մահը:

Ընդհանրապես մահվան լուրը հայտնում են բանավոր կամ մահախոսականի միջոցով: Բանավոր հայտարարությունն արվում է հիմնականում քաղաքացիների դեպքում: Թան և Սուն դինաստիաներում մահվան լուրը հայտնում էին նաև պայթուցիչներ կամ ճայթուկներ պայթեցնելով: Բանավոր հայտարարությունը պետք է արվի անձամբ հանգուցյալի որդու կողմից (պատասխանատու որդու)՝ հարազատներին ու մտերիմներին, այլա-

պես սա կհամարվի վարքականոցի խախտում, ինչը կհանգեցնի որոշակի խնդիրների: Հայտարարություն անելուց առաջ որդին, նախ, պետք է սգավորի հագուստ, գլխարկ ու գոտի կրի: Ընկերների ու հարազատների տներ հասնելով՝ նա չպիտի շեմից ներս մտնի, և երբ որևէ մեկը դուրս գա դիմավորելու, պիտի ողջունի ու խոնարհվի այդ մարդու առաջ՝ անկախ նրա տարիքից: Մահախոսականն ավելի հազվադեպ է կիրառվում, թերևս միայն ընկերների, մտերիմների ու նշանակալի մարդկանց դեպքում: Տարբեր վայրերում մահվան բոթը հայտնելու տարբեր ձևեր կան: Գուհուսի շրջանում մահվան լուրը հայտնելիս երեք անգամ ճաթուկ են պայթեցնում, ինչը կոչվում է «հայտարարող ճաթուկներ»: Ապա ինչ-որ մեկին ուղարկում են ընկերների ու հարազատների ետևից: Որոշ վայրերում հանգուցյալի տան դարպասին սպիտակ թղթից դրոշ է ամրացվում՝ ի նշան ընտանիքի անդամներից մեկի մահվան: Այլ տեղերում, մահվան լուրը հայտնողը հենց այնպես չի մտնում ընկերների ու հարազատների շեմից ներս: Փոխարենը սպասում է տան շեմին ու բարևում տան ներսում գտնվող մարդկանց, որոնք գոգաթիով մոխիր են վերցնում ու շաղ տալիս դարպասից դուրս: Արարողության ավարտին բոլորը կարող են տուն մտնել: Ըստ ավանդույթի՝ այս գործողությամբ քշում են չար ոգիներին: Սակայն գոյություն ունեին այլ վայրեր, որտեղ օրենքները շատ խիստ էին: Եթե հանգուցյալը տղամարդ էր, նրա մահվան լուրը հայտնում էր զարմիկը, իսկ եթե հանգուցյալը կին էր, որդին ու դուստրը տեղյակ էին պահում հանգուցյալի մայրական ընտանիքին: Նրանք սպիտակ կտոր էին փաթաթում գլխին, բամբուկից գլխարկ դնում ու ձեռքին սպիտակ սրբիչներ գցում: Արցունքն աչքերին, ծնկի իջած՝ տատիկի ընտանիքին մահվան լուրը հայտնելուց հետո անմիջապես վերադառնում էին տուն: Երբ թաղման արարողությանը մասնակցելու եկած տատիկի ընտանիքի անդամները հասնում էին գյուղ, հանգուցյալի որդին ու դուստրը ծնկի էին գալիս ճամփաբաժանի մոտ՝ գյուղի եզրին, սգում մայրիկի կորուստը և իրենց երախտագիտությունը հայտնում, որ չնայած դժվարություններին՝ հարազատները գյուղ են եկել: Ապա նրանցից յուրաքանչյուրին սպիտակ կտոր էին տալիս, որը կոչվում էր «որդիական կտոր»: Հյուսիսարևելյան տարածաշրջանում դարպասից կախում են թղթի կտորներ, ինչը սովորաբար մահվան բոթը հայտնելու ձևերից է: Թղթի կտորների քանակը կախված է հանգուցյալի տարիքից. թղթի մի կտորը մեկ տարի է, ևս երկու կտորը խորհրդանշում են երկինքն ու երկիրը: Հանգուցյալի սեռը որոշվում է նրանով, թե թղթերը որ կողմից են կախված. եթե հանգուցյալը տղամարդ է, դրանք կախում են դարպասի ձախ կողմում, իսկ եթե կին է՝ աջ կողմում: Տեսնելով դարպասից կախված թղթի կտորները՝ մարդիկ հասկանում են,

որ ընտանիքի անդամներից մեկը մահացել է, և անմիջապես իմանում են հանգուցյալի տարիքն ու սեռը: Ձյանսու և Ջենձյան տարածաշրջաններում մահվան լուրը հայտնում են նշանների միջոցով: Մարդիկ անձրևանոցով ներս են մտնում, անձրևանոցը դնում դարպասից դուրս, բռնակը՝ ցած, գագաթը՝ վեր, ինչը նշանակում է, որ ընտանիքի անդամներից մեկը մահացել է: Ապա տանտերը նրանց հրավիրում է ինչ-որ բան ուտելու և իմանում հուղարկավորության ամսաթիվը: Ի վերջո, նրանք օգտագործած ավսեները նետում են դուրս՝ չար ոգիներին ու աղետները քշելու: Եթե քաղաքից դուրս բնակվողները մի անկյունն այրված նամակ են ստանում, անմիջապես հասկանում են, որ նամակը հայտնում է ընտանիքի անդամի մահվան բոթը: Ըստ Շաոսինի ավանդույթի՝ հանգուցյալի ընտանիքը պիտի հայտարարի մահվան լուրը, նույնիսկ եթե հարազատներն ու ընկերներն արդեն գիտեն այդ մասին: Նրանք պիտի աջ ձեռքով ցած պահեն անձրևանոցը, որը մահվան նշան է: Ընկերների ու հարազատների տուն հասնելով՝ պիտի ներս մտնելուց առաջ շեմից դուրս դնեն անձրևանոցը՝ բռնակը դեպի ներքև: Ընկերներն ու հարազատները նրանց հրավիրում են ձու ուտելու. այս արարողությունը կոչվում է «ձու՝ մահվան լուրի համար», ընդ որում մատուցված ձվի քանակը պետք է լինի կենտ, սովորաբար՝ երեք: Նրանց հեռանալուց հետո մարդը, որին հայտնում են լուրը, պետք է անմիջապես բաժակ կտորի՝ դժբախտությունից խուսափելու համար: Հատկանշական է նաև, որ եթե հանգուցյալը տեղացի չէ, նրա ընտանիքը պիտի գնա գյուղի կամ քաղաքի տաճար՝ հյուրասիրություն ու գումար նվիրաբերելու. սա նույնպես մահվան լուրը հայտնելու ձև է: Ապա պետք է հոտավետ փայտեր ու թղթադրամ այրել. արարողությունը կոչվում է «հարստություն և ջուր ուղարկել»: Ըստ ավանդույթի՝ սա ամրապնդում է հեռավոր գյուղում մահացած ընտանիքի անդամի տեղը հանդերձյալ աշխարհում:

Չինաստանի յուրաքանչյուր փոքրամասնություն մահվան լուրը հայտնելու իր առանձնահատկություններն ունի: Օրինակ, Նու ազգությունը, որն ապրում է Յունան շրջանում, մահվան լուրը հայտնում է բամբուկի եղջյուրներով: Ջունդիան և Ուեյսի տարածաշրջաններում բազմաթիվ փոքրամասնություններ մահվան բոթը հայտնում են եզան եղջյուր փչելով, իսկ այլ տարածաշրջաններում շեփոր են փչում: Յունանի հարավային հատվածում ապրող այնպիսի փոքրամասնություններ, ինչպիսիք են Ջինփոն, Լահուն, Լին և Յաոն, մահվան լուրը հայտնում են կրակոցներով:



## 2. Հանգուցյալի տուն շտապելը

Իմանալով կայսեր, նախարարների կամ նրանց հարազատների մահվան լուրը՝ ժողովուրդը պետք է շտապի հանգուցյալի տուն: Այս արարողությունը կոչվում է «հանգուցյալի տուն շտապել»: Հին ժամանակներում, եթե կայսր էր մահանում, նրա ֆեոդալ արքաները շտապում էին մայրաքաղաք՝ թաղմանը ներկա լինելու, իսկ տեղի պաշտոնյաները հասարակ մարդկանց առաջնորդում էին մայրաքաղաք՝ ամբողջ երկրում սգո մթնոլորտ ստեղծելու համար: Եթե նախարար էր մահանում, կայսրը կամ անձամբ գնում էր նախարարի տուն կամ պատվիրակ էր ուղարկում՝ ցավակցությունները հայտնելու և թաղման արարողությունների նպատակով օգնություն տրամադրելու համար:

Ծեսերով կառավարվող Հին Չինաստանում հանգուցյալի տուն շտապելն ուղեկցվում էր խիստ կանոններով: Եթե պաշտոնյայի ընտանիքի անդամ էր մահանում, պաշտոնյան պետք է անմիջապես թողներ գործն ու շտապեր տուն՝ թաղմանը նախապատրաստվելու: Եթե հանգուցյալը պաշտոնյայի հեռավոր բարեկամն էր, նա կարող էր չգնալ տուն: Եթե հանգուցյալը պաշտոնյայի ծնող էր, պաշտոնյան պարտավոր էր անմիջապես շտապել հանգուցյալի տուն, այլապես սա կդիտարկվեր որպես անբարո արարք, և պաշտոնյային կարող էին հեռացնել արքունիքից և հանրությունից:

Սակայն հանգուցյալի տուն շտապելու արարողության մեջ միանշանակ կային որոշ բացառություններ: Մասնավորապես, բացառությունները վերաբերում էին արքունիքում կարևոր պաշտոններ զբաղեցնող ավագ պաշտոնյաներին և սահմանը պաշտպանող զենքերալներին: Այս մարդիկ առանցքային դեր ու նշանակություն ունեին ողջ երկրի անվտանգության պահպանման մեջ, ուստի՝ եթե լքեին աշխատավայրը՝ թաղմանը ներկա լինելու համար, դա կարող էր ապակայունացնել երկրի ռազմա-քաղաքական իրավիճակը: Այսպիսով, նմանատիպ իրավիճակները կարգավորելու համար կիրառվում էր այսպես կոչված «մասնավոր դեպքի» օրենքը: Երբ բարձրաստիճան պաշտոնյաները կամ զենքերալները սգում էին իրենց ծնողների մահը, կայսրը պաշտոնյային հրամայում էր չվերադառնալ տուն և չմասնակցել թաղման արարողությանը: Միևնույն ժամանակ, արքունիքը պատվիրակներ էր ուղարկում, որոնց միջոցով իր կարեկցանքն ու ցավակցությունն էր հայտնում հանգուցյալի վահվան առթիվ և կարգավորում հողարկավորության հետ կապված բոլոր հարցերը հանգուցյալի որդիների անունից, որոնք մեծ պատասխանատվություն էին կրում երկրի կարևոր

հարցերի համար: Ֆեոդալական հասարակության մեջ, որպես բարոյական չափանիշ՝ ընդգծվում էր ոչ թե ընտանեկան, այլ պետական շահը, ավելին, կայսերահպատակությունը գերազանցում էր ծնողների հանդեպ որդիական բարեպաշտությունը: Հետևաբար, «մասնավոր դեպքը» դարձել էր ֆեոդալական ժամանակների կարևոր օրենք:

Հնագույն ժամանակների սգո ծեսերը ներառում էին մահը լուրը հայտնելու, հանգուցյալի տուն շտապելու և ցավակցությունը հայտնելու բազմաթիվ կանոններ, մասնավորապես հասարակ քաղաքացիների համար: Մոտ հարազատի մահվան լուրն իմանալով՝ պետք էր նախ սգալ, ապա հարցուփորձ անել մահվան պատճառների մասին: Դրանից հետո պետք էր նորից լաց լինել, ապա շտապել հանգուցյալի տուն: Անհրաժեշտ էր շուտ ճանապարհ ընկնել, առանց ուշացման, բայց ոչ գիշերը: Ծնողների մահվան դեպքում որդին պետք է անհապաղ ճանապարհ ընկնի՝ ցերեկ լինել, թե գիշեր: Ճանապարհին պետք էր խուսափել բազմամարդ քաղաքներից և շրջանցել դրանք՝ մարդկանց չանհանգստացնելու համար: Թաղման արարողության շտապող մարդիկ պետք է ամբողջ ճանապարհին սգային ու արտահայտեին իրենց վիշտը: Եթե նրանք որոշակի հանգամանքների պատճառով, օրինակ՝ հաշմանդամություն, հիվանդություն կամ աշխատանք, չէին կարող ներկա լինել թաղման արարողությանը, ապա պիտի որոշ իրեր ուղարկեին՝ ի նշան ցավակցության, և սգային հեռվում մահացած հարազատների մահը:

Երբ ընկերներն ու հարազատները գալիս են ցավակցելու, սգացող որդիները պետք է դիմավորեն նրանց՝ միաժամանակ հարվածելով իրենց կրծքավանդակին, ընդ որում՝ նրանք պիտի լինեն հերարձակ ու ոտաբոբիկ: Որդիները պետք է դրոշ պատրաստեն, որի վրա գրված է հանգուցյալի անունը, ապա փայտե հուշատախտակ տեղադրեն նախասրահում և այն ծածկեն դրոշով: Որդիներն ու դուստրերը պետք է արթուն մնան դագաղի մոտ ու սգան համապատասխանաբար՝ ըստ տարիքի ու կոչման: Որդիները պետք է հենվեն այսպես կոչված «սգո փայտերին»: Ցավակցելու արարողությունը բազմաթիվ տաբուներ է սահմանում հարազատների ու ընկերների համար: Սովորաբար նրանք հուղարկավորությունից բացի ուրիշ ոչնչի մասին չեն խոսում: Ընտանիքի անդամներին արգելված է լվանալ դեմքը, իսկ կանայք չպետք է շպարվեն: Միսն ու գինին արգելված են, իսկ բուսական սննդակարգը կիրառվում է հանգուցյալի մահվան կապակցությամբ սուգն արտահայտելու համար:

Ընդհանրապես, թաղման շտապող ընկերներն ու հարազատները պարտավոր են իրենց հետ բերել որոշակի նյութական օգնություն՝ թաղման արարողությունը կազմակերպելու համար. սա կոչվում է «ընծայման ծես»:

Եթե ի վիճակի չեն նվեր մատուցել, կարող են աշխատանքով օգնել: Հանգուցյալի տուն շտապելու ծեսը պարունակում է որոշակի տաբուներ, որոնք ժողովրդի շրջանում նույնքան տարածված են, որքան ավանդույթները: Ընկերներն ու հարազատները չպետք է սգան, եթե հանգուցյալը մահացել է ոչ բնական մահով, օրինակ՝ սպանվել է զենքով կամ օրենքը խախտելու հետևանքով, դատապարտվել է մահվան, ջրահեղձ կամ հանկարծամահ է եղել, այլապես նրանց կյանքում աղետ կլինի: Երիտասարդ տղամարդը չպիտի սգա երիտասարդ կնոջ մահը և հակառակը: Այս օրենքի խախտումը համարվում է համակրանքի ընդգծված դրսևորում, որը կարող է ծաղրի առարկա դառնալ ուրիշների կողմից:

## ՄԱՍ ԵՐԵՔ

### Մարմնի լվացում և կերակրում

#### 1. Մարմնի լվացում

Մարմնի լվացում ասելով նկատի է առնվում հանգուցյալի դին լվանալը, որը պետք է կատարվի ըստ արարողակարգի՝ մահանալուց անմիջապես հետո: Մարմինը վերջին անգամ լվանում են՝ հանգուցյալին կոկիկ տեսքով հանդերձյալ աշխարհ ուղարկելու համար: Հարազատների կողմից մարմնի լվացումն արտահայտում է ողջերի կողմից հանգուցյալի հանդեպ որդիական նվիրվածությունը, և, ինչպես պատանելը, ունի խորհրդանշական իմաստ: Մարմնի լվացումը սովորաբար կատարվում է հատուկ մարդկանց կողմից: Հին ժամանակներում գոյություն ունեին անհատական ծառաներ՝ տղամարդ սենեկասպասավորներ, եթե հանգուցյալը տղամարդ է, և սպասուհիներ, եթե հանգուցյալը կին է: Դա արվում է զրեթե նույն կերպ, ինչպես՝ եթե հանգուցյալը ողջ լիներ: Նախ լվանում են մազերը, ապա՝ մարմինը, իսկ վերջում կտրում են եղունգներն ու սափրում մորուքը: Կտրված եղունգները չի կարելի թափել. պետք է դնել պարկի մեջ և մարմնի հետ տեղավորել դագաղի մեջ: Մազերը լվանալուց հետո ջուրը պետք է լցնել փոսի մեջ՝ դեպի արևմուտք: Երբ արարողությունն ավարտվում է, մարմինը պետք է տեղավորել մահճակալի վրա, դեմքը ծածկել մետաքսի կտորով կամ թղթով:



Մարմինը լվանալու համար նախատեսված ջուրը սովորական ջուր չէ և հաճախ միտումնավոր վերցվում է ջրհորից ու եռացվում է: Բազմաթիվ վայրերում մարմինը լվանալու համար նախատեսված ջուրը գնում են, իսկ արարողությունը հայտնի է «ջուր գնել» անվանումով: Ջուր գնելը հատուկ արարողություն է թաղման ծեսերի մեջ և որպես այդպիսին՝ առանձին ծես է: Ջուր գնելով՝ մարդիկ կարող են այս աշխարհի ջուրը վերածել հան-

դերձյալ աշխարհի ջրի: Ջուր գնելու փողը նույնպես նախատեսված է հանդերձյալ աշխարհի համար, ինչպես և հոտավետ փայտերն ու թղթադրամը, որովհետև փողի միայն այս տեսակն է արժեքավոր հանդերձյալ աշխարհում և կարող է օգտագործվել հոգիների կողմից, մինչդեռ երկրային աշխարհում այն ոչինչ է, ընդամենը թղթի կտոր: Մարմինը լվանալու համար ջուր գնելը նպատակ ունի հանգուցյալից հեռացնել չարիքն ու այն մեղքերը, որոնք նա գործել է կենդանության օրոք: Եւ, որն ավելի կարևոր է, բացատրել հանգուցյալի հոգուն, որ սա ոչ թե ողջ մարդու լոգանք է, այլ մի արարողություն, որը նրան թույլ կտա կոկիկ տեսքով հասնել հանդերձյալ աշխարհի և ընդունվել նախնիների կողմից: Հին ժամանակներում մարմինը լվանալու համար ջուր գնելու ավանդույթը տարածված էր Յանգցե գետից հարավ ընկած շրջաններում: Սգացող որդիները գնում էին գետափ, իսկ նրանց հետևող մարդը հովանոցով նրանց պաշտպանում էր արևից: Որդին մեկ սենթանոցը նետում էր գետը, ապա մի քիչ ջուր էր վերցնում ու տանում տուն՝ մարմինը լվանալու: Այս ավանդույթը գերիշխում էր Ջուան ազգության մեջ, ինչպես նաև բազմաթիվ այլ փոքրամասնությունների շրջանում:

Քաղաքացիները կատարում են նաև «լույսը բացելու» արարողությունը, որն իրականում հանգուցյալի աչքերը լվանալն է. ծեսի նպատակը հաջորդ կյանքում հանգուցյալին կուրությունից պաշտպանելն է:



Մարմնի լվացումը տարբեր է լինում տարվա տարբեր եղանակներին: Եթե մահը վրա է հասել ամռան ամենաշոգ օրը, ըստ ծեսի, պետք է մարմինը լվանալուց առաջ սառույցի կտորներ դնել կայսեր կամ բարձրաստիճան պաշտոնյայի մահճակալի տակ՝ դին փտումից պաշտպանելու համար: Հասարակ պաշտոնյաների դեպքում ջուր էին դնում, իսկ սառույցն օգտագործվում էր կայսեր թույլտվությամբ: Ջուր դինաստիայում, արքունիքում գոյություն ուներ հատուկ պաշտոն, որին նշանակված մարդը պատասխանատու էր ձմռանը սառույց բերելու համար, որը հետագայում պահվում էր քարանձավում և օգտագործվում թաղումների ժամանակ: Սառույցով լի տարաները մահճակալի տակ դասավորվում էին՝ ըստ հանգուցյալի պաշտոնի. փոքր տարա-

ներ՝ հասարակ պաշտոնյաների, մեծ տարաներ՝ բարձրաստիճան պաշտոնյաների, ավելի մեծ տարաներ՝ կայսեր կամար:

## 2. Կերակրել-լցնելը

Այսպես կոչված «կերակրել-լցնելու» ավանդույթն ընդհանրապես կատարվում է թաղման ծեսի ընթացքում՝ մարմինը լվանալու արարողությունից հետո: Այն իրենից ներկայացնում է հանգուցյալի բերանի մեջ մարգարիտ, նեֆրիտ, բրինձ, կաուրի և այլն և ցնելը: Հանգուցյալի բերանի մեջ բրինձ կամ կաուրի տեղավորելը կոչվում է կերակրել, իսկ մարգարիտներ կամ նեֆրիտ տեղավորելը՝ ցնել: Ավանդական մշակույթում կերակրել-լցնելը համարվում է որդիական բարեպաշտությունն արտահայտելու միջոց: Այս ավանդույթի շնորհիվ մարդիկ իրենց հանգուցյալ հարազատներին հնարավորություն էին տալիս վայելել ուտելիքն այնպես, ինչպես կենդանության օրոք կվայելեին:



Արարողությանը նախապատրաստվելիս հատուկ նյութից բանալի է տեղադրվում ատամների արանքում, որպեսզի բերանը չփակվի, քանի որ մահը հաստատվում է հոգին հետ կանչելու արարողությունից հետո: Կերակրել-լցնելու արարողությունը կարելի է կատարել այն ժամանակ, երբ մարմինը լվանալուց հետո այն տեղադրում են

մահճակալի վրա: Արարողությունը սահմանում է խիստ կանոններ: Գարնան և աշնան ժամանակաշրջանում կայսրերի բերանի մեջ մարգարիտ էին ցնում, ֆեոդալ արքայազների դեպքում՝ նեֆրիտ, բարձրաստիճան պաշտոնյաների դեպքում՝ նեֆրիտի կտորներ՝ կենտրոնում անցքեր, իսկ հասարակ պաշտոնյաների դեպքում՝ կաուրի: Ինչ վերաբերում է Հան դինաստիային, ապա կայսրերի դեպքում կերակրել-լցնելու արարողության համար օգտագործվում էր մարգարիտ ու նեֆրիտ, ֆեոդալ արքայազների դեպքում՝ մարգարիտ ու կենտրոնում անցքերով նեֆրիտի կտորներ, բարձրաստիճան և հասարակ պաշտոնյաների դեպքում՝ մարգարիտներ և կաուրի: Հասարակ մարդկանց դեպքում սովորաբար օգտագործվում էին պղնձից մետաղադրամներ:

Կերակրել-լցնելու արարողությունը տարբեր է նաև զանազան փոքրամասնությունների մոտ: Օրինակ, կորեական ազգերի սգո ծեսը պահանջում է բրինձ և լցնել հանգուցյալի բերանի մեջ: Սովորաբար օգտագործվում է կանանց անուսնական արարողությունների ժամանակ օգտագործված բրինձը: Բրինձը պետք է լցնել ուռենու փայտից գդալով, երեք անգամ՝ ձախից, աջից ու կենտրոնից. գդալները համապատասխանաբար կոչվում են «հարյուր Դանս», «հազար Դանս» և «տաս հազար Դանս»: Ապա հանգուցյալի բերանի մեջ տեղադրվում է երեք մետաղադրամ, որոնք համապատասխանաբար կոչվում են «հարյուր Լյան», «հազար Լյան» և «տաս հազար Լյան»: (Հին Չինաստանում Դանը չափման միավոր է, իսկ Լյանը՝ կշռի միավոր: 1 Դանը հավասար է 100 լիտրի, մեկ Լյանը՝ 50 գրամի):

Այս արարողությունից հետո մարմինը ծածկում են սպիտակ կտորով կամ քաթանով, ապա տեղավորում դագաղի մեջ:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ ԹԱՂԱՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԵՍԵՐ

*Թաղման նախապատրաստական ծեսեր ասելով նկատի է առնվում մի ամբողջ գործընթաց, որը կատարվում է թաղման արարողությունից առաջ: Դա շատ կարևոր գործընթաց է թաղման ծեսերի շարքում և ներառում է մակագրության պաստառի պատրաստումը, բուդդայական արարողություն վարելը, հանգուցյալին դագաղում տեղավորելը, թաղման երթն ու թաղման ժամանակ արտասվելը:*



## ՄԱՍ ՄԵԿ

### Մակագրության պաստառ և բուհայական արարողություն

#### 1. Մակագրության պաստառ

Մակագրության պաստառը կոչվում է նաև մակագրություն կամ ինքնություն: Այն մետաքսի մի երկար կտոր է: Պատրաստվում է թաղման արարողությանը նախապատրաստվելիս, ապա կախվում է բամբուկի ձողից, որպեսզի անցորդներն իմանան, թե ով է հանգուցյալը: Մակագրությունը տեղադրվում է նախասրահի արևմտյան աստիճանների վրա, մահից անմիջապես հետո՝ հանգուցյալին դազադում տեղավորելուց առաջ: Սգո երթի ընթացքում այն պետք է պահել դազադի առաջ, հիշատակի արարողության ժամանակ հենել հուշատախտակի սեղանին, իսկ հուղարկավորության ժամանակ տարածել դազադի կափարիչի վրա և հողին հանձնել: Ըստ թաղման ավանդական սովորույթների՝ մակագրությունը սովորաբար ներառում էր հանգուցյալի անունն ու ազգանունը: Անկախ մարդու կարգավիճակից՝ մահից հետո յուրաքանչյուր ոք պիտի ունենար իր հատուկ պաստառը:

Չինական պատմության մեջ պաստառը գոյություն է ունեցել դեռևս Ջոու դինաստիայից մինչև մեր ժամանակները՝ երբեմն փոխելով իր բնույթը: Վաղ շրջանում դրա վրա չէին նշվում հանգուցյալի ձեռքբերումները, նրա փառքը. այն ընդամենը սգո այլ առարկաներից մեկն էր: Հան դինաստիայում կայսրերի մակագրված պաստառների վրա նկարում էին արև, լուսին և վեր խոյացած վիշապներ, որոնք մարմնավորում էին հանգուցյալին դեպի երկինք առաջնորդող հոգիներին: Վաղ շրջանում մակագրված պաստառների վրա չէր նշվում հանգուցյալի պաշտոնական դիրքը: Հան դինաստիայում պաստառները, որոնց վրա նշվում էր հանգուցյալի ծննդավայրն ու անունը, լայնորեն կիրառվում էին կայսրերի, դիվանակալների (բյուրոկրատ) և կալվածատերերի դեպքում: Սակայն հասարակական փոփոխություններին զուգահեռ առաջ եկան մակագրված պաստառների տարբեր տեսակներ՝ ըստ հանգուցյալի զբաղեցրած դիրքի: Չնայած տարբեր դինաստիաներում դրանց ձևը տարբեր էր, պաստառի երկարությունն ամենուր սովորաբար խորհրդանշում էր հանգուցյալի կարգավիճակը: Թան Դինաստիայում մակագրված պաստառները մետաքսից էին, մուգ կարմիր. գոյություն ունեին մանրամասն մշակված կանոններ, որոնք վերաբերում էին տարբեր դիրք ունեցող հանգուցյալների համար նախա-



տեսված պաստառի ձևին: Ըստ Թան դինաստիայի թաղման ծեսերի՝ կայսրերի մակագրված պաստառները պետք է լինեին մուգ կարմիր մետաքսից, մոտ 70 սանտիմետր լայնությամբ ու 10 մետր երկարությամբ: Երրորդ աստիճանից բարձր պաշտոնյաների պաստառի երկարությունը պետք է լիներ 3 մետր, հինգերորդ աստիճանից բարձր պաշտոնյաների դեպքում՝ մոտ 2.7 մետր, իսկ վեցերորդ աստիճանից ցածր պաշտոնյաների, ինչպես նաև հասարակ ժողովրդի դեպքում՝ մոտ 2.3 մետր: Պաշտոնական դիրքի և կոչման մանրամասները տղամարդկանց դեպքում գրվում էին պաստառների վրա: Ինչ վերաբերում է կանանց, ապա պաստառի վրա գրվում էին նրանց անուսիմների կոչումները:

Մակագրության պաստառները տարբեր վայրերում տարբեր են: Հակկա ժողովրդի շրջանում ավագի մահից հետո նրա որդիներն ու դուստրերը հրավիրում էին իրենց տոհմային համայնքում ամենաբարձր պաշտոնական դիրք զբաղեցնող պաշտոնյային, որը պաստառի վրա մակագրում էր հանգուցյալի հետմահու կոչումը: Հուղարկավորությունից հետո մակագրության պաստառն այրվում էր տոհմական տաճարում: Պաստառը մակագրելու համար համապատասխան մարդ հրավիրելն ունի երկու պատճառ. մակագրության պաստառի միջոցով հարգանքի տուրք մատուցել հանգուցյալին կենդանության օրոք կատարած բարի գործերի համար, և հանդերձյալ աշխարհում հանգուցյալին պաշտպանել հալածանքներից:

Մակագրության պաստառները տարբեր վայրերում տարբեր են: Հակկա ժողովրդի շրջանում ավագի մահից հետո նրա որդիներն ու դուստրերը հրավիրում էին իրենց տոհմային համայնքում ամենաբարձր պաշտոնական դիրք զբաղեցնող պաշտոնյային, որը պաստառի վրա մակագրում էր հանգուցյալի հետմահու կոչումը: Հուղարկավորությունից հետո մակագրության պաստառն այրվում էր տոհմական տաճարում: Պաստառը մակագրելու համար համապատասխան մարդ հրավիրելն ունի երկու պատճառ. մակագրության պաստառի միջոցով հարգանքի տուրք մատուցել հանգուցյալին կենդանության օրոք կատարած բարի գործերի համար, և հանդերձյալ աշխարհում հանգուցյալին պաշտպանել հալածանքներից:

## 2. Բուդդայական արարողություն

Բուդդայական արարողությունը, որը կրոնական մշակույթի և ավանդական ծիսական մշակույթի համադրություն է, կարևոր դեր է խաղում հուղարկավորության կազմակերպչական աշխատանքներում: Ավելի վաղ շրջանում բուդդայական արարողությունները կիրառվում էին միայն բուդդայականների թաղումների ժամանակ: Ավելի ուշ այն աստիճանաբար ընդունվեց հասարակ մարդկանց կողմից, իսկ հետագայում տարածվեց բո-

լոր հասարակական շերտերում: Այն, մասնավորապես, մեծ տարածում գտավ Թան և Սուն դինաստիաներից հետո: Այն ժամանակ մարդիկ հավատում էին, որ միայն բուդդայական արարողությունների միջոցով կարելի է հանգուցյալին ազատել կենդանության օրոք գործած մեղքերից և ապահովել հոգու ուղևորությունը դեպի դրախտ՝ երջանկության բոլոր երանգները վայելելու: Հակառակ դեպքում նրանք կիջնեն դժոխք՝ ամենատարբեր դաժան տառապանքների ենթարկվելու, իսկ ընտանիքի անդամներն այլևս չէին կարողանա ապրել ու աշխատել խաղաղության ու գոհունակության մեջ:

Պեկինում Ցին դինաստիայում լայնորեն տարածված էր բուդդայականներին հրավիրելու և նրանց կողմից բուդդայական թաղման արարողություններ կատարելու պրակտիկան: Եթե ընտանիքի անդամ էր մահանում, կատարված առաջին ծեսը կոչվում էր «տեղափոխման երգ», որի ժամանակ մենաստանից հրավիրվում էին վանականներ, Լամաներ և միանձնուհիներ, և նրանք տանը սուտրաներ էին երգում՝ հանգուցյալին մեղքերից ազատելու և հոգին կրոնական արարողությունների միջոցով հանդարտեցնելու համար: «Տեղափոխման երգը» նաև կոչվում էր «բախտը փոխելու երգ», այսինքն՝ փոխել հանգուցյալի բախտը՝ ազատելով նրան մեղքերից ու լցնելով բարությամբ ու գեղեցկությամբ և թույլ չտալ, որ հանդերձյալ կյանքում հանգուցյալը վերածվի գազանի: Սուտրաներ երգելն ընդհանուր առմամբ տևում էր երեք օր և կատարվում էր սզի ընթացքում: Արարողությունը վարող վանականների, Լամաների ու միանձնուհիների կոնկրետ թվեր չկան: Հարուստ ընտանիքները հրավիրում էին հնարավորինս շատ մարդկանց. այս երևույթը հայտնի էր «մրցակից սուտրաներ» անունով: Դագաղի մեջ տեղավորելիս մարմինը ծածկում էին թղթի մեծ կտորով, որի վրա գրված էր «Ադամանդե սուտրա»: Թուղթը ժամանակին կոչվում էր նաև «ծածկոց- սուտրա»: Որդին ծնկի իջած երգում էր սուտրան, ապա դագաղը փակվում էր: Սզո երթի ընթացքում բոլոր բուդդայականները, սուտրաներ երգելով, երաժշտական գործիքները ձեռքին, առաջնորդում էին թափորը. երթն ուղեկցվում էր երաժշտությամբ, որը սովորաբար կատարում էր պատվո պահակախումբը: Հու-



դափոխման երգ», որի ժամանակ մենաստանից հրավիրվում էին վանականներ, Լամաներ և միանձնուհիներ, և նրանք տանը սուտրաներ էին երգում՝ հանգուցյալին մեղքերից ազատելու և հոգին կրոնական արարողությունների միջոցով հանդարտեցնելու համար: «Տեղափոխման երգը» նաև կոչվում էր «բախտը փոխելու երգ», այսինքն՝ փոխել հանգուցյալի բախտը՝ ազատելով նրան մեղքերից ու լցնելով բարությամբ ու գեղեցկությամբ և թույլ չտալ, որ հանդերձյալ կյանքում հանգուցյալը վերածվի գազանի: Սուտրաներ երգելն ընդհանուր առմամբ տևում էր երեք օր և կատարվում էր սզի ընթացքում: Արարողությունը վարող վանականների, Լամաների ու միանձնուհիների կոնկրետ թվեր չկան: Հարուստ ընտանիքները հրավիրում էին հնարավորինս շատ մարդկանց. այս երևույթը հայտնի էր «մրցակից սուտրաներ» անունով: Դագաղի մեջ տեղավորելիս մարմինը ծածկում էին թղթի մեծ կտորով, որի վրա գրված էր «Ադամանդե սուտրա»: Թուղթը ժամանակին կոչվում էր նաև «ծածկոց- սուտրա»: Որդին ծնկի իջած երգում էր սուտրան, ապա դագաղը փակվում էր: Սզո երթի ընթացքում բոլոր բուդդայականները, սուտրաներ երգելով, երաժշտական գործիքները ձեռքին, առաջնորդում էին թափորը. երթն ուղեկցվում էր երաժշտությամբ, որը սովորաբար կատարում էր պատվո պահակախումբը: Հու-

#### ԳՈՆԳ ՔԻԱՆԳ

Պարկավորությունից հետո երեք տարվա սգի ընթացքում որդիները պետք է հիշատակի արարողություններ կազմակերպեին և ամեն տարի՝ մահվան օրը, հրավիրեին բուդդայականների՝ սուտրաներ երգելու: Սա մշանակում էր, որ ֆեոդալական հասարակության ուշ շրջանում բուդդայականությունը սերտորեն կապված էր թաղման արարողությունների ողջ ընթացքի հետ: Բուդդայականությունը խոր և երկարատև ազդեցություն է ունեցել չինական սգո մշակույթի վրա:

## ՄԱՍ ԵՐԿՈՒ

### Դագաղի մեջ տեղավորելը (Նախնական և պաշտոնական տեղավորում)

Այս գործողությունը ներառում է հանգուցյալին պատանելն ու դագաղի մեջ տեղավորելը: Գործողությունը բաղկացած է երկու փուլից՝ նախնական տեղավորում և պաշտոնական տեղավորում:

#### 1. Նախնական տեղավորում

Նախնական տեղավորումը դին կտորով փաթաթելն է: Սա առհասարակ կատարվում է մահվան երկրորդ օրը: Տանտերը չի ծածկում իր ձախ թևը: Նա և տանտիրուհին հանում են գլխարկները, հավաքում մազերը և շարունակում ողբալ: Նախնական տեղավորման համար նախատեսված մահճակալը դնում են սրահի դիմաց: Մահճակալի վրա ծղոտից ներքնակ են փռում, որի վրա փռում են կտորի լայն շերտեր: Կտորի վրա մզդակած վերնակ են տարածում: Հետո հանգուցյալի մարմինը պատանում են, կտորի շերտերն օգտագործում են կոճակների փոխարեն, ինչը ցույց է տալիս, որ հազցնելուց հետո այս հագուստն այլևս անհնար է հանել:

Ըստ ավանդական ծեսերի, անկախ կարգավիճակից, հանգուցյալի համար պետք էր պատրաստել վերջին հագուստի տասնինը հավաքածու: Եթե աղքատ մարդը չէր կարող իրեն նման շռայլություն թույլ տալ, ընկերները, հարազատներն ու հարևանները պետք է հագուստ նվիրեին: Միապետը կամ կայսրը չպիտի օգտագործեր ընծայված հագուստ:



Հանգուցյալի վերջին շորերը հազցնելուց հետո մետաքսի կտորներից բարձ էին պատրաստում, տեղադրում հանգուցյալի գլխի տակ, կտորներով ծածկում ուսերից վեր տարածությունը և ոտքերն ամուր

միացնում իրար: Ապա մարմինը փաթաթում էին ծածկոցով, ամուր կապում կտորի լայն շերտերով և ծածկում կտորից պարկով: Իսկ վերջում ևս մի ծածկոց էին գցում:

Հանգուցյալի զգեստը կոչվում էր «դագաղում տեղավորելու հագուստ», իսկ առհասարակ այն հայտնի էր «պատանք» անունով: Մարդիկ հատկապես հետևողական էին այս հարցում, որովհետև սա վերջին հագուստն էր, որ մարդը կրում էր կյանքում: Հարուստ ընտանիքները շատ զումար էին ծախսում մետաքսի ու ատլասի վրա և հրավիրում էին հայտնի դերձակների, որպեսզի վերջիններս հնարավորինս ճոխ հագուստ կարեին: Աղքատ ընտանիքներն ամեն ինչ անում էին, որ իրենց հանգուցյալ ավագներին չթաղեն մաշված շորերով: Ֆեոդալական հասարակության ուշ շրջանում քաղաքներում ի հայտ եկան թաղման պարագաների մասնագիտացած խանութներ, որոնք հայտնի էին «պատանքի խանութ» անունով, որտեղ կարում էին թաղման արարողության համար նախատեսված հագուստ և վաճառում թաղման անհրաժեշտ պարագաներ: Ինչպես ցույց են տալիս պատմական արձանագրությունները, Ցին դինաստիայի ուշ շրջանի մայրաքաղաքում կտորի խանութները կենտրոնացած էին հիմնականում Բանբի փողոցում և վաճառում էին հրաժեշտի և հուղարկավորության համար անհրաժեշտ պարագաներ, ինչպիսիք են՝ ծածկոցներ, Ռույի բարձեր, տղամարդու գլխարկներ, կոշիկներ, ինչպես նաև զգեստներ, սանդալներ, զարդանախշեր, գուլպաներ: Այս խանութները խիստ եկամտաբեր էին: Հին ժամանակներում դագաղում տեղավորելիս մորթու օգտագործումը տաբու էր: Արարողության ժամանակ արգելված էր մորթուց հագուստ օգտագործել, քանի որ մորթու կիրառումը կապվում էր հաջորդ կյանքում վերամարմնավորման գաղափարի հետ. բուդդայականությունը պաշտպանում էր այդ գաղափարը: Ինչպես ցույց են տալիս արձանագրությունները, եթե հանգուցյալին մորթուց պատանք էին հագցնում, հաջորդ կյանքում նա սխալմամբ վերածվում էր գազանի: Հետևաբար, հնում ամենամեծ տաբուն հանգուցյալին մորթուց հագուստ հագցնելն էր: Ուստիև, թաղման համար նախատեսված հագուստը հիմնականում կարվում էր մետաքսից, կանեփաթելից և բամբակից:

## 2. Պաշտոնական տեղավորում

Նախնական տեղավորման հաջորդ օրը, նախասրահի դիմաց՝ արևելահայաց աստիճանների վրա, կատարվում է պաշտոնական տեղավորումը: Այս արարողությունն այլ կերպ կոչվում էր նաև «նախնական հուղարկավորություն». սա այն փուլն է, երբ դին տեղադրվում է դագաղի մեջ, և մար-

դիկ հրաժեշտ են տալիս հանգուցյալին:

Այդ օրը՝ լուսաբացին, նախ և առաջ մի կողմ են դրվում պաշտոնական տեղավորման համար նախատեսված շորերը, ապա դագաղը, որի մեջ արդեն նախօրոք ծածկոց է զցված, բարձրացնում են սրահ: Պատրաստվում է մահճակալ՝ դին դագաղի մեջ տեղավորելու համար, ապա հանգուցյալի դին տեղավորվում է մահճակալի վրա և ծածկվում ծածկոցով, իսկ հետո դրվում դագաղի մեջ: Այս ընթացքում որդին պետք է գրկի դին և վշտից անընդհատ լաց լինի: Դագաղի մեջ պետք է տեղադրված լինի տարվա չորս եղանակներին համապատասխան հագուստ, որը հանգուցյալը պիտի հագնի հանդերձյալ աշխարհում: Շորերի քանակը կախված է հանգուցյալի կարգավիճակից: Օրինակ, կայսրերի դեպքում պատրաստվում էր հարյուր կոստյում, բարձրաստիճան պաշտոնյաների դեպքում՝ հիսուն կոստյում: Երբ դին տեղավորվում է դագաղի մեջ, դագաղի բոլոր անկյուններում շորեր են դրվում, այնքան, որ այլևս տեղ չմնա: Որոշ դեպքերում արժեքավոր առարկաներ կամ կենդանության օրոք հանգուցյալի փայփայած իրերը նույնպես տեղավորում են դագաղի մեջ, որպեսզի հանդերձյալ կյանքում հանգուցյալը վայելի դրանք: Ավարտելուց հետո վարպետները փակում են դագաղն ու մեխերով ամրացնում: Բոլոր որդիները թևերով հենվում են դագաղին ու արտահայտում իրենց վիշտը: Այդ ժամանակ մահճակալը հեռացվում է սրահից, փոխարենը տեղադրվում է հուշատախտակ, որի դիմաց պատրաստվում է խորան, և խորանի վրա դասավորում են հյուրասիրության համար բերված ուտելիքն ու խմիչքը: Ապա կատարվում է հիշատակի արարողություն: Այս ողջ գործընթացը կատարելուց հետո արարողության պաշտոնական մասն ավարտվում է:

Հին ժամանակներում դագաղի ընտրության հարցում գոյություն ունեին խիստ կանոններ: Կայսրերի դագաղները հսկայական չափերի էին, նախարարներինն ավելի փոքր էին: Հասարակ մահկանացուների դագաղները շատ փոքր էին: Դրանք սովորաբար պատրաստվում էին փայտից: Փայտի հայտնի և թանկարժեք տեսակները, ինչպիսին, օրինակ, կամֆորայի փայտն է, օգտագործվում էին հարուստների դագաղների համար, իսկ աղքատների դագաղները պատրաստվում էին կղմինդրից: Ավելին, հարուստների դագաղները կարմիր էին ներկված, վրան՝ նախշազարդեր: Ի հակադրություն դրա՝ հասարակ մարդկանց դագաղները կոչվում էին «պարզ դագաղներ» և առանց ձևավորման էին: Արարողության ընթացքում ազնվականների դագաղները սովորաբար փաթաթում էին հաստ մետաքսե կտորով և տեղավորում ավելի մեծ՝ արտաքին դագաղի մեջ: Արտաքին դագաղները տարբերվում էին չափսերով, ընդհանրապես պատրաստվում էին փայտից, սալաքարից, քարից, երբեմն էլ՝ կղմինդրից: Ար-

#### ԳՈՆԳ ՔԻԱՆԳ

տաքին դագաղների վրա լինում էին մակագրություններ, ինչպես, օրինակ, տապանաքարերի վրա: Ինչ վերաբերում է ազնվականությանն ու նախարարներին, արքունիքն էր սովորաբար տրամադրում նրանց ներքին ու արտաքին դագաղները: Իսկ աղքատների դեպքում հիմնականում օգտագործվում էին մահճակալներ: Երբեմն նույնիսկ դին փաթաթում էին ծղոտե ներքնակով, ապա շտապ հանձնում հողին:

Արարողության պաշտոնական փուլից հետո առավոտյան և երեկոյան կազմակերպվում են հիշատակի արարողություններ՝ սգո ծեսերով: Ճաշի ժամին պետք է ուտելիք դնել սեղանին՝ դագաղի դիմաց: Որդիներն ու երիտասարդ սերնդի այլ հարազատներ պետք է կանգնեն դագաղի կողքին, սգան ու հյուրասիրեն ընկերներին ու հարազատներին, որոնք եկել են թաղման արարողությանը մասնակցելու:



## ՄԱՍ ԵՐԵՔ

### Սգո երթ և լացը հուղարկավորության ընթացքում

#### 1. Սգո երթ

Դին դագաղի մեջ տեղավորելուց հետո և հուղարկավորությունից առաջ դագաղը որոշ ժամանակ դրվում է մի կողմ: Սա չիմարենում կոչվում է «Բին»: Ընդհանրապես դագաղը տեղադրվում է հիմնական սրահի արևմտյան աստիճաններին, իսկ որոշ դեպքերում՝ տոհմական տաճարում: Դագաղը, որը պիտի հողին հանձնվի, ժամանակավորապես թողնում են բուրդայական տաճարում: Մի կողմ դնելուց մինչև հուղարկավորություն՝ հանգուցյալի ընտանիքի անդամները ժամանակ են ունենում թարմացնել գերեզմանափոսն ու նախապատրաստվել թաղմանը արարողությանը: Սովորաբար հնում հուղարկավորությունը շատ չէր ուշանում, որովհետև ընդունված ու ցանկալի էր հանգուցյալին հնարավորինս շուտ հանձնել հողին: Սակայն երբեմն պատահում էր, որ հուղարկավորությունը մի քանի տարով կամ նույնիսկ տասնամյակներով հետաձգվում էր հատուկ հանգամանքների դեպքում, ինչպիսիք են պատերազմները, սովը, աղքատությունը, կամ՝ եթե հանգուցյալը շատ հեռու էր իր ծննդավայրից:

Հարուստ ընտանիքներում գոյություն ունեին թաղման արարողությունների խիստ կանոններ: Սգո երթից առաջ, նախ, պիտի ընտրվեր այն բարեպատեհ օրը, երբ տեղի էր ունենալու մեծ արարողությունը: Գուշակության ընթացքում հանգուցյալի ընտանիքի բոլոր անդամները պետք է լուռ սպասեին: Պատեհ օր որոշելով՝ գուշակը գոռում էր. «Օրը որոշված է, թող աստվածներն ու հոգիները չմեղադրեն կամ զղջան դրա համար»: Ապա ընտանիքի բոլոր անդամները պետք է արտասվելով արտահայտեին իրենց վիշտը: Թաղման օրը գործողությունները սկսվում էին դագաղը սրահի կենտրոն տեղափոխելով: Այս ողջ ընթացքում բոլոր հարազատները պետք է ներկա լինեն և սգան: Կանանց արգելվում է լաց լի-



նել, իսկ տանտերը չի ծածկում ձախ թևը: Արարողությունից հետո զոհաբերության ծեսի պատասխանատուն կտոր է վերցնում ու երեք անգամ ասում «Յիսի», ապա դիմում բոլոր աստվածներին ասելով. «Ժամանակն է ճանապարհ ընկնել»: Սա պետք է արտաբերվի երեք անգամ, որին հաջորդում է հանգուցյալի հարազատների լացը: Այդ պահին ներս է բերվում նախապես պատրաստված երկու ջահ: Ծեսի պատասխանատուն կտորով սրբում է դագաղի փոշին, ծածկում ծածկոցներով, որոնք նախնական փուլում օգտագործվել են դին ծածկելու համար, ապա դագաղը տեղափոխում են տոհմական տաճար, որտեղ հանգուցյալը հրաժեշտ է տալիս նախնիներին, ճիշտ այնպես, ինչպես կաներ կենդանության օրոք՝ հանդերձյալ կյանք ուղևորվելուց առաջ: Թաղման պարագաները պետք է պատրաստ լինեն երթից առաջ, իսկ այն իրերը, որոնք տանում է պատվո պահակը (Ֆանսյանի՝ ուրվականներին վտարող աստծո արձանը, դագաղը փոխադրող միջոցը և սգո պարագաները), պիտի ցուցադրվեն հեռանալուց առաջ: Կան նաև առօրյա օգտագործման համար նախատեսված իրեր, օրինակ՝ սափորներ, գյուղատնտեսական գործիքներ, գութան, ինչպես նաև զենք, սաղավարտ, վահան և այլն: Սգո երթը սկսելուն պես դագաղը դրվում է փոխադրամիջոցի մեջ: Երբ արարողությունն ավարտվում է, փոխադրամիջոցը շարժվում է՝ անենատարբեր երաժշտական գործիքների երաժշտության հնչյունների ներքո: Պատվո պահակների կարգն ու դասավորությունը խիստ վերահսկվում է: Տանտերն ու որդիները գնում են թաղման թափորի ետևից, արտասվելով, ոտաբոբիկ ու սգալով, իսկ մյուս հարազատներն արտասվելով ճանապարհում են հանգուցյալին: Դագաղը դռնից դուրս բերելուց հետո ազնվականները կամ բարձր դասի մարդիկ կարող են ձիով կամ կառքով ճանապարհել հանգուցյալին:



Հին ժամանակներում հայրենիքին հատուկ ծառայություն մատուցած նախարարների թաղման արարողությանը մասնակցում էր բանակից հրավիրված պատվո պահակախումբ: Յուանշուուի վեցե-

րորդ տարում՝ Հան դինաստիայի Ուու կայսեր կառավարման օրոք, երբ

մահացավ Բյառջիի գեներալ Յուռ Ցուբինը, պալատը հանդիսավոր ու մանրակրկիտ թաղման արարողություն կազմակերպեց նրա պատվին: Ու ու կայսրը Սյուանձիա անկախ պետության բանակն ուղարկեց՝ թաղմանը մասնակցելու: Զինվորները շարքերով մայրաքաղաք Չան՝անից ճանապարհ ընկան դեպի գերեզմանատուն՝ ավելի քան երեսուն մղոն տարածություն անցնելով աշխույժ ու ուժգին քայլքով: Ջորջը հազվադեպ էր մասնակցում հայտնի նախարարների թաղման արարողություններին: Այս արարողությանը մասնակցում էր նաև Գուչույը՝ նվագախումբը, որը նման էր ներկայիս ռազմական նվագախմբերին: Ըստ պատմական արձանագրությունների՝ նվագախումբը հին ժամանակներում բանակի հեղինակության ցուցանիշն էր: Հան և Թան դինաստիաներում միայն ականավոր նախարարները կարող էին օգտվել Գուչույից, որը հազվադեպ էր հանդիպում և արգելված էր հասարակ մարդկանց համար: Թան և Սուն դինաստիաներից հետո նվագախումբը մեծ տարածում գտավ նաև քաղաքացիների շրջանում, և հասարակ ընտանիքները նույնպես թաղման արարողությունների ժամանակ օգտվում էին այդ հնարավորությունից: Ավանդույթը փոխանցվել է սերնդեսերունդ և հասել է մինչև մեր օրերը:

Պատմության ընթացքում, քաղաքացիների շրջանում գոյություն է ունեցել թաղման արարողության մի քանի ավանդույթ: Ավանդաբար հանգուցյալի ընտանիքը հրավիրում էր *գեոմանտի*, որը մաքուր թղթի վրա գրի էր առնում հանգուցյալի ծննդյան և մահվան



օրերը, տարիքն ու թաղման օրը. տվյալները ներկայացվում և հաստատվում էին դագաղը քաղաքից հանելուց առաջ: Տվյալների այս հավաքածուն կենդանի մարդու անցագիր էր հիշեցնում և հայտնի էր «դժբախտությունների ցանկի հրապարակում» կամ «դժբախտության նամակ» անունով: Սգո երթի նախորդ օրը ընկերներն ու հարազատները գալիս էին հիշատակի արարողությանը ներկա լինելու, իսկ բուդդայականներին հրավիրում էին սուտրաներ երգելու: Նրանք ամբողջ գիշեր հանգուցյալի որդիների հետ նստում էին դագաղի մոտ. այս ավանդույթը կոչվում էր

«ողջ գիշերն արթուն մնալ» կամ՝ «ողջ գիշերն արթուն մատել»: Հաջորդ առավոտյան որդին պետք է նոր ավելով մաքրեր դագաղի փոշին, ապա այդ փոշին թափ տար ներքնակի տակ. այս երևույթը կոչվում էր «ավելել հարստությունը»: Ապա պղնձե մետաղադրամ էր դրվում դագաղի ոտքի տակ. սա կոչվում էր «դագաղը բարձրացնել»: Հաջորդ գործողությունը «հոգուն հրաժեշտ տալու» ծեսն էր: Դագաղը դուրս էր բերվում սրահից, որդին գնում էր առջևից՝ ձեռքին թղթից նեղ դրոշ, ապա նրան հետևում էին ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, ընկերներն ու հարազատները, և բոլորը լաց էին լինում ու սգում: Դագաղը դռնից դուրս բերելուց հետո դրվում էր դիակառքի վրա, իսկ դրա դիմաց տեղադրվում էր սգո ավազան՝ թղթադրամներն այրելու համար: Ճանապարհ ընկնելուց առաջ որդին կոտրում էր ավազանը: Ճանապարհին դիակառքը քարշ էին տալիս դրան կապված պարանով, որպեսզի այն դանդաղ առաջ գնա:

Սգո երթը տարբեր էր լինում զանազան վայրերում: Ջեժյան նահանգի շրջաններում այն ունի որոշ առանձնահատկություններ: Երթը հիմնականում կազմակերպվում է առավոտյան: Դագաղը տանողները բանվորներ են, ոմանք նաև մասնագիտացած են դիահերձման ոլորտում: Այս մարդկանց կոչում են Պարոն Ութ: Դագաղը տեղափոխելուց առաջ ընդունված է զոհ մատուցել. այս ավանդույթը հայտնի է «նվիրաբերություն դագաղի առաջ» անունով: Դագաղը բարձրացնելուց առաջ անհրաժեշտ է կոտրել դրված գավաթը: Երթի ընթացքում դագաղի առաջ տեղադրվում է թղթից «առաջնորդող աստվածն» ու «ուղեկցող դրոշը»: Դագաղի ետևից տանում են երկու տաղավար, որոնք նախատեսված են հանգուցյալի դիմանկարի և հուշատախտակի համար: Երթի ներկաները շարք են կանգնում և շարժվում են առաջ՝ փող «շաղ տալու». փողն այս դեպքում պղնձե դրամներն են, որոնցով վճարում են մուտքի համար: Այդ ընթացքում կոչնագանգն անընդհատ տասներեք զարկ է խփում, ընդ որում, յուրաքանչյուր տասը զարկից հետո դադար է տրվում, ապա՝ վերջին երեք զարկը՝ առանց դադարի: Նվագախումբը քայլում է տաղավարների ետևից: Հին ժամանակներում հարուստ ընտանիքները սովորաբար վարձում էին «երեք խումբ», այն է՝ բուդդայական վանականներ, թաոիստներ և բուդդայական միանձնուհիներ: Երեք խմբին հաջորդում էր դագաղը, ապա՝ ընտանիքի ծառաները, հարազատներն ու ընկերները: Հին ժամանակներում որդիները «եռածայր գլխարկ» էին կրում՝ սպիտակ գլխարկ, որը պատրաստված էր ծղոտի կտորներից, իսկ ձախից, աջից ու կենտրոնից բամբակյա գդակներ էին կախված: Ջարմիկներն ու թռմները «երկծայր գլխարկ» էին կրում, իսկ ծոռների թռմները՝ «միածայր գլխարկ»: Որդիներն ու թռմները կրում էին ծղոտե սանդալներ ու ծղոտի կտորներով կապված սպիտակ շորեր,

ծեռքին՝ «սզացողի մական» կամ, այսպես կոչված՝ «որդիական մական»: Երթի մասնակից կանայք կրում էին «Որդիական պարկ» (կանեփաթելից միածայր գլխարկ), սպիտակ վերնահագուստ ու փեշ, սպիտակ կոշիկներ՝ կարմիր կրունկներով: Երեխաներն ու թոռները ծնկի էին գալիս, եթե ճանապարհին անհրաժեշտ էր լինում փոխարինել դագաղը տանողին: Գերեզմանատուն հասնելով՝ հիշատակի արարողությունից առաջ, նախ, զոհ էին մատուցում սարերի աստծուն՝ գերեզմանափոսի մեջ «հինգ անոթ հացահատիկ դնելով»: Դագաղը փոսի մեջ տեղավորելուց հետո դագաղի վրա դնում էին «եռածայր գլխարկներ»: Երբ գերեզմանը փակվում էր, գերեզմանի առաջ, որպես նվիրաբերություն, ամրացնում էին դրոշ ու «սզավորի մական»: Անհրաժեշտ էր երկրպագել նաև նոր շիրիմի «հարևաններին» և ապա վերադառնալ այն նույն ուղղությամբ, որտեղից եկել էին: Վերադարձի ճանապարհին կոչնագանգերն ուղղորդում էին թափորը, բայց զանգերը հնչում էին մեկական անգամ՝ երկար ընդմիջումներով: Ավագ որդին բարձրացնում էր հուշատախտակը կամ դիմանկարը, իսկ մյուսները հետևում էին նրան: Տուն հասնելուն պես հուշատախտակը կամ դիմանկարը դրվում էր սրահում, և ուտելիք էր պատրաստվում հյուրասիրության համար: Երթի մասնակիցներից յուրաքանչյուրը լվանում էր դեմքը, սանրում մազերն ու քաղցր թեյ խմում: Թաղման արարողության վերջին փուլն ավարտված էր համարվում միայն այս պահին: Ընդունված էր, որ ամուսնու ծնողների մահվան դեպքում կինը պետք է կրեր հատուկ հյուս, իսկ եթե մահանում էին նրա ծնողները, հորեղբայրները կամ ամուսինը, ապա պետք է փոխեր հյուսի ոճը: Թաղման արարողությունից հետո սանրվածքը պիտի լիներ պարզ ու անպաճույճ, մազերը պետք էր կապել սպիտակ երիզներով:

Չարուստ ընտանիքների սզո երթի ընթացքում ընկերները, բարեկամներն ու գործընկերները հաճախ ճանապարհին զոհ էի մատուցում՝ ծես, որը հայտնի է «ճանապարհի զոհաբերություն» անունով: Ցին դիմաստիայում սզո թափորի մեջ զոհ մատուցելիս հանգուցյալի ընկերներն ու հարազատները գունար էին հավաքում՝ նվիրաբերություն համար ուտելիք և գինի գնելու նպատակով, և խնջույք էին կազմակերպում այն ճանապարհին, որտեղով տանելու են դագաղը: Ավագներից ամենահեղինակավորն ընտրվում էր՝ հիշատակի արարողությունը վարելու համար: Երբ դագաղը բերում էին, բոլորը ծնկի էին գալիս, իսկ ծեսը վարողը նվիրաբերությունը դնում էր դագաղի դիմաց, ծնկի գալիս, երեք անգամ ողջունում, ապա ներքող ձոնում: Արարողության ավարտին որդին արտասվում էր՝ արտահայտելով իր երախտագիտությունը, և դագաղը տանում էին: Սովորաբար ճանապարհի զոհաբերության ընթացքում ցուցադրվում էին պարային կա-

տարրումներ ու ներկայացումներ, որպեսզի հուղարկավորությունից առաջ հանգուցյալը մի վերջին անգամ լիովին վայելի աշխարհիկ հաճույքները:

Բազմաթիվ ծեսերից հետո սգո հսկայական թափորն ի վերջո հասնում էր գերեզմանատուն: Ընտանիքի բոլոր անդամները բարձր լաց էին լինում՝ վերջին անգամ հրաժեշտ տալով հանգուցյալին: Մարդիկ, որոնք հուղարկավորության ժամանակ օգնում էին իջեցնել դագաղը, սգո իրերը դնում էին փոսի մեջ, փակում գերեզմանը, լցնում փոսն ու գերեզմանաթումբ պատրաստում: Այդ պահին թաղման արարողությունը համարվում էր ավարտված:

## 2. Լացը հուղարկավորության ժամանակ

Հուղարկավորության ժամանակ լացը հատուկ ծես է, որով ընտանիքի անդամներն արտահայտում են իրենց վիշտն ու հանգուցյալից բաժանվելու դժկամությունը, ինչպես նաև հարևաններին հուշում են դադարեցնել զվարճանքն ու երգերը: Գոյություն ունի լացի մի քանի տեսակ՝ լուռ հեկեկոց, բարձր լաց և ողբ: Բացի լացից պետք է նաև հարվածել կրծքավանդակին ու ոտքերը խփել գետնին:

Ըստ ժողովրդական ավանդույթի՝ հանգուցյալի բոլոր ժառանգները, հատկապես տղամարդիկ, պետք է երգեն ու լաց լինեն սգո երթի ընթացքում, հակառակ դեպքում կհամարվի, որ չեն սգում հանգուցյալի մահը: Թաղման ընթացքում կատարվող երգերը՝ սգո երգեր են, որոնք տարբեր տարածաշրջաններում ու ազգությունների մեջ տարբեր են: Ջուրան ազգությունում սովորաբար երկու ժողովրդական երգիչ հանդես է գալիս սգո երգերով: Երգիչները ձևացնում են, թե հանգուցյալի հորեղբայրը կամ զարմիկն են, և ամբողջ գիշեր երգում են՝ հարցերի ու պատասխանների միջոցով գովերգելով նախնիների ձեռքբերումները և երիտասարդ սերնդին հորդորելով չնռանալ նրանց բարությունը: Բազմաթիվ ազգություններ ունեն պարային ծեսեր, որոնցով ուղեկցվում են սգո երգերի կատարումները: Օրինակ, Յի ազգությունը դրանք կոչում է «ցատկոտող ոտքեր»․ չորս մարդ պարում ու երգում է հանգուցյալի դիակի կողքին: Ասում են՝ այսպես օգնում են, որ հանգուցյալը հեշտությամբ անցնի հանդերձյալ աշխարհի փշոտ ճանապարհը: Ջինփո ազգն այս արարողությունը կոչում է *բուզունգե*․ հրավիրվում են նաև հարևան գյուղերի երիտասարդ տղամարդիկ ու կանայք, որոնք ամբողջ գիշեր միասին պարում են: Բացի այդ, հրավիրում են երկու մարդ, որոնք պարում են թիկնոցներով, նիզակները ձեռքին և պտտվում հնդկեղեգի թփի շուրջ՝ չար ոգիները քշելու համար:

Ինչ վերաբերում է ձևին, ապա արդի ժամանակներում ժողովրդի շրջա-

նուն տարածված սգո երգերը կամ էլեգիաները բաժանվում են երեք խմբի՝ «ազատ լաց», «(գործնական) սկիզբ» և «սուտրա»: Ի տարբերություն լացի մյուս երկու տեսակի՝ ազատ լացը բնութագրվում է, այսպես կոչված՝ «ուղեղային մթազնունով կամ գրոհով». մարդիկ անզուսպ հեկեկում են, և լացի առիթը ոչ այնքան բուն պատճառն է, այլ այն ամենը, ինչ անցնում է նրանց մտքով: «Ազատ լացի» դեպքում հիմնականում ողբում են հանգուցյալին տեսնելու տենչից, արտահայտում են իրենց ավստսանքը, որ պատշաճ ուշադրության չեն արժանացրել ավագ սերնդին և սգում են սեփական կյանքի դժբախտ իրադարձությունների համար: Ինչ վերաբերում է «սկզբին», ապա լացի այս տեսակի բովանդակությունը սահմանափակ է և հիմնականում ներառում է հետևյալ թեմաները՝ «Ստանալ մայրիկի բարեհաճությունը», «Տասներկու խնդրանք մայրիկի համար», «Տարվա տասներկու ամիսների ծաղիկների անունները» և այլն: Լացի պատճառ կարող են լինել ուրիշների առավելությունները և սեփական տառապանքը: Ինչ վերաբերում է երրորդ տեսակին, ապա այն համադրում է թաղման ծեսը և «սուտրան»: Երբ հիվանդը մահանում է, դուստրը կամ հարսը երգում է «Հագուստ գնելու սուտրան», «Հագուստ կրելու սուտրան» և այլն: Եթե հանգուցյալը կին է, դուստրը մոր համար կատարում է «Վարսերը սանրելու երգը»: Դագաղում տեղավորելու ընթացքում բոլոր երեխաներն ու հարազատները սգո երգեր են կատարում՝ ցուցադրելով հանգուցյալի հետ իրենց խոր մտերմությունը: Թաղման արարողության օրը՝ առավոտյան, ավագ հարսը կատարում է «Մուտքի դուռը բացելու» երգը, որովհետև, ըստ հավատալիքի՝ եթե այդ երգը բարձրաձայն չերգվի, հանգուցյալը կաքսորվի դժոխքի ամենախոր անկյունը և ստիպված կլինի տառապել հանդերձյալ աշխարհում: Սգո երթի ընթացքում դուստրը կամ հարսը պետք է երգեն «Ճանապարհելու սուտրան», իսկ վերադարձի ճանապարհին՝ «Մահճակալը զոհաբերելու սուտրան»: «Տաղավարի սուտրան» երգում են հանգուցյալի համար, որպեսզի նա հանդերձյալ աշխարհի ճանապարհին հանգստանա ստվերի տակ: «Ձոհասեղանի սուտրան» կատարում են զոհասեղանը պատրաստելուց հետո: Սուտրաների մեծ մասը կատարում են կանայք, ինչն էլ ապահովում է հանգուցյալի անվտանգ տեղափոխումը հանդերձյալ աշխարհ:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՔ ԹԱՂՄԱՆԸ ՀԱԶՈՐԴՈՂ ԾԵՍԵՐ

*Սգո երթից հետո թաղումն ավարտվում է, և հանգուցյալի ընտանիքը  
շարունակում է սգալ տանը: Ստորև ներկայացված են թաղմանը  
հաջորդող ծեսերը:*



## ՄԱՍ ՄԵԿ

### «Երրորդին հանդիպելն» ու «յոթն անելը»

#### 1. «Երրորդին հանդիպելը»

Ձոհաբերության արարողությունը, որը կատարվում է մահվանից հետո երրորդ օրը, կոչվում է առաջին զոհաբերություն: Ըստ ավանդույթի՝ այն պետք է կատարվի երրորդ օրը, քանի որ տարածված կարծիքի համաձայն՝ հանգուցյալը մահից երեք օր անց բարձրանում է «տունը կարոտելու հարթակ» և իր տան կողմն է նայում: «Երրորդին հանդիպելը» և «Երրորդին ուղարկելը» արարողության երկու մասերն են, որոնք շատ կարևոր տեղ են զբաղեցնում թաղման ծեսերի շարքում և, հետևաբար, հանդիսավոր արարողություններ են: Մարդիկ հույս ունեն, որ այս արարողության ընթացքում հանգուցյալը հանդերձյալ աշխարհում ուտում է այն ուտելիքը, որով մահից հետո կերակրել են նրան: Միևնույն ժամանակ, նրանք արձաթ, ձիեր ու կառքեր են այրում, ինչը նույնպես հայտնի ավանդույթի մի մասն է:

Ըստ ժողովրդական լեգենդի՝ հոգիները պաշտոնապես հանդերձյալ աշխարհ են տեղափոխվում մահվանից երեք օր անց: Աստված, Բուդդան և աստծո կամ Բուդդայի աղջիկ ու տղա սուրհանդակը տանում են նրանց հոգիները: Ըստ բուդդայականության և դաուսիզմի՝ սա լինում է միայն բարի մարդկանց դեպքում: Բոլորը ցանկանում են, որ ընտանիքի անդամները դրախտ գնան, անմահանան կամ մահից հետո վերածնվեն մի որևէ լավ վայրում: Սակայն հավանականությունը մեծ է, որ մարդուն չի հաջողվի ամբողջ կյանքում կատարյալ վարք դրսևորել, ուստի երրորդ օրը, երբ հոգիները պաշտոնապես հեռանում են հանդերձյալ աշխարհ, բուդդայականներ են հրավիրվում՝ սուտրաներ երգելու և խոստովանություններ լսելու, որպեսզի հանգուցյա-



լը խոստովանի կենդանության օրոք իր գործած մեղքերը և արժանանա մեղքերը քավելու շնորհին. միայն այդ դեպքում Ամիթաբան Արևմտյան դրախտում կհանդիպի նրանց հոգիներին: Այսպիսով, «երրորդին ողջունելը» կամ «երրորդին հանդիպելը» ենթադրում է հանդիպում Բուդդայի հետ: Բուդդայականների կարծիքով՝ ցանկալի է սուտրաներ երգելով արդարացնել հանգուցյալին և փրկել «երեք բախտից» (դժոխք, քաղցած ուրվականներ և կենդանիներ). այս երևույթը հայտնի է «երրորդին հանդիպելու արժանիք» անունով: Հանգուցյալի երեխաներն ու երիտասարդ սերնդի ներկայացուցիչները պարտավոր են Արևմտյան դրախտ մեկնող հանգուցյալի համար պատրաստել արծաթե տուփեր, ձիեր ու կառքեր. այս ավանդույթը կոչվում է «ուղարկել երրորդին»: Այսպիսով, «երրորդին հանդիպելը» և «երրորդին ուղարկելը» նույն արարողության երկու մասերն են:



Արարողությունից առաջ սգո սրահից պատվիրում են թղթից տուփեր, ձիեր ու կառքեր: Դրանք ըստ չափսի, ոճի ու որակի բաժանվում են երեք կարգի: Առաջին կարգի նմուշները չափերով նման են իսկական ձիերի ու կառքերի: Ներսից ձևավորված են զարդանախշերով, ունեն ապակե պատուհաններ՝ ձմռանն օգտագործելու

համար, և ամպիովանիներ՝ ամռանն օգտագործելու համար: Կառքի առաջ մեծ սև ձի է, որին երիտասարդ է նստած: Կառքի ետևում սպասավոր կա: Կառքը կարելի է տեղաշարժել անիվներով. այս երևույթը կոչվում է «հատակի վրայով քարշ տալ»: Կառքն այնքան մանրամասն է պատրաստված, որ նույնիսկ այն մասերը, որոնք սովորաբար պատրաստվում են պղնձից, ոսկեգույն կամ արծաթագույն թղթից են: Բացի այդ, երկու թղթե մարդիկ ձեռքերի վրա տանում են չորս դրվագազարդ վարդագույն տուփ: Այս գործողությունը կոչվում է «տուփեր տեղափոխել»: Երկրորդ դասի առարկաները չափերով ավելի փոքր են, առանց նախշերի, անիվները պատրաստված են կաոյանի ցողուններից, կլոր են, միայն մի կողմից սոսնձված թղթով: Անիվների գամերը ներկված են ու անշարժ: Տուփերը մոնլաթից են, առանց նախշերի: Երրորդ կարգի կառքերը շատ փոքր են: Անիվները թղթի կտորից են, սոսնձված կառքի վրա: Կառքը պատրաստված է կաոյանի ցողուններից, տեղաշարժվում է թղթից դեղին ավանակի օգնությամբ: Ավանակին նստած մարդու պատկերը կտրվում է թղթից,

սոսնձվում ավանակի ոտքերից մեկին: Այս դեպքում մոնլաթից փոքր տուփերը միայն երկուսն են: Եթե հանգուցյալը կին է, բացի թղթից, պարզ առարկաներից պատրաստվում են նաև եղջերավոր անասունների պատկերներ: Ըստ հավատալիքի՝ կանայք կենդանության օրոք շատ ջուր են վատնում, ու եթե Դժոխքի թագավորը պատժի նրանց՝ ստիպելով կեղտոտ ջուր խմել, խոշոր եղջերավոր անասուններն օգնության կգան: Միևնույն ժամանակ, կառքի վրա պետք է լինի թղթից պատրաստված կին ծառա: Եթե հանգուցյալը մահացել է հիվանդությունից՝ ծննդաբերությունից հետո՝ առաջին ամսվա ընթացքում, ապա կառքին պետք է ավելացնել նաև ծածկ, որովհետև ըստ տարածված հավատալիքի՝ այս դեպքում նրա ուրվականը վերածվում է մեծ կարմիր ձվի, որը չի կարելի տանել որևէ տաճար, ուստի միակ բանը, որ կարելի է անել, այն ծածկի տակ թաքցնելն է:

Արարողության մեկնարկին հանգուցյալի ընտանիքի անդամները դռան դիմաց դասավորում են թղթե կառքերը, ձիերն ու տուփերը: Անհրաժեշտ է վարձել ուղեկցողի, որը կկասեցնի կործանարար ուժերի ազդեցությունը, ինչպիսիք են քամին, անձրևը կամ մարդածին վտանգները: Նախօրեին ընտանիքի անդամները հերթով կառքն ու տուփերը լցնում են թղթադրամներով, ապա այրում են դրանք և ոսկեգույն ու արծաթագույն նրբաթիթեղից պատրաստված մետաղադրամները, ապա մնացորդները կապում թղթե ժապավեններով: Եթե սուտրաները երգում են ցերեկը, ապա վանականները պետք է մակագրեն թղթե ժապավենները, այսինքն՝ սուտրաներ գրեն դրանց վրա: Ավելին, կառքի ետևից գնացող սպասավորը և տուփերը տանողները պետք է ունենան անուններ, օրինակ՝ Լի Ֆու, Վան Լու, Նանի Ջան. անունները պետք է գրվեն թղթե ժապավենների վրա և սոսնձվեն:

Այդ օրը զոհաբերության եկած ընկերներն ու հարազատները ժամանում են առավոտյան, իսկ հեռվում ապրողները հիմնականում կեսօրին են տեղ հասնում: Հյուրերին զբաղեցնելու համար տանտերը պատրաստում է որոշ ճաշատեսակներ, մասնավորապես՝ տապակած ուտեստներ և մակարոնեղեն՝ առանձին սոուսով: Սովորաբար լինում է չորս, իսկ որոշ դեպքերում՝ վեց կամ ութ ճաշատեսակ: Նույնիսկ հարուստ ընտանիքներում ամբողջ ճաշացանկը չպետք է պատրաստվի հենց այդ օրը:

Ընկերների և հարազատների կողմից որպես զոհաբերություն տրվող ընծաներն ընդհանրապես բաժանվում են երեք խմբի: Մեկ այլ խումբ են կազմում չորս գույնով ներկված ընծաները, մասնավորապես՝ երկար հոտավետ փայտեր, երկու սպիտակ մոմ, թղթից արծաթագույն մետաղադրամներ և այրվող թղթերի կույտ: Կարելի է նվերի փոխարեն գումար տալ. այս երևույթը հայտնի է «ծալված զոհաբերություն» անունով. փողը դրվում է ծրարի մեջ, սոսնձվում դեղին թղթով, ապա ծրարի վրա կապույտ

թանաքով գրվում է գունարի չափն ու «ծաված զոհաբերություն» բառերը: Նվերի տարբերակ է նաև մահճակալի ծածկոցը, ինչպես նաև այլ նվիրաբերություններ, որոնք դրվում են զոհասեղանի վրա, օրինակ՝ քաղցրավենիք ու մրգեր:

Յանկոուն արարողություն է, որը պետք է կատարել «երրորդի» ծեսի ընթացքում. այն հայտնի է «երրորդին հանդիպելու Յանկոու» անունով: Յանկոուն բուդդայական արարողություն է, որը ենթադրում է ուտելիք հյուրասիրել քաղցած ուրվականներին՝ հանգուցյալին փրկելու և աղետներից խուսափելու համար: Արարողության մասնակիցները պետք է իրեր այրեն, մասնավորապես՝ ատլասից ու թղթից պատրաստված ոսկեգույն ու արծաթագույն իրեր: Արարողությունը սովորաբար կատարվում է երեկոյան, երբ վառվում են լույսերը, և սկսվում է այն ժամանակ, երբ բուդդայականները դազադի առաջ սուտրաներ են երգում: Յանկոուն սովորաբար սկսվում է երեկոյան ժամը ութին կամ իննին և տևում է մինչև լուսաբաց:

Պատվո պահակախումբը, որը նախատեսված է «երրորդն ուղարկելու» համար, դասավորվում է հետևյալ կերպ. երեխաները քայլում են նվագախմբից առաջ, նրանց հետևում են ընկերներն ու հարազատները: Յուրաքանչյուրի ձեռքին սպիտակ թղթից լապտեր կամ երկար, այրվող հոտավետ փայտիկ է: Թղթե լապտերներն ու փայտերը պետք է նետել կրակի մեջ: Սգո երթի վերջում զույգերով քայլում են փարաջաներով վանականները և բուդդայականները՝ ձեռքներին երաժշտական գործիքներ: Շարքի ամենավերջին տեղը պահվում է վանականների առաջնորդի համար: Արարողության ընթացքում վանականներն ամբողջ ճանապարհին սուտրաներ երգելու փոխարեն նվագում են: Երաժշտությունը հասնում է գագաթնակետին, երբ նրանք սկսում են թղթե լապտերներ ու փայտեր այրել:

Արարողությունից վերադառնալուց հետո կատարվում է Յանկոու արարողությունը, որի ընթացքում հանգուցյալի հոգին ազատ է արձակվում: Յանկոուն այն արարողությունն է, որը կատարվում է վանականների կողմից, և որի ընթացքում ուտելիք է մատուցվում հոգուն և մյուս քաղցած ուրվականներին: Հետևաբար, վանականները պետք է մի կտոր քաղցրաբլիթ պոկեն ու զցեն գետնին, որպեսզի հանգուցյալն ուտի իր պատառը և չվերածվի քաղցած ուրվականի: «Թշնամության կապերը քանդելը» և «այս աշխարհի մարդկանց ցուցակը կազմելը» Յանկոուի երկու բաղադրիչներն են: «Թշնամության կապերը քանդելը» այն ծեսն է, երբ վանականներից յուրաքանչյուրին թույլ են տալիս քանդել «աբակուսի հանգուցը», որը կապել են ընտանիքի ամուսնացած դուստրերը. արարողությունը նպատակ ունի վերացնել հանգուցյալի ատելությունը և քավել մեղքե-

րը՝ ապահովելով նրա բարօրությունը հաջորդ կյանքում: Յանկուու արարողության ավարտից առաջ վանականների ղեկավարը կարդում է այս աշխարհում ապրողների անունները՝ հանգուցյալի երեխաների, մոտ հարազատների ու ընտանիքի անդամների ցուցակը, որպեսզի բոլորը սզան հանգուցյալի մահը: Ամբողջ ցուցակը կարդալուց հետո վանականը հնչեցնում է հանգուցյալի անունը, որպեսզի հոգին զոհաբերվի: Այս պահին բոլոր տղամարդիկ ու կանայք սկսում են հոնգուր-հոնգուր լաց լինել: Լացը, երաժշտական գործիքների հնչյուններն ու երգերը միաձուլվում են, հասնում գագաթնակետին, և հենց սրանով էլ ավարտվում է «երրորդին հանդիպելու» արարողությունը, այսինքն՝ Յանկուուն:




## 2. «Յոթն անելը»

Մարդու մահից հետո ընտանիքի անդամների կազմակերպած սգո արարողություններից մեկն էլ յուրաքանչյուր յոթ օրը մեկ զոհ մատուցելն է, որը հայտնի է «յոթն անել» անվանումով: «Յոթերորդ յոթը» վերջին «յոթն» է, կամ, այլ կերպ ասած՝ «յոթն անելու դադարեցումը»: Ամենահախումը «հինգերորդ յոթն» է: Սովորաբար դառիստներին հրավիրում են «հինգերորդ յոթ» արարողության ժամանակ երգելու. ընկերներն ու հա-

րազատները պետք է ժամանեն հանգուցյալի տուն՝ «հինգերորդ յոթի» ճաշկերույթը կազմակերպելու:

«Յոթն անելու» արարողության ընթացքում գոյություն ունեն բազմաթիվ մանրամասն մշակված ծեսեր, որոնք տարբեր են տարբեր վայրերում: Ըստ Գուանջոու տարածաշրջանի հին սգո ծեսերի՝ ամուսնացած աղջիկները պետք է վերադառնան հինգերորդ յոթին և վճարեն այդ օրվա բոլոր ծախսերը: Եթե հանգուցյալն ամուսնացած դուստր չունի, նրա ամուսնացած զարմուհին կամ զարմուհու դուստրը պետք է իրենց վրա վերցնեն այդ պարտականությունը: Հանգուցյալի մահից հետո առաջին, երրորդ և յոթերորդ յոթերը կոչվում են «մեծ յոթ»: Այս օրերին զոհաբերության ընթացքում գոյություն ունի այսպես կոչված «ընթացիկ յոթ» երևույթը. ամուսնացած դուստրերից և հարսերից յուրաքանչյուրը բարձրացնում է ձեռքի լապտերը, ապա արագ սլանում և մրցում, թե ով առաջինը տուն կհասնի: Ըստ հավատալիքի՝ այս արարողությունը, որն ընդհանրապես կոչվում է «մրցել՝ հերոսուհի դառնալու համար», օրհնություն է բերում հանգուցյալին:



«Յոթի արարողությունը» սովորաբար ղեկավարում են փեսաները: Բայց ավանդույթը տարբերվում է Ջեյծյան տարածաշրջանում: Հանջոուում փեսաները վարում են «հինգերորդ

յոթը», իսկ Լինանում և Նինբոյում՝ «վեցերորդ յոթը»: Բազմաթիվ վայրերում տարածված է «հինգերորդ յոթի» նախորդ գիշերն, այսպես կոչված՝ «տունը կարոտելու հարթակի» գաղափարը: Ասում են՝ հանգուցյալը միայն այդ օրն է գիտակցում իր մահը և հանդերձյալ աշխարհում բարձրանում է «տունը կարոտելու հարթակ»՝ այս աշխարհում մնացած իր ընտանիքի անդամներին, ընկերներին ու հարազատներին տեսնելու: Հանգջոուի ժողովուրդն այդ օրը սովորաբար դասավորում է հանգուցյալի մի քանի շոր, ապա ծածկում անձրևանոցով: Սուջոու շրջանում այդ օրը՝ ժամը երեքից մինչև հինգը երեխաները բացում են գլխավոր դուռը ու երեք անգամ գոռում դեպի արևնուտք՝ «այսինչ և այսինչ, վերադարձեք»: Հետո ող-



բուն են հուշատախտակի առաջ, մատուցում նախապես պատրաստած ուտեստներ ու գինի՝ որպես նվիրաբերություն: Այս գործողությունը հայտնի է նաև «ճաշ արևածագից առաջ» անունով: Արարողությունը կոչվում է նաև «լուսաբացից առաջ գոռալ»: Երբ արևը ծագում է, տանտերը կարգադրում է տնակ պատրաստել, որն ունի նախասրահ, ջրհոր, գազօջախներ, դռներ, պատուհաններ, ցանկապատված բակ և այլն: Մարդկանց այցելությունից հետո տունը պետք է այրվի ու մոխրանա: Ասում են, որ այսպես հանգուցյալը հանդերձյալ կյանքում տուն ունենալու հնարավորություն է ստանում. այս գործողությունը կոչվում է «պահուստների այրում»: Մեր ժամանակներում թղթե առարկաներ են այրում, որպեսզի հանգուցյալը «ժամանակակից» կյանքով ապրի: «Յոթի դադարեցումը» վրա է հասնում քառասունհիններորդ օրը, և տանտերն այս օրը համարում է սգո շրջանի ավարտ: «Յոթի դադարեցման» արարողությանը մասնակցում են ընկերներն ու հարազատները: Դադարեցումը ու վանականները հրավիրվում են երգի տոնը, որը նաև կոչվում է «խաղաղության և հանդարտության պահպանում»: Մինչ նրանք աղոթում են ողջերի համար, որդիներն ու դուստրերը հանում են սգավորի հագուստն ու երգից հետո դարձյալ հագնում առօրյա շորերը:

Զինաստանի հարավում ապրող որոշ ազգային փոքրամասնությունների կյանքում գոյություն ունի «հանգուցյալին զվարճացնելու» ավանդույթը, որը կատարվում է յոթի ընթացքում: Թուջիա ազգությունը կազմակերպում է մեծ արարողություն. յուրաքանչյուր տասներկու օրը մեկ մարդիկ արթուն նստում են դագաղի մոտ, իսկ դագաղը պահվում է տանը: Գյուղի և հարևան գյուղերի երիտասարդ տղամարդիկ և կանայք հավաքվում են սգավորի տան ետևում: Ամենատարբեր երաժշտական գործիքներ նվագելուց ու սգո պարեր կատարելուց հետո նրանք խոսում են սիրո մասին և կյանքի ընկեր են ընտրում: Սգո պար կատարելը նաև կոչվում է «վիշտն ու աղետը հեռացնելու» կամ «սգո թմբուկ խփել». սա էթնիկ պար է, որը հնարել է Բա ժողովուրդը՝ Թուջիայի նախնիները: Ավելի քան երկու հազար տարիների ընթացքում Թուջիայի զավակները սերնդեսերունդ փոխանցել են ավանդույթը: Սգո պարը սկսվում է մահից հետո, հատկապես տան ավագի մահվան առաջին գիշերը: Հրավիրված երաժիշտը միայնակ թմբուկ է խփում և հանդես է գալիս որպես հիմնական կատարող, իսկ հետվոկալ կատարումն ապահովում են ևս երկու երգիչներ: Նրանք մի քանի գիշեր երգում ու պարում են դագաղի շուրջ: Սգո պարը մեղմում է ընտանիքի որբացած անդամների վիշտը, թեթևացնում նրանց տխրությունը, որպեսզի նրանք շարունակեն սուգը, բայց ոչ առաջվա պես՝ ողբերգական ու ցավոտ:


## ՄԱՍ ԵՐԿՈՒ

### Սուգ պահելը ու սգո հանգերձանքի հինգ աստիճան

#### 1. Սուգ պահելը

Չուղարկավորությունը դեռ թաղման ավարտը չէ: Ընտանիքի անդամները, ինչպես նաև ընկերներն ու հարազատները պետք է սգավորի հագուստով շարունակեն սուգ պահել հանգուցյալի համար: Սուգ պահելու տևողությունը տարբեր է և կախված է նրանից, թե նրանք որքան մտերիմ են հանգուցյալի հետ: Այդ ընթացքում սգավորները պիտի հագնեն հատուկ սգալու համար կարված հագուստ և հետևեն առօրյա կյանքի ու հասարակական գործունեության որոշակի կանոնների՝ չափի մեջ շարունակելով սուգը:

Սուգ պահելու ժամանակահատվածը տարբեր է՝ երեք օրից մինչև մի քանի ամիս, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ երեք տարի՝ կախված արյունակցական, ամուսնական, ընկերական և քաղաքական կապերից: Առաջին հայացքից թվում է՝ սուգ պահելը կապված է միայն արյունակցական հարաբերությունների հետ: Սակայն այդպես չէ: Մի կողմից սգո տևողությունը կախված չէ միայն հանգուցյալի հետ մտերմության աստիճանից, և այս ավանդույթը պարունակում է որոշակի անհավասարություններ: Ըստ պատմական տվյալների՝ հոր թաղման արարողության ժամանակ որդին



պետք է կոպիտ գործվածքից անեզր /կամ՝ անկար/ հագուստ կրի, իսկ եթե հանգուցյալը մայրն է, ապա հագուստը պետք է կրի երեք տարի, եթե հայրն արդեն մահացած է, և մեկ տարի, եթե հայրը ողջ է: Եթե հանգուցյալն ամուսինն է, ապա կինը պետք է երեք տարի կրի կոպիտ գործվածքից անեզր հագուստ, իսկ եթե հանգուցյալը կինն է, ապա ամուսինը եզրակարով հագուստը պիտի կրի մեկ տարի: Մյուս կողմից, սգո տևողությունն ինչ-որ չափով արտացոլում է երկրի քաղաքական պահանջը: Ըստ ֆեոդալական



բարոյականության հիմնական սկզբունքների, որոնց ենթարկվում են բոլորը, կայսր թե պաշտոնյա, հայր թե որդի, ֆեոդալ արքայազն թե հասարակ մարդ՝ բոլորը պարտավոր էին կոպիտ գործվածքից անեզր հագուստ կրել կայսեր մահվան դեպքում, և եզրակարով հագուստ՝ կայսեր ծնողների, կնոջ, ավագ որդու ու հայրական կողմի պապիկ-տատիկների մահվան դեպքում:

## 2. Սգո հանդերձանքի հինգ աստիճան

Սգո հանդերձանք ասելով նկատի ունենք սգալու համար նախատեսված հագուստը, ինչպես նաև դրան համապատասխան առարկաներն ու լրացուցիչ պարագաները: Գոյություն ունի սգալու համար նախատեսված շորերի մի քանի տեսակ՝ կախված արյունակցական ու անուսնական հարաբերությունների աստիճանից: Սգո հանդերձանքի հնգաստիճան համակարգը, որը սկիզբ է առել Յին դինաստիային նախորդող շրջանում, գերակշռում էր հնագույն հասարակության մեջ և պահպանվել է մինչ օրս: Առաջին հայացքից համակարգը սգո հագուստն ու սուգը բաժանում է մի քանի կարգի՝ ըստ ազգակցական կապի: Սակայն իրական նպատակը ֆեոդալական հայրիշխանական տոհմային համակարգի պահպանումն է:



Ավանդաբար գոյություն ունի սգո հանդերձանքի հինգ տեսակ, մասնավորապես՝ կոպիտ գործվածքից անեզր հագուստ, կոպիտ գործվածքից եզրակարով հագուստ, կոպիտ կար, նուրբ կար, բարձրորակ կտավից հագուստ: Հագուստի այս հինգ տեսակները, որ կարված են տարբեր գործվածքի կտավից, տարբերվում են թե՛ ոճով, թե՛ կարով: Տարբեր են նաև դրանք կրելու ձևն ու տևողությունը: Սգո հագուստի ընտրությունը կախված է հանգուցյալի հետ մտերմության աստիճանից:

Կոպիտ գործվածքից հանդերձանքն ամենահանդիսավոր հագուստն է, որն արտահայտում է ամենախոր կսկիծը: Հագուստն անմշակ կտավից է, կոշտ ու առանց եզրերի: Քանդված եզրակարն ընդգծում է պաճուճանքի բացակայությունը: Հագուստի վերին մասի կարերը դրսից են, իսկ ստորին

մասինը՝ ներսից: Հագուստի ստորին մասը կազմված է դիմացի հատվածում երեք կտորից, ետևի հատվածում՝ չորս կտորից: Կրծքավանդակից կախված է կտորի մի շերտ, որը կոչվում է ցույ, ունի 20 սմ երկարություն և 13.3 սմ լայնություն: Հաստ կտորից գլխարկն ունի 10 սմ լայնություն և ծածկում է գլուխը: Ճակատից քիչ ցած կանեփաթելից պատրաստված պարան է կախվում, որ կոչվում է վու: Պարանի մնացած հատվածը, որ կախվում է ականջներից ցած, կոչվում է յին: Գլխին կապում են մեկ, իրանին՝ երկու ոլորված պարան: Այս պարանը կոչվում է դի: Ձեռքին պիտի լինի բամբուկի փայտ, անհրաժեշտ է կրել ծղոտից կամ կանեփաթելից սանդալներ: Կոպիտ գործվածքից անեզր հագուստ պետք է կրի հայրը՝ ավագ որդու մահվան դեպքում, հարսը՝ սկեսրայրի մահվան դեպքում, և կինն ու հարճերը՝ ամուսնու մահվան դեպքում: Քաղաքական հարաբերություններում այս հանդերձանքը կրում են ֆեոդալ արքայազններն ու պաշտոնյաները՝ կայսեր մահվան դեպքում:

Կոշտ գործվածքից եզրակարով հագուստը պակաս հանդիսավոր է, քան առանց եզրակարի հագուստը: Այն կտավից է, վերին և ստորին եզրերը կարված են, իսկ մյուս բոլոր առուններով նման է կոպիտ գործվածքից առանց եզրակարի հագուստին, բացառությամբ միայն այն ձևի, թե մարդիկ ինչպես են կրում վու, յին և դի ոճի հագուստը: Կոպիտ գործվածքից եզրակարով հագուստով սգալը տևում է երեք տարի, մեկ տարի, հինգ ամիս կամ երեք ամիս: Երեք տարի սգում են՝ որդին՝ մոր մահվան, մայրը՝ ամուսնու առաջին կնոջ ավագ որդու մահվան, հարսը՝ սկեսուրի մահվան դեպքում և այլն: Մեկ տարի սուգ են պահում՝ ամուսինը՝ կնոջ, խորթ մոր, հայրական կողմի տատիկ-պապիկների մահվան դեպքում և այլն: Ծոռը հինգ ամիս սգում է հայրական կողմի մեծ տատիկ-պապիկների մահը, իսկ թոռան թոռը երեք ամիս սգում է հայրական կողմի պապիկների ու տատիկների համար:

Կոպիտ կարով հագուստն այնքան հանդիսավոր չէ, որքան կոպիտ գործվածքից եզրակարով հագուստը: Այն մշակված կտավից է, սպիտակ է ու համեմատաբար ավելի հղկված: Ըստ կանոնների՝ պետք է ինը ամիս կրել այս հանդերձանքը հայրական կողմի զարմիկների, չամուսնացած կամ ամուսնացած քույրերի ու ամուսնացած հորաքույրների մահվան դեպքում կամ ամուսնացած դուստրերի կողմից՝ հորեղբայրների ու նրանց կանանց մահվան դեպքում և այլն:

Նուրբ կարը ավելի մշակված է ու մանրամասն, քան «կոպիտ կարը»: Այս հանդերձանքը մշակված կտավից է, ավելի լավ գործվածքից, քան կոպիտ կարով տարբերակը: Ըստ կանոնների՝ այն հինգ ամիս կրում են հոր հորեղբայրների ու նրանց կանանց, հայրական կողմի պապիկի եղբայրները:

րի թռռների, հորաքույրների դուստրերի, եղբայրների թռռների, հայրական կողմի զարմիկների որդիների, մայրական կողմի պապիկ-տատիկների, քեռիների ու մորաքույրների, զարմիկների մահվան դեպքում և այլն:

Բարձրորակ կտավից հագուստն ամենանուրբն է, կարված է հրաշալի մշակված կտավից: Կարվածքն ավելի լավն է, քան սգո հանդերձանքի՝ վերը նշված չորս տեսակները: Ըստ օրենքների՝ այն պետք է կրել երեք ամիս՝ մեծ պապիկի եղբայրների ու քույրերի, պապիկի եղբայրների ու քույրերի, թռռների թռռների, ծոռների ծոռների դուստրերի որդիների, հորաքույրների որդիների, քեռիների ու մորաքույրների, կնոջ ծնողների, փեսաների մահվան դեպքում և այլն:

Ըստ հնագույն սգո ծեսերի՝ սգավորները պետք է սահմանեն սննդի, հագուստի, ապաստանի ու տեղափոխության խիստ վերահսկողություն՝ ապրելով առօրյա պարզ կյանքով և ենթարկվելով սգո օրենքներին. այս գործողությունների համակարգը կոչվում է «կանոնների պահպանում»: Սգալու ընթացքում կանոններ պահողը սովորաբար ապրում է ժուժկալ վանականի կյանքով և այսպես կոչված «որդիական բարեպաշտությունը» արտահայտում ծայրահեղ ձևերով, ներառյալ ինքնավնասումը և սեփական մարդկային էության ճնշումը:

Ընտանիքի անդամի մահից հետո պետք է կրել ոչ թե ճոխ, այլ պարզ հագուստներ: Սգո պաշտոնական հագուստը պետք է հագնել դագաղի մեջ հանգուցյալին տեղավորելու հաջորդ օրը: Պաս պահելը նույնպես սգո օրենքների պահպանման կարևոր գործոն է: Որդիները չպիտի ուտեն կամ խմեն ծնողների մահից անմիջապես հետո՝ երեք օրվա ընթացքում, և դատարկ ստամոքսով սգան իրենց վիշտը: Հանգուցյալի դին դագաղի մեջ տեղավորելուց հետո միայն կարող են ուտել փոքր քանակությամբ շիլա, այսինքն՝ այն, ինչ անհրաժեշտ է մարմնի ֆիզիկական գոյությունը պահպանելու համար:


Եթե սգալու ընթացքում մարդիկ ցանկանում են համեղ ուտելիք համտեսել՝ խախտելով ծեսերը, հասարակությունը կքննադատի նրանց, կամ, նույնիսկ հնարավոր է, որ նրանք պատժվեն օրենքի ողջ խստությամբ: Նրանց տները պիտի լինեն պարզ, ոչ շատ շքեղ: Հուղարկավորությունից առաջ բանբուկից ծածկ է պատրաստվում միջին դրան առաջ, որպեսզի որդին ապրի այդտեղ. այսպիսի կացարանը կոչվում է «թեքված խրճիթ»: Խրճիթի ներքին կահավորումը պարզ է՝ ծղոտից խսիրը՝ մահճակալ, աղյուսի կտորը՝ բարձ: Որդին պետք է ապրի խճիթում, մեկուսի կյանքով, գիշեր ու ցերեկ լաց լինի և քնի շորերով: Որոշ դեպքերում որդին ապրում է ծածկի տակ, որը կոչվում է «գերեզմանի խրճիթ», և ծնողների հուղարկավորությունից հետո կանգնեցվում է գերեզմանի մոտակայքում:

## ՄԱՍ ԵՐԵՔ

### Գերեզման մաքրելը և նախնիների երկրպագությունը

#### 1. Գերեզման մաքրելը

Ձոհաբերությունը, որը սգո ծեսերի կարևոր մասն է, ընտանիքի հանգուցյալ անդամների հանդեպ զավակների բարեպաշտությունը ցուցադրելու և նրանց մահը սգալու հիմնական ձևն է: Հանգուցյալի մահը սգալու համար զոհաբերություն է կատարվում երեք տարի տևող սգի ընթացքում: Դրան հաջորդում է գերեզմանների ծխակարգային այցելությունը՝ ամեն տարի, որոշ տոն օրերի: Այս այցելությունն այլ կերպ կոչվում է նաև «գերեզմանի մաքրում»: Հին ժամանակներում մարդիկ բազմաթիվ ծեսեր էին կատարում գերեզմանը մաքրելիս, մասնավորապես՝ ծնկների վրա երկրպագելը, ձոնելը, մոլախոտը մաքրելը, հող ավելացնելը, թղթադրամ այրելը, կախելը և այլն, ինչը ներկայացնում էր հին ժողովրդի գերեզմանի զոհաբերության ողջ համայնապատկերը: Շատ սովորույթներ սերնդեսերունդ փոխանցվել են և մինչ օրս էլ կիրառվում են:



Գերեզմանները մաքրելու ընթացքում թղթադրամի օգտագործումը կապված է մանրամասն մշակված թղթաման արարողությունների անցկացնելու հնագույն ավանդույթի հետ: Հին ժամանակներում մարդիկ, առաջնորդվելով հոգևոր անմահության գաղափարով, հանգուցյալին վերաբերվում էին այնպես, ինչպես կվերա-

բերվեին, եթե նա ողջ լիներ: Նրանք կարծում էին, որ փողն օգտագործվում է նաև հանդերձյալ աշխարհում, ուստի հաճախ փող ու թանկարժեք զարդեղեն էին հողին հանձնում հանգուցյալի մարմնի հետ: Տին դինաստիային նախորդող շրջանում նույնպես փողը հողին էին հանձնում: Հան դինաստիայում ի հայտ եկավ այսպես կոչված «փող հանգուցյալի համար» հասկացությունը կամ յին, այսինքն՝ փող, որը պետք էր հողին հանձնել: Այն ձևով նման էր իսկական փողի, բայց փոքր էր, թեթև, անորակ և

գործնականում չէր կարող կիրառվել ողջերի կողմից: Թան դինաստիայում մետաղադրամը փոխարինվեց թղթադրամով: Իսկ թղթադրամը հիմնականում օգտագործվում էր սգո երթի և գերեզմանում զոհաբերության ժամանակ: Ի տարբերություն յի փողի՝ թղթադրամներն ավելի հաճախ այրում էին, քան հողին էին հանձնում: Գերեզմանը մաքրելիս փող այրելն արդեն իսկ գերակշռում էր Հին դինաստիաների ժամանակաշրջանում: Մինչ այդ ավելացել էին թղթադրամի տեսակներն ու ձևերը: Սույն դինաստիայից հետո թղթադրամի ձևն էլ ավելի բազմազան դարձավ, ի հայտ եկան կլոր, ձևով կոշիկ հիշեցնող ձուլակտորներ, թղթից վիշապ և այլն: Թղթադրամներ այրելը և կախելը դարձավ գերեզմանի մաքրման կարևոր փուլերից մեկը, իսկ որոշ վայրերում գերեզման մաքրելու գործընթացը կոչվում էր «փող այրել» կամ «փող կախել»:

## 2. Նախնիների երկրպագություն

Հնագույն ժամանակներից շինացիները հետևողական են ծնողների սգո ծեսերին ներկա լինելու հարցում և ակնածանքով են վերաբերվում նախնիների համար զոհ մատուցելու ավանդույթին: Նրանք երբեք չեն մոռանում երկրպագել նախնիներին տոների ընթացքում, ինչպիսին է, օրինակ, Գարնան տոնը: Չինացիները սովորաբար իրենց անկեղծությունն արտահայտում են ուտեստներով ու ծաղիկներով: Նախնիներին երկրպագելու ձևերը կարող են տարբեր լինել, իսկ նախնիների հիշատակը հարգելու կարևորությունն անփոփոխ է: Նախնիներին երկրպագելը կարևոր նշանակություն ունի զոհ մատուցելու ընտանեկան ավանդույթների մեջ: Ըստ ժողովրդական ընկալումների՝ նախնիներին պետք է երկրպագել նույն լրջությամբ, ինչ երկինքը, երկիրը, աստծուն ու Բուդդային: Պատճառն այն է, որ նախնիների հոգիներն անընդհատ հետևում են իրենց ժառանգներին և անհանգստանում են նրանց համար: Հետևաբար, այս աշխարհում մարդիկ պետք է աղոթեն ու զոհաբերության միջոցով հատուցեն նրանց պաշտպանության ու օրհնության դիմաց: Ուստի և նախնիների հիշատա-



տահայտում են ուտեստներով ու ծաղիկներով: Նախնիներին երկրպագելու ձևերը կարող են տարբեր լինել, իսկ նախնիների հիշատակը հարգելու կարևորությունն անփոփոխ է: Նախնիներին երկրպագելը կարևոր նշանակություն ունի զոհ մատուցելու ընտանեկան ավանդույթների մեջ: Ըստ ժողովրդական ընկալումների՝ նախնիներին պետք է երկրպագել նույն լրջությամբ, ինչ երկինքը, երկիրը, աստծուն ու Բուդդային: Պատճառն այն է, որ նախնիների հոգիներն անընդհատ հետևում են իրենց ժառանգներին և անհանգստանում են նրանց համար: Հետևաբար, այս աշխարհում մարդիկ պետք է աղոթեն ու զոհաբերության միջոցով հատուցեն նրանց պաշտպանության ու օրհնության դիմաց: Ուստի և նախնիների հիշատա-



կին արված երկրպագությունը պարտադիր պայման է Գարնան փառատոնի ընթացքում, որի նպատակը զավակների ոգեշնչելն է: Տեղական ավանդույթների տարբերության պատճառով որոշ վայրերում երկրպագությունը կատարվում է Նոր տարվա նախօրեին՝ ճաշից առաջ, այլ վայրերում՝ Նոր տարվա նախօրեին, կեսգիշերին, ուրիշ տեղերում էլ՝ Նոր տարվա օրը՝ առավոտյան: Չինաստանի Թայվանում, տարվա մեջ վերջին անգամ նախնիների երկրպագում են Նոր տարվա նախօրեին: Որոշ վայրերում Նոր տարվա առաջին օրը տանը երկրպագելուց հետո պետք է երկրպագություն կատարել նաև տոհմական սրահում: Ոմանք այցելում են գերեզմաններ, ինչը հայտնի է «զոհաբերություն գերեզմանոցում» անունով, և ներառում է հիմնականում փայտեր այրելը, զոհ մատուցելն ու ծնկի իջած երկրպագելը: Արդի ժամանակներում երկրպագությունը սովորաբար կատարում են ընտանիքի անդամները, գերեզմանոցում:

Չին ժամանակներում գերիշխող դեր ունեին նախնիների երկրպագության ծեսերը: Ծեսերի տարբերությունները պայմանավորված էին տեղական սովորույթների տարբերությամբ: Ոմանք նախընտրում էին նախնիներին երկրպագել բաց երկնքի տակ՝ գերեզմանոցում, ոմանք՝ տոհմական տաճարում, մինչդեռ մեծամասնությունը երկրպագում էր տանը. կենտրոնական սրահում տեղադրում էին նախնիների հուշատախտակները, հյուրասիրություն մատուցում, ապա հոտավետ փայտեր առաջարկում ու ծնկի իջած երկրպագում՝ ըստ տարիքային հաջորդականության: Հան դինաստիայում մարդկանց մեծամասնությունը ճոխ մսային ու ձկնային ճաշատեսակներ էր պատրաստում նախնիների երկրպագության օրերին: Ներքին Մոնղոլիայում ընդունված էր կարագով տապակած դեղին բրնձից ալյուր: Մանջուրիայում ընկույզով փխրուն կարկանդակներ, կաչուն բրնձից խմորեղեն, խնձոր, սպիտակ մոմեր ու սանդալի փայտիկներ էին նվիրաբերում նախնիներին, ինչը յուրահատուկ հանդարտություն ու հանդիսավորություն էր հաղորդում ծեսին:

Չոհաբերության ծեսերը ներառում են նաև հոտավետ փայտեր, առարկաներ, ուտելիք ու թեյ հյուրասիրելը, մետաքս, գինի, ուտելիքով լի արկղեր, միս նվիրաբերելը, օրհնության ելույթներով հանդես գալը, զոհաբե-

կանքներ, ուտելիք ու թեյ հյուրասիրելը, մետաքս, գինի, ուտելիքով լի արկղեր, միս նվիրաբերելը, օրհնության ելույթներով հանդես գալը, զոհաբե-

րության համար իրեր այրելը, հրաժեշտ տալը և ծնկի իջած երկրպագելը: Որոշ վայրերում մետաքսի կտորներ ու թղթադրամներ այրելու ընթացքում ծեսը կատարողը պետք է մի բաժակ գինի առաջարկեր հոգիներին, ապա գինին պիտի լցվեր այն վայրում, որտեղ նրա օգնականն այրում էր մետաքսի կտորներն ու թղթադրամները: Գինին պետք էր լցնել չինական տառանշանի տեսքով, որը նշանակում էր «սիրտ», և սա զոհաբերության անկեղծության ապացույց էր: Չոհաբերության հիմնական փուլերն ուղեկցվում էին կոչնագանգ ու թմբուկ զարկելով կամ լարային երաժշտությամբ, որն ավելի էր աշխուժացնում մթնոլորտը: Արարողությունից հետո մասնակիցներին հյուրասիրում էին խոզի և գառան միս, կամ զվարճացնում էին նրանց, ապա հյուրասիրությունը բաժանում միայն մի քանի մարդկանց՝ զոհաբերության կազմակերպիչներին, երիտասարդ ազնվականներին ու տարեցներին:

Նոր տարվա նախօրեին երկրպագելը, որը սերնդեսերունդ փոխանցված չինական ավանդույթ է, երկու ծագում ունի: Ըստ առաջին վարկածի՝ այն ծագել է ավանդական հասկացություններից, այն է՝ «որդիական բարեպաշտությունը կարևորագույն արժանիքն է» և «պետք է հետևողական լինել ծնողների թաղման ծեսերին մասնակցելու հարցում և ակնածանքով վերաբերվել նախնիներին զոհաբերություն մատուցելուն»: Ըստ երկրորդ տարածված կարծիքի՝ նախնիները պաշտպանում են ժառանգներին և բարեկեցություն բերում նրանց: Այս սովորույթը փոխանցվել է սերնդեսերունդ: Մարդիկ զոհաբերության արարողությունները մշտապես կատարում են Նոր տարվա նախօրեին՝ այդպիսով արտահայտելով իրենց երախտագիտությունը, վառ պահելով նախնիների հիշատակը և աղոթելով օրհնություն ստանալու համար: Նախկինում երկրպագությունը սովորաբար կատարվում էր ընտանիքի տոհմական սրահում, Նոր տարվա նախօրեին՝ կեսօրին: Ընտանեկան նույն կլանի անդամները հատուկ հագուստ էին կրում հանդիսավոր արարողության ժամանակ: Մեր օրերում հասարակ մարդիկ երկրպագության ընտանեկան ճաշկերույթից առաջ լավ գինի ու համեղ ուտելիք էին մատուցում տանը՝ սրբապատկերի առաջ:

## ԳԼՈՒԽ ԶՈՐՍ ԹԱՂՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՁԵՎԵՐ

*Չինաստանը հինգ հազար տարվա քաղաքակրթության կրող է: Պատմական զարգացման երկարատև ժամանակահատվածում ձևավորվել են թաղման ամենատարբեր ձևեր՝ շնորհիվ բազմազան կրոնների ու հավատալիքների, որոնք ի հայտ են եկել Չինաստանի աշխարհագրական միջավայրի ձևափոխմանը զուգահեռ: Բացի հուղարկավորությունից, որը թաղման ամենատարածված ձևն է, գոյություն ունի նաև դիակիզում, թաղում ջրի մեջ, երկնային թաղում, թաղում ժայռերում, թաղում ծառերի մեջ, թաղում պագոդայում և այլն:*



## ՄԱՍ ՄԵԿ

### Հուղարկավորություն և դիակիզում

#### 1. Հուղարկավորություն

Հուղարկավորությունը՝ դին հողին հանձնելը, որն ամենից հաճախ կիրառվող թաղման ձևն է, լայն տարածում ուներ ոչ միայն Հան դինաստիայի ներկայացուցիչների, այլև բազմաթիվ փոքրամասնությունների շրջանում:



Ըստ հնագիտական հետազոտությունների՝ հուղարկավորությունը ծագել է քարանձավներում բնակվող առաջին մարդկանց շրջանում: Քանի որ հնագույն մարդիկ ի վիճակի չէին դիմակայել բնական աղետներին, մեծամասնությունն ապրում էր քարանձավներում: Երբ մեկը մահանում էր, փոս էին փորում ու հանգուցյալին հուղարկավորում քարանձավի մոտ: Ժամանակի ընթացքում հողը փորելու և հանգուցյալների մարմինները հողին հանձնելու սովորույթը զարգացավ և կոչվեց հուղարկավորություն:

Կլանային ցեղերի առաջացմանը զուգահեռ մարդիկ հասկացան, որ կարելի է հանգուցյալ հարազատներին հողին հանձնել որոշակի հաստատված վայրում՝ գերեզմանոցում: Ավելի ուշ, երբ մարդիկ բնակություն էին հաստատում նոր վայրում, առաջին բանը, որի մասին մտածում էին, ընտանեկան գերեզմանոցի համար հատուկ տեղ ընտրելն էր: Ընտանեկան գերեզմանատների հսկողությունն ուժեղացնելու համար նույն տոհմական համայնքի մարդիկ վարձում էին հատուկ պատրաստված անձնակազմ, որը պետք է պաշտպաներ գերեզմանոցը պատահական և անժանոք մարդկանց մուտք գործելուց և գերեզմանները ոչնչացնելուց:

Սկզբում գերեզմանների մասշտաբները փոքր էին: Հիմնականում տա-

րածքում փորվում էր ուղղանկյուն փոս, ապա հանգուցյալի մարմինը անհրաժեշտ իրերի հետ տեղադրվում էր փոսի մեջ: Հետո փոսը լցնում էին հողով, որը նախապես փորվում էր: Այս ողջ գործընթացը շատ պարզ էր: Ավելի ուշ՝ հասարակական դասերի առաջացմանը զուգահեռ, տոհմի ներսում որոշ մարդիկ աստիճանաբար հարստացան և ավելի մեծ նյութական հարստություն ձեռք բերեցին: Ազնվականի իրենց կարգավիճակը ցուցադրելու նպատակով նրանք հաճախ ավելի լավ տեղ էին ընտրում գերեզմանոցի համար: Նախընտրում էին ավելի մեծ ու խոր փոսեր փորել, քան ուրիշներինն էր՝ դրանով ցուցադրելով իրենց հարստությունը: Դա արվում էր՝ ելնելով երկու նկատառումից: Նախ, որքան մեծ էր փոսը, այնքան շատ առարկաներ կարելի էր թաղել: Երկրորդ, զույգերի համատեղ հուղարկավորության և ողջերին զոհաբերելու համակարգն այն ժամանակ արդեն իսկ մեծ տարածում էր գտել: Ձույգերի համատեղ հուղարկավորությունն այն դեպքն էր, երբ տղամարդու մահվան դեպքում նրա գերեզմանոցում տեղ էր պահվում կնոջ համար, և հակառակը: Ողջերին զոհաբերելը նշանակում էր՝ նրանց, թաղման այլ պարագաների պես, ողջ-ողջ հողին հանձնել հանգուցյալի հետ:

Երբ Հին Չինաստանը թևակոխեց մի ժամանակաշրջան, երբ գերիշխում էր ստրկատիրական հասարակարգը, սկսեցին ձևավորվել հասարակական դասերը: Ինչ վերաբերում է ղեկավար դասին, ապա դրա ներկայացուցիչները ձեռք բերեցին ոչ միայն մեծ հարստություն ու իշխանություն, այլև մեծ թվով ստրուկներ: Ստրուկները ստրկատերերի սեփականությունն էին և ցանկության դեպքում կարող էին շահագործվել կամ նույնիսկ սպանվել: Հետևաբար, երբ ստրկատերը մահանում էր, ստրուկները ցանկացած հանգամանքում պարտավոր էին ենթարկվել իրենց ճակատագրի վերաբերյալ տիրոջ որոշմանը, և հետևաբար, շատերը զոհաբերվում էին: Չինաստանում ֆեոդալական դարաշրջանում ստրուկների և ստրկատերերի երկու հակադիր դասակարգերը վերացան, և կայսրերի մահվան դեպքում այլևս մարդկային զոհեր չէին մատուցում: Բայց գոյություն ունեին բացառություններ: Յուան դինաստիայի ժամանակներում մոնղոլները դեռևս պահպանում էին ողջ մարդկանց զոհաբերելու սովորույթը: Յուան դինաստիայի ազդեցության շրջանում՝ Մին դինաստիայի սկզբում, կայսրերի մահվան դեպքում զոհաբերում էին հարձերին: Սակայն այս սովորույթը շուտով դադարեց կիրառվել, որովհետև այն չափազանց դաժան էր և հակասում էր կոնֆուցիականության հիմնական նորմերին:

Հողին հանձնելու սովորույթը շարունակաբար զարգանում էր. դրան զուգահեռ զարգանում էին նաև թաղման ծավալներն ու գործընթացները տարբեր պատմական ժամանակաշրջաններում: Չինական կայսրերի

դամբարանները համարվում էին խոշորագույն գերեզմանատեղիներ: Հին Չինաստանում միայն կայսրերն ու թագավորական պաշտոնյաները կարող էին մահից հետո դամբարան ունենալ: Հասարակ մարդկանց մեծ մասին հողին էին հանձնում փոքր փոսում, իսկ փոսի վրա հողից բլրաթունք էին պատրաստում: Սակայն թագավորական գերեզմանոցները հսկայական չափերի էին: Օրինակ, Ցին Շիհան կայսեր դամբարանը զբաղեցնում է 56.25 քառակուսի կիլոմետր տարածք, որը 78 անգամ գերազանցում է Արգելված քաղաքի տարածքը: Դամբարանը ոչ միայն շրջապատված էր բարձր պատերով, այլև ծածկված էր հսկայական հողաթմբով. կառուցման պահին բարձրությունը հասնում էր 115 մետրի և, հնէաբանների չափումների համաձայն, համարժեք էր 39-հարկանի շենքի, իսկ հեռվից բնական բարձրության սար էր հիշեցնում: Դամբարանում մարդկային զոհեր չէին մատուցում, բայց կայսեր փառասիրությունը բավարարելու նպատակով Ցին Շիհուանը ողջ երկրի բանվորներին հրամայել էր պատրաստել թրծակավից զինվորներ ու ձիեր, որոնք իրական չափերով կավից կերպարներ էին: Թրծակավից զինվորներն ու ձիերը շատ տարբեր էին՝ ձի հեծած զինվորներ, զինված հետևակ և կառքեր նստած զինվորներ: Դրանցից յուրաքանչյուրի դեմքի արտահայտությունը յուրահատուկ էր: Ոմանք փակ բերանով էին, ոմանք՝ փոքր-ինչ բաց բերանով, ոմանք կարծես գոռում էին, ասես ճակատամարտի էին մասնակցում: Հան դինաստիայից հետո կայսերական դամբարանները ներառում էին ոչ միայն հսկայական ստորերկրյա շինություններ, այլևս շքեղ վերգետնյա շենքեր: Կառույցի վրա ծախսվող միջոցները խնայելու համար Թան դինաստիայից հետո կայսերական դամբարանների մեծ մասը կառուցվում էր սարերի ստորոտին, իսկ վերգետնյա շինությունները սար էին հիշեցնում: Դամբարանների կառույցներն ունեին ճշգրիտ նախագիծ, հսկայական ծավալներ, շքեղ տեսք և և աչքի էին ընկնում բացառիկ վարպետությամբ:



Արտադրողական ուժերի զարգացման ու բնական միջավայրի փոփոխությունների հետ մեկտեղ հին չինացիները շարունակաբար բարեփո-

խում էին արդեն իսկ գոյություն ունեցող և թաղման համար նախատեսված հարմարանքները, ինչը պայմանավորված էր ժողովրդի շրջանում հուղարկավորության հենց այս ձևի տարածմամբ: Չնայած բոլոր դարաշրջաններում հուղարկավորությունների ժամանակ օգտագործվում էին գերազանցապես փայտե դագաղներ, Չինաստանի որոշ շրջաններում տարածվեցին նաև դագաղների այլ տարբերակներ: Որոշ դեպքերում դրանք պատրաստվում էին բամբուկից, քարից կամ ճենապակուց: Ճենապակուց դագաղները նույնքան կամ գուցե ավելի երկար պատմություն ունեն, քան փայտե դագաղները:

## 2. Դիակիզում

Դիակիզումը դին այրելն ու մոխրացնելն է, որից հետո մոխիրը տեղավորում են աճյունասափորի մեջ, հանձնում հողին կամ շաղ տալիս ջրի մեջ կամ օդում: Ավանդական չինական մշակույթի ազդեցության ներքո չինացիների մեծ մասն ընդունեց հուղարկավորությունը, իսկ դիակիզումը չկարողացավ գերիշխող դիրք գրավել: Միայն քսաներորդ դարում մարդիկ հասկացան, թե ինչ է դիակիզումը, և ընդունեցին այն: Այնուամենայնիվ, դիակիզումը երկար պատմություն ունի Չինաստանում: Պատմաբանները հաստատում են, որ այն չինական փոքրամասնությունների շրջանում ընդունված է եղել դեռևս Ջոու դինաստիայում: Հյուսիսային Չինաստանի փոքրամասնությունների մեծ մասը քոչվորներ էին: Ի տարբերություն Հան դինաստիայի բնակիչների, որոնք վաղուց ագարակատերեր էին, որոշ քոչվոր ցեղեր ստիպված էին փոխել բնակության վայրերը՝ կլիմայական և շրջակա միջավայրի փոփոխությունների պատճառով: Շարունակական միգրացիայի հետևանքով նրանք, ի տարբերություն Հան դինաստիայի ժողովրդի, չէին կարողանում որոշակի վայրերում գերեզմանոցներ կառուցել և գոհ մատուցել իրենց հարազատներին: Ուստի նրանք նախընտրում էին դիակիզումը, հարազատների աճյունամոխիրը լցնում էին աճյունասափորի մեջ և տեղից տեղ տանում իրենց հետ՝ աղոթելով ու խնդրելով նախնիների օրհնությունը:

Բուդդայականությունը Չինաստան ներմուծվեց Հան դինաստիայից հետո: Մահից հետո ավագ քահանաների դիակիզումը բուդդայական ծես էր: Այս ավանդույթը դեռևս գոյություն ունի մեր օրերում, Ջիուհուա սարում՝ Անհուեյ գավառի Չիջոու քաղաքում, որը Չինաստանի ամենահայտնի բուդդայական սրբազան սարերից է: Վանականի մահից հետո նրա մարմինը տեղադրում էին կավից մեծ կիսատակառի մեջ, նստած դիրքում, ոտքերը խաչաձև ծալած, ապա մարմնի շուրջ լցնում էին փայտ ու քարա-

ծուխ: Ի վերջո, տակառը փակում էին և յոթ օր պահում: Տակառի տակ անցք էին բացում փայտն այրելու համար: Յոթ օր հետո հիշատակի մեծ արարողություն էր կազմակերպվում հանգուցյալ վանականի պատվին, որից հետո տակառը դրվում էր վառելափայտի վրա, ու



նարմինն այրվում էր: Այս բուդդայական ավանդույթը շուտով լայն տարածում գտավ հասարակ մարդկանց շրջանում:

Դիակիզումն աստիճանաբար տարածում գտավ Սուն դինաստիայում՝ Չանի քաղաքային ու գյուղական շրջաններում: Այն ժամանակ բարձր դասի ներկայացուցիչների մեծ մասը, որը հավատում էր բուդդայականությանը, մահից հետո նախընտրում էր դիակիզումը: Կառավարությունը նույնիսկ հատուկ հրամանագիր էր արձակել, որը հասարակ մարդկանց շրջանում արգելում էր դիակիզումը, ինչը նշանակում էր, որ դիակիզումը լայն տարածում ուներ: Գոյություն ուներ դիակիզման երկու հիմնական տեսակ. մեկը՝ աճյունամոխիրը տեղավորում էին խեցուց սափորի կամ փայտե արկղի մեջ, ապա հողին հանձնում: Երկրորդ տեսակը ենթադրում էր աճ-



յունամոխիրը գետը լցնել: Ինչպես ցույց են տալիս պատմական արձանագրությունները, Չարավային Սուն դինաստիայի Ջյանսու գավառի Սուջոու քաղաքում մարդիկ դիակիզում էին հանգուցյալ հարազատներին և հա-



ճախ դիակիզման համար գնում էին քաղաքի արվարձաններ: Ընտանիքի անդամի մահից հետո տանը կազմակերպվում էր հիշատակի արարողություն, ապա մարմինն ուղարկում էին դիակիզարան՝ այրելու: Այնտեղ չոր վառելափայտից կույտ էին անում, մարմինը տեղադրում փայտի վրա, ապա կերոսին լցնում ու այրում: Դիակիզումից հետո դեռևս մնում էին ոսկրային մնացորդներ. հարազատները հավաքում էին դրանք, հանձնում տաճարի վանականներին, որոնք սուտրաներ երգելով՝ քավում էին հանգուցյալի մեղքերը: Ի վերջո, մասունքները լցնում էին գետը:

Յուան դինաստիայում Հաները սովորաբար դիակիզում կատարում էին մոնղոլական քոչվորական ցեղերի ազդեցության ներքո: Այն ժամանակ կառավարությունը դիակիզման համար հատուկ տեղեր էր առանձնացնում մեծ քաղաքների արվարձաններում կամ տաճարների մոտակայքում: Յուան դինաստիայում մասունքները տնօրինելու ձևերը տարբերվում էին Սուև դինաստիայի ավանդույթից: Այդ ձևերից մեկն էր՝ մասունքները տեղավորել փայտե արկղի մեջ, ապա այրել գերեզմանում: Միայն հարուստ ընտանիքները կարող էին իրենց թույլ տալ այս կերպ պահպանել ու հողին հանձնել մասունքները: Աղքատ ընտանիքները նույնպես դիակիզում էին կատարում բուդդայականության ազդեցության ներքո, բայց ոմանք գերեզմանաքարեր էին տեղադրում հանգուցյալի հիշատակին: Հատկանշական է, որ բոլոր պեղված աճյունատուփերն աչքի են ընկնում բացառիկ ոճով ու ձևավորմամբ: Վերցնենք, օրինակ, Գուանդունում հայտնաբերված աճյունատուփերը: Դրանցից մի քանիսը խեցուց պատրաստված քառակուսի տուփեր էին, մյուսները վրանի տեսք ունեին: Տուփերի վրա նրբագեղ նախշեր են, օրինակ՝ ծաղիկներ, մարդկային կերպարներ, քրիզանթեմներ, որոնք խորհրդանշում են ազնվություն ու երկարակեցություն, և հետևաբար, նկարագարված են տուփերի մեծ մասի վրա: Սակայն որոշ վայրերում պեղված աճյունատուփերը զարդարված են աստվածների կամ ուրվականների նկարներով, ինչը զուցե կապված էր տեղական հավատալիքների կամ լեգենդների հետ: Մյուս ձևը մասունքները տաճարներում կամ սրահներում թողնելն էր, ուստի հաճախ տաճարներ էին կառուցվում աճյունատուփերը տեղավորելու համար: Որոշ վայրերում, իհարկե, հանգուցյալի մասունքները պահվում էին տանը: Չինացիները լրջորեն են վերաբերվում որդիական բարեպաշտությանը, ուստի հատուկ հարգանք էին տածում հանգուցյալի մասունքների հանդեպ, և արգելված էր մասունքներից կամայականորեն ազատվելը: Սակայն որոշ աղքատ ընտանիքներ չէին կարող իրենց թույլ տալ հանգուցյալին հողին հանձնելու շնայությունը: Ուստի, բարոյականության սկզբունքները պահպանելու նպատակով, որոշ հարուստ ինտելեկտուալներ հավաքեցին միանման նպատակ ու

մտածողությունն ունեցող մարդկանց և ստեղծեցին հատուկ ընկերակցություն, որն անվճար դազադ էր տրամադրում նրանց, ովքեր ի վիճակի չէին գնել այն: Իսկ մասունքները պահելու համար կառուցվեցին հատուկ սրահներ կամ պագոդաներ: Եթե չէր հաջողվում գտնել հանգուցյալի հարազատներին, կամ օտարերկրացի որևէ գործարար հանկարծամահ էր լինում Չինաստանում՝ հայրենիքից հեռու, ընկերակցությունը որոշակի գումար էր նախատեսում թաղման արարողության կամ դիակիզման համար: Մասունքները պահպանվում էին սրահներում և սպասում էին հարազատներին, որոնք գալիս ու տանում էին դրանք: Իսկ մյուս միջոցը մասունքները վայրի բնությանը կամ ջրին հանձնելն էր, որին դիմում էին միայն ամենաաղքատ ընտանիքները: Բացի գետերից, որոշ վայրերում մասունքները շաղ էին տալիս հատուկ այդ նպատակով ստեղծած արհեստական լճերում: Սակայն այս մոտեցումը հաճախ դատապարտվում էր հասարակական բարոյականության տեսանկյունից: Յուան դինաստիայի օրոք հայտնի իտալացի վաճառական և զբոսաշրջիկ Մարկո Պոլոն ճամփորդեց դեպի Չինաստան: Նա ականատես էր եղել դիակիզման և նկարագրել այն իր հայտնի գրքում՝ «Մարկո Պոլոյի ճանապարհորդությունները»: Նա գրում է. «Երբ ճամփորդում էի Չանցոուում, տեսա, թե տեղացիներն ինչպես էին սգո արարողություն կատարում: Բոլորը սգում էին ու տարբեր երաժշտական գործիքներ նվագում: Իսկ երբ հասան դիակիզման վայրը, այրեցին դին ու մի շարք առարկաներ, օրինակ՝ թղթից ձիեր ու մետաքս»:

Մին դինաստիայում կառավարությունն ուժեղացրեց վերահսկողությունը դիակիզման գործընթացի նկատմամբ: Ապա դիակիզման դեպքերը նվազեցին քաղաքացիների շրջանում: Ցին դինաստիայում պատահում էին երեխաների դիակիզման դեպքեր: Երբ երկու-երեք տարեկան երեխան մահանում էր հիանդությունից, մարմինն այրում էին դաշտում, իսկ քամին քշում-տանում էր մասունքները: Տեղացիներն անում էին դա՝ չարիքն արմատախիլ անելու նպատակով, քանի որ մանկահասակ երեխայի մահը համարվում էր չարագուշակ նշան, իսկ մասունքները հողին հանձնելը՝ ուրիշ երեխաների առողջ մանկությունն ապահովելու միակ միջոց: Ըստ էության, դիակիզումը տարածված էր ոչ միայն Չան դինաստիայում, այլև հարավարևմտյան Չինաստանի բազմաթիվ փոքրամասնությունների շրջանում՝ Ցյան, Տիբեթյան, Յին և այլն: Ներկայում կառավարությունը դիակիզումը համարում է լայնորեն ընդունված, գիտական, մաքուր ու տնտեսող միջոց: Քանի որ աշխարհի բնակչությունը շարունակաբար ավելանում է, դիակիզումը կարող է զգալիորեն խնայել հողերը, ուստիև ընդունված է աշխարհի բազմաթիվ այլ երկրներում:

## ՄԱՍ ԵՐԿՈՒ

### Հուղարկավորություն ջրի մեջ և երկնքում

#### 1. Թաղում ջրի մեջ

Մարմինը ջրին հանձնելը, որը տարածված էր միայն առափնյա տարածքներում, թաղման յուրահատուկ ձև է և իրենից ներկայացնում է հանգուցյալի մարմինը գետերին, լճերին ու ծովերին հանձնելը: Այն տարածված է հատկապես ձկնորսների կամ նավաստիների շրջանում, որոնք ապրում են առափնյա գոտիներում, ինչպիսիք են, օրինակ, Գուանդուն և Ֆուջյան գավառները: Հանգուցյալի մարմինը դնում էին անմիջապես ծովի մեջ, կամ էլ տեղավորում էին դագաղում ու թողնում լողափին, որպեսզի ալիքի բարձրանալուն պես այն լողա դեպի ծովը: Բացի այս մեթոդից, գոյություն ուներ նաև մարմինը ջրին հանձնելու մեկ այլ մեթոդ, որի դեպքում մասունքները նետվում էին ծովը: Սուն և Յուան դինաստիաներում անդրծովյան բիզնեսը ծաղկում էր, և բազմաթիվ մարդիկ մեկնում էին արտասահման՝ գործարարությամբ զբաղվելու: Նրանցից շատերն այդ ընթացքում մահանում էին: Հանգուցյալների մարմինը տուն վերադարձնելու հետ կապված դժվարություններն էլ պատճառ դարձան թաղման այս ձևի, որի ժամանակ այրում էին հանգուցյալի դին և մասունքները տեղավորում դագաղի մեջ, ապա դագաղը նետում ծովը:

Ջրային թաղումը տարածված էր տիբեթցիների շրջանում, որոնք բնակվում էին Չինաստանի արևմտյան սահմանների մոտ: Ըստ տիբեթցիների ավանդական ընկալման՝ ջրի մեջ թաղումը հանգուցյալին հրաժեշտ տալու շատ պարզ ձև էր: Վարակիչ հիվանդություններից մահացած երեխաների և մեծահասակների հուղարկավորությունն արգելված էր, և նրանց մասունքները չէր կարելի նաև թաղել ընտանեկան գերեզմանոցում, որովհետև ըստ տիբեթյան ժողովրդի կրոնական ընկալումների՝ նրանց մարմինները մաքուր չէին: Հետևաբար, ջրային թաղումը միակ տարբերակն էր նրանց համար: Բացի այդ, այն ընդունված էր մուրացկանների ու ամուրիների մեծ մասի, ինչպես նաև այն կանանց դեպքում, որոնք մահացել էին ծննդաբերության ժամանակ:

Ջրային թաղման ձևերը տարբեր են՝ պայմանավորված տարբեր վայրերի աշխարհագրական միջավայրով ու կրոնական հավատալիքներով: Տեսակներից մեկը կոչվում է «գետի հոսանքով գնալ»։ սա այն մեթոդն է, երբ դին տեղադրում են հատուկ նավակի մեջ և թողնում, որ այն լողա գետն ի



վար: Այս պրակտիկան հուշում է, որ հանգուցյալը ծնվել է բնությունից, հետևաբար վերադառնում է բնությանը: Երկրորդ ձևը կոչվում է «սուզվել գետի հատակը»: այս դեպքում հանգուցյալի մարմինը մասնատում են կամ փաթաթում ու կապում մեծ քարերին, ապա նետում գետը՝ Գետերի աստծուն երկրպագելու: Հարուստ ընտանիքները հրավիրում են Լամաների, որոնք մեղքից ազատում են հանգուցյալի հոգին, իսկ աղքատ ընտանիքները չեն կարող իրենց թույլ տալ այդ շռայլությունը: Երրորդ ձևը կոչվում է «մասունքները գետի մեջ շաղ տալ»: սա նշանակում է դիակիզումից հետո մասունքները շաղ տալ գետերի, լճերի կամ ծովի ջրերում: Թաղման այս ձևը խիստ տարածված է Չինաստանի որոշ հարավային քաղաքներում, քանի որ այնտեղ բազմաթիվ գետեր ու լճեր կան: Մասունքները գետերի մեջ շաղ տալը լավագույն ձևն է, քանի որ պետք չէ հատուկ տեղ առանձնացնել դրանք պահելու համար, կարիք չկա վարելահող զբաղեցնել՝ հողին հանձնելու համար, ինչպես նաև ընտանիքի անդամների ու հարազատների ուսերից վերցնում է զոհաբերություն անելու բեռն ու գերեզմանը մաքրելու պարտականությունը: Որպես թաղման համեմատաբար պարզունակ ձև՝ այն մի ժամանակ համարվում էր վատ սովորույթ և խստորեն վերահսկվում էր, որովհետև ուներ ջրերն աղտոտելու միտում:

## 2. Երկնային թաղում

Երկնային թաղումը, որը նաև անվանում են թռչնի թաղում, տարածված է տիբեթցիների, մոնղոլների ու որոշ այլ ազգային փոքրամասնությունների շրջանում: Հին ժամանակներում պատերազմի հետևանքով ստեղծված քառսային իրավիճակի պատճառով մարդիկ ի վիճակի չէին հողին հանձնել հանգուցյալին: Արդյունքում, դիերը թողնում էին վայրի բնության գրկում, թռչուններին ու գազաններին ի կեր: Տիբեթցիները, որոնք ապրում էին Ցինհայ-Տիբեթյան բարձրավանդակում, ունեին հանգուցյալի երկնային թաղումը կազմակերպելու ավանդույթ: Այն արձանագրված էր պատմական գրականության մեջ. երբ տիբեթցի էր մահանում, անկախ սեռից ու տարիքից, մարմինը փաթաթում էին մի ժամանակ նրա կրած հագուստով, ապա տեղավորում խսիրե պարկի մեջ: Մի քանի օր անց ուղարկում էին հատուկ վայր՝ երկնային թաղումը կազմակերպելու համար:

Երկնային թաղման ողջ ընթացքն արձանագրվել է, մասնավորապես, «Տիբեթի բնական պայմաններն ու հասարակական սովորույթները» գրքում: Նկարագրված է երկնային թաղումը Տիբեթյան գյուղերից մեկում: Ըստ նկարագրության՝ շամանն ու նրա հետևորդները հանգուցյալի մարմինը տանում են բլրի կողմն ու տեղադրում քարե սեղանի վրա: Հանգուց-

#### ԳՈՆԳ ՔԻԱՆԳ

յալի ընտանիքի անդամները մոտակայքում կաթով թեյ են եփում: Ըստ հավատալիքի՝ եթե սրբազան թռչունը հոշոտի հանգուցյալի մարմինը, ուրեմն մարդը կենդանության օրոք շատ մեղքեր չի գործել, և հոգին կարող է դրախտ տեղափոխվել: Եթե թռչունը չի հոշոտում հանգուցյալի մարմինը, ուրեմն մարդն այնքան մեղք է գործել, որ դրախտ ուղևորվելու հավանականությունը փոքր է: Ուստի երկնային թաղումը սովորաբար կատարվում է վաղ առավոտյան, որպեսզի թռչունները շատ քաղցած լինեն և հոշոտեն հանգուցյալի մարմինը:



Ավանդաբար, որպես հանգուցյալի մահվան համար սուգն արտահայտելու մի ձև, ընտանիքի անդամները կտրատում են հանգուցյալի շորերը, մարմինը տեղավորում կքանստած դիրքում ու ծածկում վերմակով, ապա ամուր կապում ու երեք օր պահում տանը: Չորրորդ օրը մարմինը դուրս են բերում տնից՝ երկնային թաղմանը նախապատրաստելու: Տիբեթցիները երկնային թաղման կազմակերպչին կոչում էին «երկնային թաղման վարպետ»: Թաղման սկզբում ավանդական տիբեթյան հագուստով որոշ վարպետներ մաքրում էին ձեռքերը, կարգի բերում շորերը և կանգնում քարե սեղանի դիմաց: Ապա հանում էին դանակները, կտրատում մարմինը՝ միաժամանակ սուտրաներ երգելով, որի նպատակը հոգիները մեղքերից ազատելն էր: Ապա կտրատված մարմինը նետում էին բլրի լանջին:

Մինչ վարպետները կտրատում էին հանգուցյալի մարմինը, մյուսները կրակ էին վառում սարահարթում՝ երկնային թաղմանը նախապատրաստվելով, որպեսզի հոգին ծխի հետ բարձրանա վեր՝ դեպի երկինք: Ըստ տիբեթյան ավանդույթների՝ այս պրակտիկան նպատակ ուներ հրավեր ուղարկել և գրավել թռչունների ուշադրությունը: Երբ թռչուններն հոշոտում էին հանգուցյալի մարմինը, վարպետը հավաքում էր բոլոր գործիքները, լվանում ձեռքերը և թեյ խմում, որը նախօրոք արդեն պատրաստվել էր նրա համար: Երկնային թաղման ողջ գործընթացն այդ պահին համարվում էր ավարտված:

## ՄԱՍ ԵՐԵՔ

### Թաղում ժայռերում և ծառերի տակ

#### 1. Թաղում ժայռերում

Ժայռերում թաղումը չհինական սզո մշակույթի ամենայուրահատուկ ծեսերից է: Այն իրենից ներկայացնում է հետևյալ պատկերը. դին տեղավորում են դագաղի մեջ, ապա կախում ժայռից: Թաղման այս մեթոդն այնքան յուրահատուկ ու առեղծվածային է, որ դրա որոշ մանրամասներ մինչ օրս



էլ հակասական զգացողություններ են առաջացնում հետազոտողների մեջ: Թաղման այս մեթոդը խիստ տարածված է Հարավային Չինաստանում, որտեղ աշխարհագրական հիմնական առանձնահատկությունները սարերն են, իսկ շատ տարածքների բնորոշ է կարստային լանդշաֆտը: Այս տարածքում ապրում են բազմաթիվ ազգություններ, և նրանց մեծամասնությունը պահպանում է Նուո մշակույթը: Ըստ պատմական հետազոտությունների՝ թաղման այս եղանակի ներմուծումն այս տարածք հավանաբար կապված է նախնիների հավատքի հետ: Ի լրումն դրա, տեղի աշխարհագրական պայմանները շատ հարմար են հանգուցյալին ժայռերում թաղելու համար: Ըստ տեղական ավանդույթի՝ որքան բարձր էր դագաղը, այնքան ավելի մեծ էր հանգուցյալի հանդեպ հարգանքը: Վերջին տարիներից հնէաբանները Ջյանսիում, Ֆուծյանում, Գուանդունում և որոշ այլ գավառներում հայտնաբերել են բազմաթիվ կախված դագաղներ: Ֆուլջյան գավառի Ույի սարում հնագետները հայտնաբերել են տեսքով նավ հիշեցնող անխաթար դագաղ, որն ենթադրաբար պատկանում է Գարնան և աշնան ժամանակաշրջանին կամ Պատերազմող պետությունների ժամանակաշրջանին: Ձևով նավ հիշեցնող դագաղի մեջ հայտնաբերվել են կտորեղեն ու բազմաթիվ առարկաներ, որոնք ժամանակին օգտագործել

#### ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

Էր հանգուցյալը: Դագաղը պատրաստված է ամբողջական փորված ծառից փորելու արդյունքում: Այսօր դրա վրա դեռևս նշնարվում են որոշ չինական տառեր:



Գետամերձ և ափամերձ ժայռերը հարմար վայր են թաղման այս մեթոդի համար: Դագաղների մեծ մասը տեղադրվում էր ջրից մոտ տասը մետր բարձրության վրա, սակայն լինում էին նաև դեպքեր, երբ դագաղը տեղադրվում էր ջրից ավելի քան հարյուր մետր բարձրության վրա: Ֆուչյան գա-

վառի Չունան կոմսությունում դագաղների մեծ մասը տարածված է Սին գետի ափերին, Ջյանսի գավառի Գուիսի կոմսությունում՝ Սին գետի ափերին, իսկ Ջեյձյան գավառի Սուիչան կոմսությունում՝ Օու գետի ափերին: Գոյություն ունի ժայռերում թաղման երեք տեսակ: Առաջինի դեպքում դագաղի մի եզրը դրվում է բնական քարանձավի կամ ապառաժի ճաքերի մեջ, իսկ մյուս եզրն ամրացվում է ցցին: Երկրորդ տարբերակում առափնյա ժայռի բնական քարանձավը ձևափոխվում է, ապա դագաղը տեղավորվում է քարանձավի ներսում: Երրորդի դեպքում գետափնյա ժայռի մեջ փորվում է 1-1.5 մետր լայնությամբ քառակուսի անցք և դագաղը տեղավորվում է այնտեղ:

Հանգուցյալին ժայռերում թաղելը բավական դժվար էր. հաճախ նման անցքեր փորելը չափազանց վտանգավոր էր, հատկապես նկատի առնելով այն փաստը, որ գործընթացն իրականացնում էին ժայռահեղ ցածր արտադրողական ուժերով: Փորձագետներն ու գիտնականները դեռևս համակողմանի հետազոտություններ են կատարում այն հարցի շուրջ, թե մարդկանց ինչպես է հաջողվել իրականացնել այս խնդիրը: Ինչպես հաստատում են պատմական փաստաթղթերը, անցքերի մեծ մասը փորվում էր ներքևից: Անցքի չափսը համապատասխանում էր դագաղի չափսերին: Անկասկած, այս գործն արվում էր մի խումբ մարդկանց կողմից, քանի որ անհնար էր մեկ-մեկնակ բարձրացնել հարյուրավոր ֆունտեր կշռող դագաղը: Ընդհանրապես այդ գործի համար պահանջվում էին նույն տոհմի հարազատների ու այլ անդամների համատեղ ջանքերը: Այս դեպքում յուրա-

հատուկ էր նաև դագաղի ձևը. դագաղների մեծ մասը նավ էր հիշեցնում: Ըստ հնագիտական փաստաթղթերի՝ նավ հիշեցնող դագաղների պատրաստումը պայմանավորված է տեղացիների նախնիների ծովային կյանքով: Այն վայրերում, որտեղ տարածված էր թաղման ժայռային ձևը, մարդիկ ապրում էին ջրերի մոտ կամ զբաղվում էին ձկնորսությամբ: Նրանք հաճախ խմբերով դուրս էին գալիս ծով՝ ձուկ որսալու, և շատերը մահանում էին հենց նավի վրա: Ուստի, նավի տեսք ունեցող դագաղներն ուղղակի կապ ունեն նախնիների ծավալած գործունեության հետ: Ի լրումն դրա, լայնամասշտաբ հնագիտական և ազգաբանական հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ սերտ կապ կա նավերի և ժայռերում թաղումը լայնորեն կիրառող ազգությունների միջև: Նավի տեսքով դագաղները փաստում են այս տարածքներում նավերի լայն կիրառությունը:

## 2. Թաղում ծառերի վրա

Թաղման այս ձևը, որը երկար պատմություն ունի, կապված է լայն դաշտերում կամ հեռավոր սարերում ապրող հոմինիդների հետ: Այսպես կոչված «ծառային թաղումն» իրենից ներկայացնում է հետևյալ գործընթացը. հանգուցյալի մարմինը տեղադրում են ծառի վրա և



թողնում, որ այն քայքայվի: Ըստ պատմական գրքերի՝ ծառերի վրա թաղումը լայնորեն տարածված էր Կիթան հնագույն էթնիկ խմբում, որի ներկայացուցիչները Սուև դինաստիայում ապրում էին Չինաստանի հյուսիսային շրջաններում: Եթե Կիթան ընտանիքի անդամներից մեկը մահանում էր, նախ և առաջ կազմակերպվում էր հրաժեշտի արարողություն, ապա դին փաթաթում էին կտորի մեջ ու թողնում բարձր սարերում՝ ծառի վրա: Դիակի քայքայումից երեք տարի անց անհրաժեշտ էր այրել ոսկորները:

Անշուշտ, տարբեր պատմական ժամանակաշրջաններում, տարբեր վայրերում ու ազգային խմբերում գոյություն ունեին թաղման բազմազան



#### ԳՈՆԳ ՔԻԱՆԳ

ձևեր: Ծառերի վրա թաղման ձևը բազմազան է տարբեր շրջաններում ու էթնիկական խմբերում: Գոյություն ունի երեք հիմնական ձև: Առաջինը՝ հանգուցյալի մարմինն ուղղակիորեն դրվում է ծառի ճյուղերի վրա. սա թաղման ամենապարզ ձևն է: Հարավային Չինաստանի որոշ փոքրամասնությունների շրջանում հանգուցյալի մարմինը դնում են ծառի վրա, և թողնում այնքան, մինչև այն վերածվում է մոմիայի: Մյուս ձևը հանգուցյալի մարմինը ծառին կապելն է: Գուլիջուու գավառի ազգային փոքրամասնություններում հանգուցյալի ամբողջ մարմինը փաթաթում էին խաղողի որթերով, ապա կապում ծառին: Երրորդ ձևը հանգուցյալի մարմինը ծառի բնական ճեղքում կամ դանակներով ու կացնով փորված ճեղքում տեղադրելն էր: Չինաստանի հյուսիսարևելյան շրջանի օրոցեն ազգության տեղաբնակները ծառի մեջ մեծ անցք են բացում, որտեղ էլ տեղադրվում է հանգուցյալի մարմինը:



Ինչպես ցույց է տալիս թաղման այս ձևի մասին հնագույն պատմությունը, մարդիկ այն նախընտրում էին հիմնականում, որովհետև ծառը շատ կարևոր դեր ուներ նրանց ավանդույթներում: Հնագույն ժամանակներում, արտադրողական ուժերի սահմանափակ քանակի

պատճառով մարդիկ ի վիճակի չէին խորությամբ հասկանալ բնությունը: Պարզ մարդիկ կարծում էին, թե ամեն ինչ հոգի ունի, և պետք է երկրպագել հոգին: Հետևաբար, ծառերի, քամու, ամպրոպի ու կայծակի երկրպագությունը վերածվեց զրհաբերության առարկայի:

## ԳԼՈՒԽ ԶԻՆԳ ՍԳՈ ՄՇԱԿՈՒՅԹ

Հնագույն ժամանակներից ի վեր Չինաստանը ձևավորել է միայն իրեն հատուկ սգո մշակույթ, որը ներառում է թե՛ ազգային մշակույթի էությունը, և թե՛ ֆեոդալական հասարակության մնացորդները, հատկապես ստորակարգությունը (հիերարխիա) և սնահավատությունը, որոնք գոյություն ունեին չինական ֆեոդալական հասարակության մեջ: Թաղումը հոգու գաղափարի արդյունքն է: Հոգու գաղափարն արտացոլված է հոգու հավերժության հանդեպ հավատի մեջ: Ընդունված է, որ հոգին անմահ է և կարող է օրհնել ժառանգներին: Այս գաղափարը ծնունդ տվեց բարդ ու մանրամասն մշակված թաղման արարողություններ և ճոխ ու երկարատև գոհաբերություններ կատարելու չինական յուրահատուկ ավանդույթներին:

## ՄԱՍ ՄԵԿ

### Հրաշագործներ և կախարդություն

#### 1. Դիակ տեղափոխողներն Արևմտյան Հունան գավառում

Չինաստանի Հունան նահանգի արևմուտքը կոչվում է «Արևմտյան Սյան»: Այս նահանգում գոյություն ունի շատ յուրահատուկ ու տարօրինակ մասնագիտություն, որը հանգուցյալների մարմիններին ստիպում է կանգնել ու քայլել սեփական ոտքերի վրա, նրանց հնարավորություն է տալիս ապրել հյուրանոցներում կամ նույնիսկ ոտքով վերադառնալ ծննդավայր, որը մի քանի հարյուր մղոն հեռավորության վրա է: Այս մասնագիտությամբ զբաղվող մարդկանց անվանում են «դիակը տեղափոխողներ», իսկ այս սարսափելի կախարդությունը հայտնի է «դիակների տեղափոխում» անունով:

Ավանդական չինական մշակույթում մարդիկ խորապես կապված են իրենց ծննդավայրի հետ: Մահվան մահճում նրանք մշտապես ցանկանում են վերադառնալ բնօրրան, ուստի տոհմական գերեզմանոցում հողին հանձնվելը դառնում է հայրենի քաղաքից հեռու մեռնող մարդկանց ամենանվիրական ցանկությունը: Քանի որ Արևմտյան Սյան տարածաշրջանում գերիշխում են բարձր լեռնաշղթաները, զառիվայր արահետներն ու ջրվեժները, երթևեկությունն այստեղ կաթվածահար է լինում աղքատիկ բնական միջավայրի պատճառով: Տեղական երթևեկության սուղ պայմանների արդյունքում էլ ի հայտ է եկել այս հատուկ մասնագիտությունը, որը կոչվում է «դիակ տեղափոխող»:

Այս մասնագիտության տեր մարդիկ, որոնք ճամփորդում են տարբեր վայրեր, պետք է օժտված լինեն մի շարք որակներով: Նախ, պետք է բավականաչափ քաջ ու համարձակ լինեն, որ մթության մեջ հոգ տանեն դիակներին: Եթե մարդը զուրկ է այդ որակից, ուրեմն հարմար չէ այս աշխատանքի համար: Երկրորդ, փոխադրողը պետք է ունենա ամուր առողջություն: Այս մասնագետները սովորաբար ապրում են դրսում և ստիպված են դիմակայել ճամփորդության դժվարություններին: Ուստի պիտի ուժեղ և առողջ լինեն: Երրորդ, անհրաժեշտ է, որ այս մարդիկ տոգել լինեն, այնքան տոգել, որ նրանց հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ մարդիկ սարսափեն և չհամարձակվեն երկրորդ անգամ հայացք նետել նրանց վրա: Ըստ տարածված կարծիքի՝ այս առանձնահատկությունը որոշակի հանդիսավորություն է հաղորդում մարդուն: Դիակը փոխադրողները եր-



բեք պատահական աշակերտներ չեն ընտրում: Եթե որևէ մեկը ցանկանում է աշակերտ դառնալ, նախ, պետք է ներկայացնի ձեռագիր երաշխավորագիր ծնողների կողմից, ապա նրան աշխատանքի վերցնողը պիտի անձամբ հարցազրույց վարի նրա հետ: Ընդհանրապես, աշակերտը պետք է լինի արական սեռի, տասնվեց տարեկանից բարձր և մոտ 170 սանտիմետր հասակով: Հարցազրույցի առաջին փուլից հետո փոխադրողը ընտրված աշակերտին խնդրում է նայել երկինք՝ արևին, իսկ հետո պտտվել, ապա անսպասելի կանգ առնել: Նա պիտի կարողանա պահպանել հավասարակշռությունը: Բոլոր նրանք, որոնց չի հաջողվի անել դա, աշխատանքի չեն ընդունվի, քանի որ գիշերը դիակն ինչ-որ տեղ տանելիս չեն կողմնորոշվի ճանապարհներից: Ապա նրանցից պահանջվում է ուսերի վրա կրել տարբեր առարկաներ, որի միջոցով ստուգում են նրանց ֆիզիկական ուժը: Ի վերջո, թեկնածուին առաջարկվում է ևս մի փորձություն, որի ժամանակ փոխադրողը փյունիկ ծառի տերև է դնում հեռավոր սարի վրա գտնվող գերեզմանին ու աշակերտին խնդրում է մեն-մենակ գնալ այնտեղ ու բերել տերևը: Միայն այսպես աշակերտը կապացուցի, որ բավականաչափ խիզախ է այս գործով զբաղվելու համար: Փորձությունների բոլոր փուլերն անցնելուց հետո աշակերտը կարող է պաշտոնապես աշխատանքի անցնել՝ որպես դիակ փոխադրող:

Արևմտյան Սյանի տարբեր շրջաններում այս գործի մեթոդները տարբեր են: Սակայն դրանք բնութագրվում են մեկ ընդհանուր առանձնահատկությամբ. ողջ գործընթացը՝ դին դագաղից դուրս բերելուց մինչև այն իր վերջնական հանգրվանում՝ գերեզմանի մեջ տեղավորելը, կատարում է դիակը փոխադրողը, մեն-մենակ: Հարազատների ներկայությունն արգելված է: Դին բարձրացնելուց հետո սովորաբար վարորդը բերանը լցնում է կախարդական ջրով ու ջուրը ցողում հանգուցյալի դեմքին: Ապա դիակը սկսում է ցատկոտելով հետևել վարորդին այնպես, ասես կյանք է վերադարձել: Դագաղի մեջ տեղադրելն էլ գրեթե նույնն կերպ է ընթանում և տարբերվում է միայն նրանով, որ դիակ փոխադրողը կախարդական ջուր չի ցողում ու չի վերացնում հմայությունը, մինչ դին ամբողջությամբ տեղավորվում է դագաղի մեջ:

Արևմտյան Սյանում գոյություն ունի հետևյալ խոսքը՝ «երեք դիակ տար, երեք դիակ՝ մի տար»: Այն դիակները, որոնք գլխատված են (նրանց տեղափոխում էին միայն գլուխը մարմնին կարելուց հետո) կախված կան ցմահ բանտարկված, կարելի է տեղափոխել, որովհետև նրանք ինքնական չէին մահացել: Քանի որ այս մարդիկ կարոտում են իրենց ծննդավայրն ու ընտանիքի անդամներին, կախարդանքով կարելի է հետ կանչել նրանց հոգիները, ապա հմայախոսքերի միջոցով հոգիները պահել մար-

միճակների մեջ: Կախարդության ազդեցության տակ նրանք կարող են մագլցել բլուրներն ի վեր և նույնիսկ նավով կտրել-անցնել գետերը, որպեսզի վերջապես վերադառնան ծննդավայր: Սակայն չէր կարելի տեղափոխել հիվանդությունից, խեղդամահ լինելու կամ կախվելու միջոցով ինքնասպան եղած, կայծակից կամ հրդեհից մահացած մարդկանց, որոնց մարմինը լիարժեք չէր, որովհետև առաջին կարգի հոգիներին տանում էր Դժոխքի արքան, երկրորդ կարգի հոգիներն էլ դառնում էին մահվան դատապարտվածների փոխարինողներ: Կայծակի հարվածից սպանվածները համարվում էին մեղսագործներ, իսկ այրվածների ու այրվածքից մահացածների մաշկն ու մարմինն ամբողջական չէին լինում:

## 2. Նուռ պարի կախարդները

Նուռն հնագույն արարողություն է, որը ներառում է աստվածությանը հանդիպելու և ուրվականներին քշելու գաղափարը: Արարողության ընթացքում պետք է կատարել Նուռ պարը, որն առաջացել է պարզ կախարդությունից և երկար պատմություն է ունեցել բազմաթիվ ազգություններում: Պարողը դիմակ է կրում, իսկ ձեռքին զենք է, որը նախատեսված է ուրվականներին քշելու և աղոթքի միջոցով օրհնություն խնդրելու համար: Թուջիա ազգության սգո ծեսերի համաձայն՝ սգո արարողությունը կատարվում է գլխավոր սրահում, իսկ առջևում զոհասեղան է կառուցվում: Ջոհասեղանի վրա թղթից երկու մարդ է տեղադրվում՝ Նուռ աստվածն ու աստվածուհին, որոնք համարվում են Թուջիայի նախնիները: Գիշերը առաջնորդը, երկար, նեղ դրոշը, կոչնազանգը, ցիմբալը կամ Սուռնան ձեռքին, առաջնորդում է չորս մարդու, պտտվում դագաղի շուրջը, իսկ հետո դուրս է գալիս կենտրոնական սրահից՝ պարն ու երգը շարունակելու: Այդ ժամանակ տանտերը կարող է հրավառություն կազմակերպել՝ թե՛ աստվածներին, թե՛ մարդկանց զվարճացնելու, ինչպես նաև հոգիները քավարանից ազատելու ու չար ուժերին քշելու համար: Այդ ընթացքում մարդիկ գյուղի ճանապարհի մոտ՝ բաց տարածքում, բամբուկի փայտից Նայիե կամուրջ են կառուցում: Կամրջի տակ սգո պար ու բեմականացում են կազմակերպում հանգուցյալի ու նախնիների պատվին: Ապա արարողությունը վարողի առաջնորդությամբ անցնում են կամրջով՝ ճանապարհ բացելով հոգու համար, ինչը նշանակում է, որ հանգուցյալները գնում են երկինք, որտեղ ապրելու են երջանիկ կյանքով: Թուջիայում մահը գնահատվում է. տեղացիներն այն համարում են մի ուրիշ կյանքի սկիզբ: Չետևաբար, եթե ընտանիքում յոթ տարեկանից ցածր թոռ կա, թոռն ու նրա մայրը պետք է միայնակ անցնեն կամուրջը, ինչը ենթադրում է նոր կյանքի սկիզբ ու ընտանիքի բարգավաճում:

## ՄԱՍ ԵՐԿՈՒ

### Գերեզմանոց և գերեզմանատուն

#### 1. Ականավոր մարդկանց գերեզմանատները

Կայսերական դամբարան

Սիա, Շան և Ջոու դինաստիաներից սկսած՝ կայսրերը գերազույն իշխանություն ունեին: Բոլոր մարդիկ, հողերն ու գետերը պատկանում էին նրանց: Նրանք անառարկելի հեղինակություն էին և ցանկության դեպքում կարող էին տնօրինել հասարակ մարդկանց կյանքը: Կենդանության օրոք ողջ փառքն ու շռայլությունը վայելելուց հետո նրանք չէին զրկվում այն առավելությունից, որը մահից հետո հասու չէր ուրիշներին: Դա կայսրերի յուրահատուկ սգո մշակույթն էր:

Դամբարան բառի չինական տառերը բաղկացած են երկու մասից՝ լին և ցին: Լին ի սկզբանե նշանակում էր բլուր: Շան դինաստիայից սկսած՝ կայսրերն իրենց սեփական կայսերական գերեզմաններն ունեին: Պատերազմող պետությունների



ժամանաշրջանից դրանք կոչվում էին «լին»: Կայսերական դամբարանների համակարգը հնագույն կայսրերի մենաշնորհն էր: Նրանք կառուցում էին հսկայական դամբարաններ, որոնք մահից հետո հանգստի վայր պիտի լինեին: Դամբարանի կառուցապատման աշխատանքները սովորաբար վաղ էին սկսվում և բավական երկար էին տևում: Հիմնականում կայսրերը դեռ կենդանության օրոք էին սկսում կառուցել իրենց գերեզմանները: Այդպես էր ընդունված Ցին դինաստիայում: Ցին Շիհուան կայսրն իր դամբարանը սկսեց կառուցել թագավորության առաջին տարում: Կայսերական գերեզմանների վրա խոյացող կառույցներն այնքան մասշտաբային են, որ չափերով համարյա հավասար են կայսերական պալատի: Ցինին նախորդող ժամանակաշրջանում կայսերական գերեզմանների մո-

տակայքում կառուցվել են հատուկ շինություններ: Օրինակ՝ ամբիոնների ավերակներ և սյուների փոսեր են հայտնաբերվել Շան դինաստիայի գերեզմանների հնագիտական պեղումների ընթացքում: Պատերազմող պետությունների ժամանակաշրջանից հետո կառուցվում էին բարձր դամբարաններ, իսկ գերեզմանի վրա վեր խոյացող կառույցներն ավելի փառահեղ էին, ինչն արտացոլում էր արտադրողական ուժերի առաջընթացը:

Ցին շինությունն առաջին անգամ կառուցվել է Ցին դինաստիայից հետո: Սկզբում Ցինն օգտագործվում էր թագուհիների ու հարձերի առօրյա կյանքի համար: Այն առանձնացված էր Չաոյից, որտեղ կայսրը հանդիպում էր պաշտոնյաներին և զբաղվում կառավարական հարցերով: Տոհմական տաճարը Չաոյի և Ցինի ոճի նմանակումն էր: Տաճարները կից սենյակներով կառույցներ են, իսկ Ցիներում կից սենյակներ չկան:



Կայսերական դամբարանային համակարգում մեծ կարևորություն է տրվում դամբարանի տեղի ընտրությանը. դամբարանը Ֆենշույ (գեոմանտիկ նշան) գերեզմանի կատարյալ օրինակն է: Թան և Սուն դինաստիաներում կայսրերը շատ

էին կարևորում Ֆենշույը: Պատմական արձանագրությունների համաձայն՝ մի օր կայսր Թան Սյուանցունը մեկնում է Շաանսի գավառի Պուչեն քաղաք՝ հոր՝ Ռույցունի Ցիաոլին դամբարանին այցելության: Երբ հասնում է քաղաքի հյուսիսարևելյան հատվածում վեր խոյացող Ջինսու սարին, որոշում է, որ մահից հետո հենց այդտեղ պիտի թաղվի: Եվ ահա կառուցվում է Թայլինը՝ Թան Սյուանցուն կայսեր դամբարանը: Ֆենշույը շատ ավելի գերիշխող դարձավ Սուն դինաստիայում: Գոյություն ունեին կայսերական աստղագետներ, որոնք պատասխանատու էին թագավորական ընտանիքի դամբարանների՝ Ֆենշույի համար: Ցինդունլին դամբարանի տեղի ընտրությունն իսկական լեգենդ է: Ըստ «Ցինի պատմության ուրվագծեր» գրքի՝ Ցինդունլին դամբարանի տեղն ընտրել է անձամբ կայսր Շունցին: Մի անգամ Շունցի կայսրը գնում է Ցունհուայի Չանգուոյ սարը՝ որսի: Տեղի գեղատեսիլ բնությունն ապշեցնում է նրան, և նա այս հազվադեպ ու շքեղ վայրը դիտարկում է Ֆենշույի տեսնակյունից: Ապա ասում է

իրեն շրջապատող նախարարներին. «Այս տեղանքն արքայական է ու գերազանց՝ Ֆենշույի տեսանկյունից: Հենց այստեղ էլ կարելի է դամբարան կառուցել մահից հետո: Ապա նետ է արձակում ու ասում իր սպասավորին. «Ուր որ ընկավ նետը, հենց այդտեղ էլ պիտի լինի իմ գերեզմանափոսը»: Հետագայում Ֆենշույի վարպետներն ուսումնասիրում են տեղանքը և պարզում, որ այն կատարյալ է Ֆենշույի տեսանկյունից: Հենց այդտեղ էլ կառուցվում է Շունցի կայսեր դամբարանը:

Կայսերական դամբարանների Ֆենշույը կարևոր նշանակություն ունեւր դեռևս հնագույն ժամանակներից, քանի որ համարվում էր, որ այն երաշխավորում է երկրի ամուր կառավարումն ու նախնիների օրհնությունը: Սակայն դրան չհաջողվեց կանխել դինաստիաների փոփոխությունները: Ուստի լեգենդար դամբարանները մշտապես պահպանվեցին չինական Ֆենշույի մշակույթում:



### Ընտանեկան գերեզմանոց

Ընտանեկան գերեզմանոց երևույթն ի հայտ է եկել հասարակական զարգացման և հարստության բաշխման անհավասարության և դասակարգային պայքարի առաջացմանը զուգահեռ: Տոհմային հասարակության մեջ հարստությունը կուտակվում էր ունեցվածքի ավելացման գաղափարի համաձայն: Հենց տոհմական գերեզմանոցում էլ կանանց ողջ ողջ հողին էին հանձնում հանգուցյալ տղամարդկանց հետ: Հատկապես դասակարգերի ձևավորումից հետո զարգացան իշխանություն և աղքատություն հասկացությունները, և դիրք, իշխանություն ու հարստություն ունեցողներն առանձնացան հասարակ մարդկանցից, ինչն էլ հանգեցրեց սեփական գերեզմանոցների ստեղծմանը: Ջոու դինաստիայում գոյություն ունեին հատուկ կազմակերպություններ և պաշտոնյաներ, որոնք զբաղվում էին գերեզմանոցների կառավարմամբ: Ազնվականների ու հասարակ մարդկանց թաղման հարցերով զբաղվում էին տարբեր պաշտոն-

յաներ, և, բնականաբար, նրանց հողին էին հանձնում այլ գերեզմաններում: Ազնվականների գերեզմանոցը կոչվում էր «արիստոկրատական գերեզմանոց». դրանց պահպանման հարցերով զբաղվում էին մի շարք պաշտոնյաներ, որոնց կոչում էին գերեզմանի մարդիկ, իսկ հասարակ մարդկանց գերեզմանների խնամքով զբաղվող պաշտոնյաներին անվանում էին գերեզմանի պաշտոնյաներ: Հան դինաստիայում լայն տարածում գտավ զույգերի համատեղ հուղարկավորության համար նախատեսված գերեզմանների ձևը. այն դարձավ կլանային կամ ընտանեկան գերեզմանոցի հիմնական առանձնահատկություն: Սովորաբար տարբեր կլանների ներկայացուցիչները թաղվում էին նույն գերեզմանոցում՝ ամուսնու և կնոջ համատեղ հուղարկավորության համար նախատեսված գերեզմաններում: Այսպես առաջացավ տոհմական գերեզմանոցի գաղափարը: Վեյ և Չին դինաստիաներում, խոշոր տոհմերի անընդհատ զարգացմանը զուգահեռ, ընդհանուր գերեզմանոցները դարձան տարբեր կլանների ազգակցական կապի խորհրդանիշ՝ մի բան, որը պահպանում էր արյունակցական հարաբերությունները տոհմի ներսում և ներդաշնակություն էր հաղորդում դրանց:



Սակայն հասարակական զարգացման ու առաջընթացի հետ մեկտեղ, մարդկանց փոխազդեցության ձևերն ավելի ու ավելի բազմազան դարձան, իսկ պատերազմներից ու գաղթից հետո ստեղծված քառսի պատճառով առաջ եկան

նոր գյուղեր: Բացի տոհմային գերեզմանոցներից, առաջ եկան նաև գյուղական գերեզմանոցներ. սա նշանակում էր, որ տարբեր ազգանուն կրող, բայց նույն գյուղում ապրող մարդիկ հուղարկավորվում էին նույն վայրում: Սույն դինաստիայից հետո տոհմային գերեզմանոցները դանդաղ էին զարգանում և սկսեցին նվազել, իսկ գյուղական գերեզմանոցներն արագորեն ավելանում էին և դարձան գյուղական տարածքներում հուղարկավորության ամենատարածված վայր:



## 2. Ինքնությունը չհաստատված անձանց գերեզմանոց

### *Հանրային գերեզմանոց*

Հանրային գերեզմանոցում հողին են հանձնվում պատերազմում զոհված և ինքնությունը չճանաչված զինվորների դիերը: Առաջին գերեզմանոցներն ի հայտ են եկել դեռևս հնագույն ժամանակներում, մասնավորապես Արևելյան Հան դինաստիայում: Հան դինաստիայի Ան կայսեր կառավարման օրոք շատերը մահանում էին սովից: Հեմանուն Ջոու Չան անունով մի պաշտոնյա հողին հանձնեց մոտ տասը հազար մարդու, որոնք մահացել էին իրենց ծննդավայրից շատ հեռու՝ Լուոյան քաղաքի մերձակայքում, և հանրային գերեզմանոց կառուցեց: Հանրային գերեզմանոցի համակարգը գոյություն էր ունեցել բոլոր նախորդ դինաստիաներում, որոնցից, մասնավորապես, Սուն դինաստիան կարևոր դեր էր խաղացել դրա զարգացման հարցում: Այն ձևավորվել էր դեռևս Չյուսիսային Սուն դինաստիայում և գործարկվել կայսր Սուն Ջենցունի կողմից: Նրա կառավարման օրոք Կայֆենում արձակված կայսերական հրովարտակը հրամայում էր ֆինանսապես օգնել աղքատներին, որոնք ի վիճակի չեն կազմակերպել իրենց ընտանիքի անդամների հուղարկավորությունը: Անկասկած, հանրային գերեզմանների համակարգի գործարկումը սերտորեն կապված էր կառավարության կողմից դիակիզման արգելքի հետ. այն ժամանակներում կառավարիչները դիակիզումը կոչում էին «սարսափազդու հրեշ»: Նրանք ջանք ու եռանդ չէին խնայում՝ տարբեր միջոցներով դիակիզումն արգելելու համար, իսկ հանրային գերեզմանատների համակարգի կիրառումը խնդրի հիմնական լուծումն էր: Սակայն այն ի վերջո խափանվեց պաշտոնյաների կոռուպցիայի, բնակչության աճի ու հողի սեփականության խոր հակասությունների պատճառով:

### *Լոուցե գերեզմանոց*

Լոուցե գերեզմանոցը, որն առաջին անգամ հիմնադրվել էր Սուն դինաստիայում և դեռևս պահպանվում էր Ցին դինաստիայում, հնագույն բարեգործական հաստատություն էր, որը զբաղվում էր մարդկանց որոշակի խմբերի հուղարկավորությամբ՝ ինքնությունը չհաստատված մարդիկ, հարազատներ չունեցող աղքատներ և հիվանդներ: Լոուցե գերեզմանատները ֆինանսավորվում և հիմնադրվում էին կենտրոնական և տեղական կառավարության կողմից և ղեկավարվում աշխարհիկ մարդկանցից կազմ-

#### ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

ված մշտական հանձնաժողովի միջոցով: Մի մասը ֆինանսավորվում էր կառավարության կողմից և համակարգվում բուդճայական տաճարներում նշանակված վանականների կողմից, իսկ մյուս մասն էլ կառուցվում ու կառավարվում էր անկախ՝ բուդճայական տաճարի կողմից: Լոուցե գերեզմանոցը նման էր ժամանակակից գերեզմանատների: Սովորաբար կառուցվում էր բարձր ու ամայի տարածություններում, անմշակ դաշտերում կամ սարերում, և արտաքին աշխարհից առանձնացվում էր պատերով, որոնք թույլ չէին տալիս պատահական այցելուների մուտքն ու պահպանում էին բակի հանդիսավոր ու խաղաղ մթնոլորտը: Միևնույն ժամանակ, բակի ողջ երկայնքով ծառեր էին տնկվում՝ բնական լանդշաֆտն ընդլայնելու համար: Յուրաքանչյուր հանգուցյալի գերեզմանի համար տրամադրվում էր 2.67 մետր երկարությամբ տարածք, իսկ նրանց, ովքեր ունեին ժառանգներ, բայց ցանկանում էին հողին հանձնվել հենց այս գերեզմանոցում, տրամադրվում էր 3 մետր երկարությամբ տարածք: Յուրաքանչյուր հուղարկավորվողի համար տրամադրվում էր երկու քառանկյուն քար, որոնց վրա փորագրվում էր հանգուցյալի ծագումը, ինչպես նաև անունը, ծննդավայրը և մահվան ամսաթիվը, եթե դա հայտնի էր: Ապագայում ինքնությունը ճանաչելու գործընթացն ավելի հարմարավետ դարձնելու համար դրանցից մեկը դազադի հետ հանձնվում էր հողին, իսկ մյուսն առանձին դրվում էր գերեզմանի առաջ:





## ՄԱՍ ԵՐԵՔ

### Ֆենշույ և տաբուներ

#### 1. Ֆենշույ և գերեզմանի ուղղություն

Ֆենշույը, որը նաև անվանում են «գեոմանտիկ նախանշան», հին չինացիների շրջանում մարդու կենդանության օրոք և մահից հետո «բնական միջավայրի» պայմանների ընտրությունն է: Ֆենշույի մշակույթը կապված է կենսական պայմանների ընտրության հետ: Ֆենշույը ձևավորվել է հին Չինաստանում և արմատավորվել է ավանդական ավանդույթներում ու մշակույթի մեջ: Հետևաբար գերեզմանի տեղի ընտրությունը միշտ էլ կարևոր նշանակություն է ունեցել:

Հին չինացիները հավատում էին հոգու անմահությանն ու նախնիների երկրպագությանը: Հետևաբար, գերեզմանի տեղի ընտրությունը միշտ կարևոր դեր է խաղացել Ֆենշույի հնագույն տեսության մեջ: Հին չինացիները հավատացած էին, որ Ցին կարևոր գործոն է կյանքի գոյության համար: Աշխարհում ամեն ինչ լցված է ամեն տեսակ Ցիով: Ցիի բավականաչափ քանակը նպաստում է տոհմի զարգացմանը: Քանի որ քամին կարող է քշել Ցին, իսկ ջուրը՝ արգելակել այն, հին չինացիները կարևորում էին Ցին հավաքելու և դրա կորուստը կանխելու գաղափարը, որպեսզի կանխեին դրա կորուստը, և հաճախ ջրի միջոցով արգելակում էին Ցիի արտահոսքը:

Թաղումը բարդ մշակութային երևույթ էր հին Չինաստանում: Թաղման համար տեղ ընտրելիս անպայման պետք էր նկատի ունենալ Ֆենշույի համակարգը: Չին դինաստիայում Գուո Պուն Ֆենշույի ամենահայտնի տեսաբանն էր: Ըստ պատմական արձանագրությունների՝ Գուո Պուն Գուո Գունի աշակերտն էր, որը ինը գիրք հանեց իր կապույտ կտորե պայուսակից և հանձնեց Գուո Պունին: Հենց այսպես էլ նա դարձավ հինգ տարրերի և գուշակության տեսաբան-վարպետ: Ավելի ուշ Գուո Պուն գրեց իր «Թաղում» գիրքը, որտեղ թաղումն ու Ֆենշույը համակարգված ու տեսականացված են: Գուո Պուն գերեզմանային Ֆենշույի հիմնադիրն էր: Նա Ֆենշույի օգնությամբ նկարագրում էր գերեզմանի հիմնական առանձնահատկությունները: Օրինակ, սարերի տեղադրությունը պիտի լինի բարենպաստ, պարտադիր է աղբյուրների առկայությունը, ջրերը պիտի ուղորվեն ու հոսեն դաշտով, Ցին պետք է պաշտպանված լինի չորս կողմից՝ առջևից, ետևից, ինչպես նաև ձախից և աջից: Քարանձավը պիտի համատեղելի լի-

նի հինգ տարրերի հետ, երկիրը պիտի ներառի բոլոր հինգ տարրերը: Անհրաժեշտ է փարթամ բուսականության առկայությունը: Թաղման արարողության տեղն ընտրելիս պետք է լրջորեն վերաբերվել Ֆենշույին: Գոյություն ունեն որոշակի կանոններ ու պահանջներ, ինչպիսիք են լեռնաշղթաների, լեռնագագաթների, գերեզմանափոսի, ջրերի, գերեզմանների առջևի հատվածի, մերձակա ու հեռավոր սարերի հատակագիծն ու դասավորությունը, երկրաբանական և հիդրոլոգիական որոշ նկատառումներ, ինչպես նաև հուղարկավորության վայրի հիդրոլոգիան, ուղղվածությունը և հողը, և հատկապես գերեզմանի համապատասխանությունը բնական միջավայրին: Եթե գերեզմանի շրջակայքը համապատասխանում է Ֆենշույի օրենքներին, ապա մարդու և բնության միջև ներդաշնակություն կհաստատվի: Այսպիսով, ըստ Ֆենշույի տեսության, գերեզմանի ճարտարապետությունը պիտի միաձուլվի շրջակա միջավայրին ու լանդշաֆտին: Միայն այս դեպքում կարելի է գերեզմանոց կառուցել սարերի մոտակայքում ու միաձուլել բնության հետ:



Չնագույն ժամանակներից մարդիկ մշտապես մեծ կարևորություն են տվել թաղման վայրի ընտրությանը: Ըստ Ֆենշույի՝ թաղման իդեալական վայրն ունի երկու առանձնահատկություն: Առաջինը միասնության ու ներդաշնակության վիճակն է: Ֆենշույի տեսությունը երկնքի, երկրի, կենդանի արարածների ու մարդու համակարգերը դիտարկում է որպես մեկ օրգանական միություն, ուստի թաղման համար իդեալական վայրը պետք է լինի գեղատեսիլ տարածք, չոր տարածք: Ֆենշույի տեսության համաձայն՝ միայն ներդաշնակության շնորհիվ կարելի է խուսափել դժբախտությունից և երջանիկ լինել: Չաջորդ առանձնահատկությունը համաչափությունն ու հավասարակշռությունն է: Արգելված է թաղում կազմակերպել այնտեղ, որտեղ հողի էրո-

զիա կա: Պարտադիր է չորս համաչափ խորհրդանիշերի առկայությունը՝ Կանաչ վիշապ, Սպիտակ վագր, Կարմիր փյունիկ և Սև կրիա: Համաչափությունն ու հավասարակշռությունը ներկայացված են սարի ու ջրի, բարձրավանդակի ու հարթավայրի գոյակցության գաղափարով: Կենտրոնական առանցքի երկու կողմերի դասավորությունը նույնպես պիտի լինի համաչափ և ներդաշնակ: Հետևաբար, թաղման համար տեղ ընտրելիս չինացիները նկատի են առնում հետևյալ գործոնները. նախ, մայրաքաղաքին մոտ լինելը, քանի որ մայրաքաղաքը երկրի կենտրոնն է, ինչը ըստ Ֆենշույի, գերազանց պայման է: Երկրորդ՝ հայրենի քաղաքը, ֆեոդալական կալվածքը կամ նախնիների գյուղը, որը համապատասխանում է մահից հետո ծննդավայր վերադառնալու ավանդական հասկացությանը: Երրորդ, մահվան վայրը, օրինակ, եթե մահը վրա է հասել աշխատավայրում կամ ճակատամարտի ժամանակ: Երբեմն անհրաժեշտ է նկատի առնել նաև այնպիսի կարևոր հանգամանքներ, ինչպիսին երթևեկության համակարգն է: Եվ վերջինը այն վայրն է, ուր հանգուցյալը կենդանության օրոք ցանկացել է գնալ: Ինչևէ, թաղման համար նախատեսված լավ վայրերում սովորաբար կան լեռնագագաթներ, առջևից հոսում են գետեր կամ լճեր, իսկ տեղանքն աչքի է ընկնում փարթամ բուսականությամբ:

Չ ի ն ա կ ա ն գաղտնապատությունը հիմնականում հաջողություն փնտրելու և դժբախտությունից խուսափելու արվեստ է: Եթե այն հաջողության ձգտող կամ դժբախտությունից խուսափող



մարդկանց թույլ բողոքն է ընդդեմ ճակատագրի, ապա Ֆենշույը ճակատագրի դեմ մարդու սուբյեկտիվ նախահարձակության արտահատությունն է:

Ֆենշույի լավ վարպետը Ֆենշույի պրակտիկայից կարող է իմանալ գլխավոր լեռան բարձրության, մոտ ու հեռու սարերի հեռավորության, շրջափակող սարերի և ջրի հոսքի ուղղության մասին: Իսկ երբ ընտրվում է

թաղման վայրը, վերը նշված բոլոր գործոնները պետք է նկատի առնվեն ճարտարապետական ձևավորման ու շինարարության ընթացքում: Անշուշտ, բոլոր ճարտարապետական շինությունները պետք է ունենան որոշակի ծավալներ, որպեսզի համապատասխանեն գետերին ու սարերին և միաձուլվեն բնության հետ: Այսպիսով, մարդն ու բնությունը կարող են ներդաշնակ միության մեջ լինել, և գերեզմանից բացի պիտի երևա նաև նրա շրջակա միջավայրը:

Ֆենշույի վարպետի տեսանկյունից իդեալական է համարվում այն թաղման վայրը, որի խորապատկերում գլխավոր սարն է, իսկ երկու կողմից՝ սարեր ու ջրեր: Գլխավոր սարը պետք է հարուստ լինի Ցիով, իսկ Ցիի աղբյուրը պիտի լինի որոշակի հեռավորության վրա: Տարածքը չորս կողմից շրջապատված է լեռնաշղթաներով կամ լեռնագագաթներով, որոնք թույլ չեն տալիս, որ քամին քշի-տանի Ցին: Առջևից գետ է հոսում, իսկ սկզբնաղբյուրը որոշակի հեռավորության վրա է, բայց չի երևում, թե ջուրն ուր է հասնում: Ըստ Ֆենշույի՝ սա իդեալական վայր է, որովհետև Ցին կարող է հավաքվել ու սնվել նման միջավայրում: Ի վերջո, իսկապես դժվար է կատարյալ վայր գտնել: Թեև չկան երջանկություն գտնելու և դժբախտությունից խուսափելու իսկապես կատարյալ միջոցներ, այնուամենայնիվ, մարդիկ փորձում են լրացնել այդ բացը լանդշաֆտը բարեփոխելու միջոցով:



Չ ա տ ու կ ջանքեր են գործադրվում քամու մուտքն ու ջրի ելքը կանխելու համար: Քամին արգելակելու հատուկ միջոցներից է սարերի ու լեռնագագաթների բարձրությունն ավելացնելը: Եթե

սարերը չափազանց ցածր են կամ լեռնագագաթները լիարժեք տեսք չունեն, ինչը բարենպաստ պայման չէ քամու մուտքն արգելակելու համար, այդ թերությունը կարելի է շտկել լեռան կամ գագաթների վրա հող ավե-

լացնելով. այդ դեպքում դրանք թույլ չեն տա, որ քամին փչի-տանի Ցին: Ջրային ուղիները կարելի է ձևափոխել տարբեր միջոցներով, որպեսզի ջուրը հասնի գերեզմանոց: Եթե թաղման վայրում ջուր չկա, կարելի է համապատասխան վայրում ջրանցքներ կառուցել և ջուրը մոտեցնել գերեզմանին: Որոշ դեպքերում արհեստական լճակներ, լճեր կամ առուներ են ստեղծվում ջուրն ամբարելու համար: Եթե ջրային պայմանները բարենպաստ չեն, օրինակ՝ ջուրը չափից դուրս արագահոս է, հոսում է ուղիղ գերեզմանավայրի ուղղությամբ, կամ չի ոռոգում շրջակա տարածքը, համապատասխան մեթոդներ են կիրառվում ջրային պայմանները բարելավելու համար. դրանցից են՝ արհեստական առու ստեղծելը, որը կդանդաղեցնի ջրի հոսքը, կամ՝ ջրանցքներ փորելը, որը կփոխի ջրի ուղղությունը:

Ֆենշույը ձևափոխելու մյուս միջոցը «ճնշելն» է: Եթե լեռնաշղթան շատ թեք է, կարելի է պագոդա կամ աշտարակ կառուցել գագաթին՝ թեքությունը «ճնշելու» համար: Եթե ջուրը չափազանց արագ է հոսում կամ նույնիսկ հեղեղներ է առաջացնում, կարելի է պագոդա կառուցել՝ հոսքը մեղմելու համար: Ֆենշույը կարելի է բարեփոխել նաև կամուրջներ կառուցելով. ընդունված է կարծել, որ կամուրջը թույլ չի տալիս, որ ջուրը տանի հարստությունը: Բայց կամուրջը պետք է լինի բարենպաստ վայրում: Հակառակ դեպքում այն կկործանի Ֆենշույը: Ըստ Ֆենշույի տեսության՝ տան նախագծումն ու ձևավորումը նույնպես կարող է բարելավել Ֆենշույը, որպեսզի այն բարի բախտ ապահովի և օգնի խուսափել աղետներից: Եթե ճանապարհն ուղիղ տանում է դեպի դարպասը, կամ եթե դարպասի առաջ ուժեղ քամի է փչում, կարելի է դարպասից ներս միջնորմ կառուցել, որը կբավարարի Ֆենշույի պահանջները:

## 2. Ժողովրդական տաբուներ

Ավանդական չինական հասարակության շրջանում գոյություն ունեն սգո արարողությունների հետ կապված բազմաթիվ ավանդական ժողովրդական տաբուներ: Ժողովրդական հավատալիքի համաձայն՝ չի կարելի է բարձրաձայն հնչեցնել այն մարդկանց անունները, որոնց հանդիպում ես սգո երթում. համարվում է, որ դա կարող է դժբախտություն բերել մարդկանց, եթե հանգուցյալի հոգին ճանաչի նրանց: Սարի վրա թաղման արարողության ժամանակ մարդիկ պետք է միմյանց անունով դիմելու փոխարեն՝ ձեռքի շարժումներով կամ ակնարկներով խոսեն իրար հետ: Բանն այն է, որ եթե տեղի գյուղական աստվածը լսի որևէ մեկի անունը, նրան սխալմամբ կչփոթեն հանգուցյալի հետ, ու նա կդառնա «ուրվականի փոխարինող»: Երբ ընտանիքի անդամներն արթուն մնում են դագաղի մոտ,

չի կարելի թույլ չտալ, որ կատուները մոտենան հանգուցյալին: Մինչև հիսուն տարեկանի մահը չի համարվում բնական վախճան, ուստի դին կարելի է դնել ոչ թե սրահում, այլ ննջասենյակում. թաղման արարողությունը նույնպես կատարվում է ննջասենյակում: Հենց այստեղից էլ ի հայտ է եկել «կյանք նվիրաբերելու» ավանդույթը: 50 տարեկանից ցածր հանգուցյալի հարազատները պետք է խոնարհվեն ու մի բաժակ թեյ մատուցեն տոհմի ավագին՝ աղաչելով, որ նա իր կյանքի մի մասը նվիրի հանգուցյալին, և հանգուցյալն անցնի 51-ի տարիքային շենը: Ի լրումն դրա, գոյություն ունեն մաս պաշտոնական կոչումներ նվիրաբերելու ավանդույթ: Որպեսզի հանգուցյալը կարևոր դեր զբաղեցնի Արևմտյան դրախտում, ընտանիքի անդամները պաշտոնական տիտղոս էին զնում կառավարությունից, տիտղոսին կից տրամադրած հավաստագիրը դնում պատյանի մեջ և հանգուցյալի հետ հանձնում հողին: Եթե հանգուցյալը մահացել է մախորդ երեք օրերի ընթացքում, ընտանիքի անդամներին արգելվում է պարտքով որևէ բան վերցնել ուրիշներից: Իսկ եթե, այնուամենայնիվ, ստիպված են ինչ-որ բան վերցնել, ապա որպես նվեր պիտի շաքար ստանան: Եթե պարտք են վերցրել նույն տոհմի այլ անդամից, ապա որպես նվեր մի փոքր տոպրակ բրինձ կստանան: Եթե հարյուր օրվա ընթացքում մեկը մյուսի ետևից մահանում է ընտանիքի երկու անդամ, պետք է հնարավորինս շուտ թղթե մարդ զնել խանութից և տեղավորել ավելի ուշ մահացածի դագաղի մեջ: Հակառակ դեպքում ընտանիքում ևս մի մարդ կմահանա: Եթե երեխաները տեսնում են դագաղը, պիտի հմայախոսք արտասանեն՝ անբարենպաստ իրավիճակներից խուսափելու համար:

Ավանդաբար, տաբու է համարվում այն, որ հիվանդությունից մահացածը պառկած է նույն դիրքում, ինչ մահվան պահին: Սովորաբար մեծան դեպքերում դիրքը փոխում են, որպեսզի մահանալիս հանգուցյալի գլուխը հենված լինի մահճակալի եզրին: Տաբու է նաև օտար երկրում մահանալը: Դագաղում տեղավորելիս հանգուցյալի մարմինը չպիտի լինի արևի շողերի տակ, իսկ գլուխը պետք է ծածկել կտորով: Չի կարելի սգավորի շորերով զնալ այլոց տները: Որդիներին արգելվում է ծնողների թաղման արարողությունից հետո քառասունինը օրվա ընթացքում մազ կտրել: Սուգ պահելու ընթացքում արգելվում է կարմիր հագուստ կրել: Ծնողների մահից հետո հարյուր օրվա ընթացքում ամուսնությունն արգելված է: Որդիներին ու դուստրերին արգելվում է ծնողների մահից հետո հարյուր օրից երկար սպիտակ կտորով փաթաթել կոշիկները: Դագաղի մեջ տեղավորելիս տաբու է համարվում ողբալ ու կանչել հանգուցյալի անունը: Եթե մահացած աղջիկն ամուսնացած չէ, մարմինը չի թաղվում գերեզմանում, այլ ժամանակավորապես հողին է հանձնվում գերեզմանի մոտ, իսկ

ուրվականի հետ ամուսնությունից հետո տեղափոխվում է գերեզման: Եթե հանգուցյալը մահացել է ոչ բնական մահով, երեք տարվա ընթացքում չի կարող հողին հանձնվել տոհմական գերեզմանոցում: Սգո հարյուր օրերի ընթացքում արգելված է սանրվածք անել: Հղի կանայք պիտի խուսափեն հանգուցյալի համար սգո հագուստ կարելուց: Դիերը կամ դագաղները չպետք է դրվեն ուրիշների դռան շենին: Հայրենիքից հեռու մահացածների դիերը կամ դագաղները չպետք է ներս բերվեն գլխավոր շենից: Սգացողի ընտանիքի անդամները չպետք է խոսեն օտարների հետ, որպեսզի խուսափեն դժբախտությունից: Տաբու է նաև նորահարսի հետ խոսելը, բայց ոչ ավել, քան երեք օր, այլապես նա ողջ կյանքում կտառապի անպտղությունից: Տաբու է արցունք թափել հանգուցյալի վրա մարմինը պատանքով փաթաթելիս, թաղունը պետք է կատարել միայն կենտ օրերին, և այլն:



## ՄԱՍ ՉՈՐՍ

### Մակագրություն հուշատախտակի վրա և թաղման համար անհրաժեշտ իրեր



#### 1. Մակագրություն հուշատախտակի վրա

«Կոնֆուցիոսի երկերի ժողովածու» հնագույն չինական գրքում հիշատակվում է, որ թաղման արարողությանը պետք է վերաբերվել խոհեմաբար և լրջորեն՝ ի հիշատակ նախնիների արժանքների: Գերեզմանաքարն ու տապանագիրը, որոնք սերտորեն կապված են թաղման հետ, կարևոր դեր են խաղում ավանդական չինական հասարակության կյանքում:

Ընդհանուր առմամբ, հուշատախտակ եզրույթով նկատի են առնվում ամեն տեսակ մակագրությունները, ներառյալ մակագրություններ քարերի, ժայռերի, գերեզմանաքարերի վրա: Հուշատախտակն ուղղաձիգ քար է, որը դրվում է պալատի դիմաց՝ արևի շողքը վերահսկելու և խոշոր եղջերավոր անասուններին տարածքից հեռացնելու համար: Հետագայում հուշատախտակի վրա փորագրում էին տառանշաններ, և այն օգտագործվում էր՝ որպես հուշանվեր: Դրա վրա կարելի էր նաև փորագրել ողջ երկրի բնակչությանն ուղղված հայտարարություններ:



### **Գերեզմանաքար**

Գերեզմանաքարը հուշաքար է, որը տեղադրվում է գետնին՝ շիրմի վրա: Գերեզմանաքարի վրա փորագրվում են հանգուցյալի անունը, ազգանունը, կյանքի պատմությունն ու ձեռքբերումները: Ցին դինաստիայից առաջ գերեզմանաքարերը հիմնականում պատրաստվում էին փայտից, բայց հետագայում՝ Հան դինաստիայում, փայտը փոխարինվեց քարով: Սկզբում գերեզմանաքարը թաղում էին հողում: Ապա այն դրվում էր դեպի գերեզման տանող միջանցքում, և, հետևաբար, կոչվում էր «սրբազան միջանցքի հուշատախտակ»: Հետագայում մարդիկ այն տեղադրում էին շիրմի դիմաց կամ ետևում: Գերեզմանաքարի չափն ու ձևը տարբեր էր՝ կախված օգտագործված բնական նյութից: Սակայն անկախ տարբերություններից՝ բոլորն էլ կարելի է կոչել «հուշատախտակներ»: Ըստ ձևի՝ դրանք կարող են լինել Բեյ հուշատախտակներ և Չյե հուշատախտակներ: Առաջինն ունի քառակուսի տեսք և տափակ գագաթ, որը երևում է դիմացից, իսկ երկրորդը կամարածև գագաթով է, ներքևի մասում՝ ավելի մեծ:

Ամբողջական գերեզմանաքարը բաղկացած է երեք մասից, մասնավորապես՝ գլուխ, մարմին և հիմք: Գլխի վրա սովորաբար փորագրվում են կենդանիների նախշանկարներ՝ վիշապ, անեղջյուր վիշապ, վագր և սարյակ: Գլխի վրա փորագրված տեքստը կոչվում է «ճակատ»: Եթե տեքստը գրված է դրոշմագրով, ապա կոչվում է «դրոշմաճակատ», եթե կղերական գրով, ապա կոչվում է «մակագրության ճակատ»: Մարմնի դիմացի կողմը կոչվում է «հուշատախտակի Յան», որի վրա սովորաբար փորագրվում են հանգուցյալի տիտղոսը, պաշտոնն ու անունը: Մարմնի հակառակ կողմը կոչվում է «հուշատախտակի Ին», որի վրա սովորաբար փորագրվում է սովորական և հանգավորված տեքստ, հուշատախտակի հեղինակի անունը, կառուցողի կապը հանգուցյալի հետ և հուշատախտակի տեղադրման ժամը: Սակայն գոյություն ունեն բացառություններ: Օրինակ, Չինաստանի պատմության միակ կայսրուհի Ուու Ցեթյանի գերեզմանաքարի վրա ոչ մի բառ չկար՝ ոչ յան, ոչ ին կողմերում, և այն հայտնի էր «անբարբառ հուշատախտակ» անունով:

Հին Չինաստանի հասարակությունը խիստ հիերարխիկ էր: Ըստ ավանդական չինական սովորույթների՝ նույնիսկ եթե մարդը մահանում էր, հանդերձյալ աշխարհում նույնպես պարտավոր էր հետևել որոշակի կանոնների: Քանի որ գերեզմանաքարի իմաստը հանգուցյալի ինքնության ճշգրիտ հաստատումն էր, չափի ու ձևի առանձնահատկությունները հիմնականում ընդգծում էին դասակարգային տարբերությունները: Թան և Սուև դինաստիաներում որոշ դասերի պաշտոնյաների թույլ էր տրվում շիրմների առաջ ունենալ հուշատախտակներ: Ըստ օրենքի՝ հինգերորդ կարգից

բարձր պաշտոնյաների դեպքում գերեզմանաքարն ուներ ոչ ավելի քան երեք մետր բարձրություն, գլխի մասը ձևով նման էր անեղջյուր վիշապի, իսկ հիմքը կրիա էր հիշեցնում. յոթերորդ կարգից բարձր պաշտոնյայի գերեզմանաքարն ուներ մոտ 1.3 մետր բարձրություն, սրածայր զագաթ ու քառակուսի հիմք: Մին և Ցին դինաստիաներում դասակարգային տարբերակումը շատ ավելի ընդգծված էր: Կանոնների համաձայն՝ առաջին կարգի պաշտոնյայի գերեզմանաքարի գլուխն անեղջյուր վիշապ էր հիշեցնում, հիմքը՝ կրիա. երկրորդ կարգի պաշտոնյայի գերեզմանաքարի գլուխը ձևով քայլին էր հիշեցնում, հիմքը՝ կրիա. երրորդ կարգի պաշտոնյայի գերեզմանաքարի գլխին Թյանլու և Բիսիե էր քանդակված, որոնք չինական լեգենդի երկու սրբազան զագաններն են, իսկ հիմքը ձևով նման էր կրիայի. չորրորդից յոթերորդ կարգերի պաշտոնյաների դեպքում գերեզմանաքարն ուներ կլոր գլուխ և քառակուսի հիմք: Այն ժամանակ գերեզմանաքարի մարմինն ու գլուխը տարբերվում էին բարձրությամբ ու լայնությամբ, իսկ հիմքը՝ միայն բարձրությամբ: Բարձրագույն դասի պաշտոնյայի գերեզմանաքարը հասնում էր 5.3 մետր բարձրության: Սովորաբար արգելված էր հուշատախտակ տեղադրել հասարակ մարդկանց շիրիմների առաջ: Սակայն այս արգելքը խստորեն չէր կիրառվում, և գերեզմանների մեծամասնությունն ուներ քարից հուշատախտակներ, որոնք շատ փոքր էին ու առանց հիմքի: Հետևաբար, հանգուցյալի դասի մասին մանրամասները նույնիսկ հեռվից երևում են գերեզմանաքարի չափից ու ձևից:

**Տապանագիր**



Տապանագիրը, որը նաև կոչում էին թաղված տապանագիր, լճակի տապանագիր, լճակի արձանագրություն կամ թաղման արձանագրություն, քարի վրա արված մակագրություն է, որը ներկայացնում է հանգուցյալի կենսագրությունը: Ընդհանրապես տապանագիրը հաճախ դազադի հետ թաղվում էր գերեզմանում: Փորագրվում էր մարդու ծննդյան և մահվան ամսաթիվը և հակիրճ կենսագրությունը, ներառյալ անունը, տոհմածառը, պաշտոնական դիրքը,

կյանքի իրադարձությունները և այլն: Ի լրումն դրա, պատի վրա գրվում կամ փորագրվում էին այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են անունը, ծննդավայրը և հակիրճ կենսագրությունը: Այս երևույթը կոչվում էր «տապանագիր աղյուսների վրա» և կարող էր լայն իմաստով համարվել տապանագիր: Արևելյան Չան ժամանակաշրջանում տապանագիրը լայն տարածում ուներ, և մակագրության ոճն աստիճանաբար ավելի էր արմատավորվում: Ինչ վերաբերում է ինքնին մակագրությանը, այն ներառում է էսեի ոճով գրված տեքստ և հանգավոր տեքստ:

Տապանագիրն առաջացել է գերեզմանաքարից: Առաջին անգամ դրա մասին հիշատակվում է Արևելյան Չան դինաստիայի ուշ շրջանում: Այն ժամանակ Ցաո Ցաոն արգելեց հուշատախտակի փորագրումը, և այդ հրամանին հետևեցին նաև Վեյ և Ջին դինաստիաներում: Արդյունքում գերեզմանաքարը դարձավ ավելի ու ավելի հազվադեպ և գրեթե անհնար էր գտնել այդպիսի նմուշներ: Սակայն մարդիկ ցանկանում էին նմանատիպ ձևերով իրենց սուզն արտահայտել հանգուցյալի մահվան կապակցությամբ, ուստի փորագրված քարը թաղում էին գերեզմանում: Ըստ հետազոտությունների՝ Չինաստանում ամենավաղ հայտնաբերված հուշատախտակը պեղվել է Լուոյանում, Չենան գավառում, որը հողին էր հանձնվել Արևելյան Չան ժամանակաշրջանում: Սրանից կարելի է ենթադրել, որ տապանագիրն ի հայտ էր եկել դեռևս Արևելյան Չան դինաստիայում: Չափսից ու ձևից բացի տապանաքարերը տարբերվում էին արտաքին տեսքով, օրինակ՝ սրածայր գագաթով, սեղանաձև կամ քառակուսի: Չին դինաստիայում կառուցված տապանաքարը, որը պեղվել էր Ցին դինաստիայում՝ Ցյանլուն կայսեր օրոք, ուներ մոտ 70 սանտիմետր բարձրություն և 35 սանտիմետր լայնություն, սրածայր գագաթ և հարթ հիմք, նման էր նեֆրիտից հուշատախտակի և հայտնի էր «սրածայր տապանաքար» անունով: Կլոր գլխով և քառակուսի հիմքով տապանաքարը ոչնչով չէր տարբերվում Չյե հուշատախտակից: Վերին ու ստորին հատված ունեցող տապանաքարը կոչվում էր «ամբողջական տապանաքար»: Չյուսիսային Վեյ շրջանի տապանաքարերը հենց այսպիսին էին: Չնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Չյուսիսային Վեյ ժամանակաշրջանի քառակուսի տապանաքարերն արդեն իսկ հստակ ձև ունեին: Ձևը սահմանելուց հետո տապանաքարը բաժանվում էր նույն չափի երկու շերտաքարի, որոնց սահմանները հատվում էին. մեկի վրա մակագրությունը փորագրված էր ներքևի հատվածում, մյուսի վրա՝ ճակատին մասում: Տապանագրերի վրա գրվում էր՝ «Այս կամ այն պաշտոնյայի արձանագրությունը այս կամ այն դինաստիայից»: Որոշ դեպքերում տապանաքարերը ձևավորված էին զարդանախշերով կամ սրբազան պատկերներով: Ծածկի վրա


տառանշանները հիմնականում գրվում էին դրոշմագրով, ուստի ծածկն էլ կոչվում էր «դրոշմածածկ»: Արձանագրությունները տարբերվում են հանգավոր տեքստից: Արձանագրությունն էստեի ոճով փորագրված տեքստ է, ներառում է անունը, ծննդավայրը, պրեֆեկտուրայի տեղադրությունը, պաշտոնական դիրքը, կյանքի իրադարձություններն ու ծննդյան ու մահվան օրերը. իսկ հանգավոր տեքստը չորս բառից կազմված չափածո ստեղծագործություն է, որն արտահայտում է հանգուցյալի մահվան վիշտը: Այս երկուսը միասին կոչվում են «տապանագիր»: Տապանագիրը լայնորեն կիրառվում էր նույնիսկ հուշատախտակների արգելքի վերացումից հետո, ինչը հանգեցրեց գերեզմանների այնպիսի տեսակի, որտեղ գերեզմանաքարերը գետնի վրա էին, իսկ տապանագրերը՝ հողում թաղված:

Տապանագիրը ավելի լայն տարածում ուներ Սույ և Թան դինաստիաներում, քան Վեց դինաստիաների ժամանակաշրջանում: Մինչ օրս արձանագրվել է տապանագրի ավելի քան երկու հազար տեսակ: Քանակը զգալիորեն նվազեց Սուն և Յուան դինաստիաներից հետո, բայց դեռևս կիրառվում էր Ցին դինաստիայում: Չինաստանի Հանրապետության հաստատումից ի վեր որոշ սովորույթներ ու ավանդույթներ ձևափոխվել են: Երբ ներմուծվեցին թաղման արևմտյան ձևերը, և գերեզմանաքարի ու տապանագրի միավորումը տարածված բնույթ կրեց, տապանագիրն ավելի հազվադեպ դարձավ: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից հետո նախապատվությունը տրվում էր թաղումների ու դիակիզման պարզ ձևերին, իսկ տապանագրեր հազվադեպ էին հանդիպում:

Երբ տապանագիրը թաղվում էր հողի տակ, ավելի հեշտ էր պահպանվում և հազվադեպ էր վնասվում՝ ի տարբերություն գետնի վրա դրվող գերեզմանաքարերի: Տապանագրերը մշակութային ինքնության ամենավաւերական և առաջնային նմուշներն են: Դրանք կարևոր նշանակություն ունեն նախորդ դինաստիաների հետազոտության համար, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքականությունը, ռազմական գործը, տնտեսությունը, մշակույթը, և կարող են լրացնել գոյություն ունեցող տեղեկատվությունը կամ շտկել պատմական փաստաթղթերում տեղ գտած անճշտությունները: Անցյալի բազմաթիվ տապանագրեր կարող են համարվել անգին մշակութային մասունքներ և մշտապես բարձր են գնահատվել գիտական շրջանակներում, քանի որ գրողներն ու տապանագրեր փորագրողները սովորաբար գեղագրության, մակագրության և գրականության հայտնի վարպետներ են: Հետևաբար, դրանք նաև արժեքավոր նյութ են տառանշանների զարգացման և գեղագրության ուսումնասիրության համար:

## 2. Թաղման համար անհրաժեշտ առարկաներ

Թաղման համար անհրաժեշտ առարկաները սերտորեն կապված են հոգու հանդեպ մարդու հավատի, ինչպես նաև հոգու անմահության և հետմահու կյանքի գաղափարների հետ: Մասնավորապես հոգու անմահության գաղափարը մարդկանց ստիպում է հավատալ, որ որոշակի կապ կա հոգու և կյանքի միջև, և մահից հոգին նույնպես պիտի փայփայվի ու ապրի այնպես, ինչպես կապերը կենդանության օրոք:



Մասնավորապես հոգու անմահության գաղափարը մարդկանց ստիպում է հավատալ, որ որոշակի կապ կա հոգու և կյանքի միջև, և մահից հոգին նույնպես պիտի փայփայվի ու ապրի այնպես, ինչպես կապերը կենդանության օրոք:

### *Ողջ կենդանիների զոհաբերելը*



Կենդանիների զոհաբերությունը՝ ողջ կենդանիներին որպես թաղման առարկա օգտագործելու պրակտիկան է: Կենդանիների զոհաբերելու ավանդույթը սկսվել է դեռևս միջին դարերում՝ նեոլիթյան դարաշրջանում: Հենան գավառի Սիչուան կոմսության Սիավանգանի Յանշու մշակությունը հայտնաբերվել է չորս գերեզմանոց, որոնցում շներ էին թաղված, և հինգ գերեզմանոց, որոնցում կրիաներ էին թաղված: Շաանսի գավառի Լինթուն շրջանի Չյան գյուղի թիվ 27 գերեզմանոցում հայտնաբերվել է տղայի շիրիմ՝ դեմքը՝ դեպի վեր, մարմինը՝ ուղիղ: Հողին հանձնված առարկաների թվում հայտնաբերվել է կավե գավաթ, անոթ, խարտոց, ոսկորից բիզ, նետի ծայր և խոզի ծնոտոսկր, որը տեղադրված է եղել ազդրոսկրերի միջև: Սրանք մինչ օրս մեզ հայտնի ամենահին գերեզմաններն են, որոնցում հողին են հանձնվել նաև կենդանիներ: Ողջ կենդանիներին զոհաբերելու պրակտիկան Յանշաո ժամանակաշրջանում պարզ էր և հազվադեպ էր հանդիպում: Դրա կարևորությունը թերևս կապվում էր հոգին հսկելու և էկզոր-



սիզմի գաղափարի հետ: Հանգուցյալի հետ խոզի ծնոտոսկրեր թաղելու ավանդույթը քիչ թե շատ հանդիպում էր ուշ նեոլիթյան դարաշրջանի մշակութային մասունքներում, ինչպիսիք են Դավենկոու մշա-

կույթը, Լունշան մշակույթը Շանդունում, Լունշան մշակույթի գերեզմանները Թաոսիում՝ Շանսի գավառի Սյանֆեն կոմսությունում, Մաձիայաո մշակույթը, Ցիջյա մշակույթը Գանսու և Ցինհայ շրջաններում, Ցուձյալին մշակույթը, Լյանջու մշակույթը Յանգցե գետի միջին և ստորին շերտերում: Ոմանք հանգուցյալի հետ մեկտեղ թաղում էին խոզի գլուխը կամ ամբողջ խոզին: Խոզերին որպես թաղման ենթակա կենդանի օգտագործելը համարվում էր «շարժական ունեցվածքի» թաղում: Խոզը, որը նախնադարյան հասարակության մեջ համարվում էր ցածր արդյունավետությամբ կենդանի, շուտով դարձավ հարստության կարևոր խորհրդանիշ: Խոզի ծնոտոսկրերի կամ գլուխների թիվը սովորաբար համարվում էր մահվանից առաջ մարդու կուտակած հարստության խորհրդանիշ: Մաձիայաո մշակույթում և Ցիջյա մշակույթում զոյություն ունեցող հանգուցյալի հետ այժմի ծնոտոսկրեր, գլուխ և կոտորված թաղելու սովորույթը, որը նույն մշակությունն ուներ, ինչ խոզերին թաղելը: Ուշ նեոլիթյան դարաշրջանի մշակութային մասունքների մեջ հայտնաբերվել են գերեզմանում թաղված շներ. այս երևույթը մշակութայամբ մոտ էր խոզեր ու այծեր թաղելուն: Այս պրակտիկան տարածված էր Սիա, Շան և Արևմտյան Ջոու դինաստիաներում, որոնք ներկայացված են Էրլիթոու, Էրլիզան մշակույթներում, Ինի ավերակներում և Ֆեն և Հաո տարածքներում: Հոգին հսկելու և չարիքը հեռացնելու նպատակով թաղված շների մասունքներ են հայտնաբերվել ամբարտակների մոտ, սարահարթներում ու փոսերում:

### ***Թաղման առարկաներ***

Թաղման առարկաները թաղման համար հատուկ պատրաստված իրեր են: «Թաղել» բառը չինարենում արտասանվում է նույն ձևով, ինչ «թաքցնել» բառը: Ուստի թաղման առարկաները նաև կոչվում են թաքցված



առարկաներ: Դրանց հետ կապված ծեսերն ու համակարգը հնագույն ժամանակներից մշտապես եղել է սգո մշակույթի կարևոր մաս:

Քանի որ երևույթը խորապես կապված է հավատի հետ, թաղման առարկաները մշտապես սերտ կապի մեջ են եղել հավատի ու հոգու պահպանման գաղափարի հետ:

### **Թղթադրամ**

Թղթադրամը կամ այսպես կոչված՝ թղթե փողը, որը նաև կոչվում է «թղթե ձուլակտոր», հանդերձյալ աշխարհի համար նախատեսված փող կամ տարադրամ է, որը հատուկ պատրաստվում է



հանգուցյալի համար և համարվում է փոխարժեք, որ շրջանառվում է հանդերձյալ աշխարհում՝ ուրվականների ու աստվածների կողմից: Այն ծագել է Հան դինաստիայում՝ «Յի փող» գաղափարից: Վեյ և Ջին դինաստիաներից հետո դրան պատրաստելու համար հիմնականում թուղթ էր օգտագործվում, և այն կոչվում էր թղթադրամ: Թղթադրամը մեծ տարածում ուներ Թան դինաստիայում: Այն ժամանակ թղթից փողը ձևով նման էր պղնձի, կենտրոնում քառակուսի անցք էր կտրված: Թղթադրամը որպես թաղման պարագա՝ օգտագործվում էր Թան դինաստիայից ի վեր՝ հիմնականում գերեզմանային գողությունները կանխելու նպատակով, ինչպես նաև համարվում էր գումար խնայելու միջոց: Հանդերձյալ աշխարհի համար նախատեսված թղթադրամները լայն կիրառում ունեին: Արդի ժամանակներում գոյություն ունի փողի մի քանի տեսակ, որոնցից մեկը փայլաթիթեղով փաթաթված ոսկեգույն և արծաթագույն ձուլակտորներն են: Մյուսը պղնձե մետաղադրամի տեսքով փողն է, որը կտրված է դեղին կամ սպիտակ թղթից: Գոյություն ունի նաև տպագիր կամ թանաքով գրված փող, որը գերազանցապես օգտագործվում է սգո երթի ժամանակ: Մյուսը քրոմատիկ տպագիր թղթից փողն է, որը սովորաբար ընթացիկ փոխարժեքի նմանակն է:

### **Գերեզմանային կերպարներ**



Գերեզմանային կերպարը թաղման առարկա է: Այն իր ձևով մարդկային կերպարանք է հիշեցնում: Որպես մարդկային զոհաբերության տարբերակ՝ թաղման համար նախատեսված այս կերպարների ավանդույթը ծագել է Շան և Ջոու դինաստիաներում և լայն տարածում ունի Գարնան և աշնան ժամանակաշրջանից ի վեր: Այն ժամանակ հիմնականում կերամիկայից պատրաստվող կերպարները բաժանվում էին երկու խմբի՝ տղամարդու կերպարներ՝ զինվորների տեսքով, և կնոջ կերպարներ՝ աղախինների ու ելույթ ունեցողների տեսքով: Համարվում էր, որ դրանք իրական մարդկանց փոխարեն ծառայում էին հանգուցյալին: Գերեզմանային կերպարները լայն տարածում ունեին Վեյ և Չին դինաստիաներից մինչև Թան դինաստիա, բայց աստիճանաբար նվազեցին Սուն դինաստիայում՝ թղթադրամի տարածմանը զուգահեռ:

### **Ֆանսյան**

Ֆանսյանը, որն առասպելական կերպար է, ի սկզբանե չար ուրվականներին վնդդող աստվածն էր: Գարնան և աշնան ժամանակաշրջանում օգտագործվում էր՝ որպես թաղման առարկա: Չորսաչքանի Ֆանսյանը սովորաբար հողին էր հանձնվում հասարակ քաղաքացիների հետ: Թան դինաստիայում Ֆանսյանը պատրաստվում էր բամբուկի փայտից: Սուն դինաստիայում հասարակ մարդկանց արգելված էր Ֆանսյանի օգտագործումը: Քանի որ Ֆանսյանը կարող էր քշել չար ուրվականներին, այն համարվում էր թաղման թափորի առաջնորդ և, հետևաբար, կոչվում էր «ճանապարհ» բացող աստված:

### **Ծերունին Արտեմիսիայում**

Ծերունին Արտեմիսիայում՝ թաղման առարկա է, որի առաջացումը հավանաբար ունի հեռահար նպատակներ: Ըստ «Արտեմիսիայի էլեգիայի», որը լայն տարածում ուներ Հան դինաստիայում, Արտեմիսիան այն վերջին



հանգրվանն էր, ուր հասնում են մարդկանց հոգիները մահից հետո՝ անկախ նրանից, թե ովքեր էին եղել կենդանության օրոք: Դրանց մեծ մասը պատրաստված էր կերամիկայից:

### ***Գերեզմանը հսկող գազաններ***

Գարնան և աշնան ժամանակաշրջանում ծագած այս ավանդույթը՝ գերեզմանը հսկող գազանները, ամենից շատ տարածված էր Չու նահանգի Չյանլին տարածքում: Սարսափելի գազանն ուներ ուղիղ պարանոց և մարմին, դեմքը բացակայում էր, իսկ հիմքը սովորաբար քառակուսի էր: Հետագայում ավանդույթը զարգացավ: Որոշ գազաններ ծնկած էին, մյուսները՝ կանգնած, հանդիպում էին նաև բարի արտաքինով գազաններ: Գարնան և աշնան ժամանակաշրջանից հետո գերեզմանը հսկող գազանները լայնորեն կիրառվում էին ողջ երկրում՝ որպես սգո արարողության անբաժան մաս:



### ***Մարդկանց զոհաբերությունը***

Մարդկանց զոհաբերությունը սգո ավանդույթ էր, որը ողջ մարդուն հանգուցյալի հետ հողին հանձնելն է: Չինաստանում այս ավանդույթն ի հայտ եկավ նախնադարյան հասարակության շրջանում: Սկզբում զոհերը ոչ թե ստրուկներ ու գերիներ էին, այլ կանայք ու հարճեր: Ակնհայտ էր, որ կինը համարվում էր տղամարդու սեփականություն և հանդերձյալ կյանքի ուղեկից, ինչը հոգու և վերամարմնավորման գաղափարի անբաժան մասն էր:

Ստրկատիրական հասարակության մեջ ողջ մարդկանց զոհաբերությունը թաղման կարևոր բաղադրիչ էր: Ավանդույթի զոհերը տարբեր էին՝ կանանցից, հարճերից ու սպասարկուներից մինչև ստրուկներ, և մասշտաբներն ավելի ու ավելի էին մեծանում: Շան դինաստիայի ստրկատերե-

#### ԳՈՆԳ ՔԻԱՆԳ

րի գերեզմաններում սովորաբար հուղարկավորվում էին հարյուրավոր և նույնիսկ հազարավոր զոհեր:

Ցին դինաստիայում, նախնիների ավանդույթի համաձայն՝ մարդուն հողին էին հանձնում հանգուցյալի հետ, և շատ զոհեր սպանվում էին: Առաջին կայսր Ցին Շիհուանի մահից հետո երկրորդ կայսրը սպանեց բազմաթիվ մարդկանց, որպեսզի նրանք հուղարկավորվեն առաջին կայսեր հետ՝ այդ ընթացքում զոհաբերելով նաև իր հարճերին ու սպասուհիներին: Հան դինաստիայում այս պրակտիկան աստիճանաբար նվազեց: Արևմտյան Հան դինաստիայի վաղ շրջանում բնակչությունը զգալիորեն նվազել էր Ցին դինաստիայի վերջում տեղի ունեցած պատերազմների հետևանքով: Տնտեսությունը զարգացնելու նպատակով ջանք էր գործադրվում ամեն գնով պայքարել մարդկային զոհաբերությունների համակարգի դեմ: Սյուան կայսեր կառավարման օրոք Ջաո թագավորության տեր Լիու Յուանը զրկվեց իրեն շնորհված տարածքից՝ պատժվելով այն բանի համար, որ տասնվեց աղախինների ստիպել էր զոհել իրենց կյանքը:

Մին դինաստիայում մարդկային զոհաբերությունների համակարգը դարձյալ գերիշխող դիրք զրավեց: Այն արգելվեց միայն կայսր Մին Յինցունի օրոք: Մին դինաստիայի թագավորական արքունիքի զոհերի մեծամասնությունը հարճեր ու աղախիններ էին, որոնց ստիպում էին զոհաբերել իրենց կյանքը: Ողջ գործընթացը ղեկավարվում էր կայսեր, կատարվում՝ ներքինիների կողմից:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Գլուխ մեկ</b>	
Թաղմանը նախորդող ծեսեր.....	5
Մաս մեկ - Մահը հաստատելն ու հոգիները հետ կանչելը.....	6
Մաս երկու - Մահվան լուրը հայտնելն ու հանգուցյալի տունը շտապելը...	10
Մաս երեք - Մարմնի լվացում և կերակրում.....	16
<b>Գլուխ երկու</b>	
Թաղման նախապատրաստական ծեսեր.....	20
Մաս մեկ - Մակագրության պատահառ և բուրդայական արարողություն.....	22
Մաս երկու - Դագաղի մեջ տեղավորելը (Նախնական և պաշտոնական տեղավորում).....	26
Մաս երեք - Սգո երթ և լացը թաղման ընթացքում.....	30
<b>Գլուխ երեք</b>	
Թաղմանը հաջորդող ծեսեր.....	37
Մաս մեկ - «Երրորդին հանդիպելն» ու «յոթն ամելը».....	39
Մաս երկու - Սուգ պահելն ու սգո հանդերձանքի հինգ աստիճան.....	47
Մաս երեք - Գերեզման մաքրելը և նախնիների երկրպագությունը.....	51
<b>Գլուխ չորս</b>	
Թաղման այլընտրանքային ձևեր.....	55
Մաս մեկ - Հուղարկավորություն և դիակիզում.....	57
Մաս երկու - Թաղում ջրի մեջ և երկնքում.....	64
Մաս երեք - Թաղում ժայռերում և ծառերի վրա.....	67
<b>Գլուխ հինգ</b>	
Սգո նշակույթ.....	71
Մաս մեկ - Հրաշագործներ և կախարդություն.....	73
Մաս երկու - Գերեզմանոց և գերեզմանատուն.....	76
Մաս երեք - Ֆենշույ և տաբուներ.....	82
Մաս չորս - Մակագրություն հուշատախտակի վրա և թաղմանն անհրաժեշտ պարագաներ.....	88

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

# ԹԱՂՈՒՄ

Ալգերենից թարգմանությունը՝  
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

Չինարենից անգլերեն թարգմանությունը՝  
ՉԵՆ ՌՈՒ

Ստեփանակերտ 2017

Չրատ. խմբագիր՝ Յ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան  
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի  
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 70x108 <sup>1</sup>/<sub>16</sub>: Ծավալը՝ ?? տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Յ. Յակոբյան, 25

**«ԳԵՂԱՐՄ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010  
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012  
«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012  
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Մի.Ֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Գ.Պրիգով, Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014  
Հենրիխ Սապգիր. «Ձուգահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավվածքը»- 2015  
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը. Պատմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015  
Մա Բայ. «Սրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 1) - 2016  
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016  
Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016  
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016  
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Մեր. երջանկություն. ռեվլիեմ» - 2016  
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016  
«Դիկոռուներ. Անհայտ պոետների ապաստան» (անթոլոգիա) - 2016

Ռուս միմիմալիստներ (անթոլոգիա) - 2016

Իճիյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դատսիզմը,  
քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» - 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

(հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017

Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017

Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017

Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017





Ոգի-Նաիրի

Vogi-Nairi

Էլ. հասցե՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)

հեռ.։ +37497252323